

«Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ» առարկայի ծրագրի բացատրագիր

Ծրագրի նորացման անհրաժեշտությունը: ՀՀ հանրակրթության պետական նոր կրթակարգով և միջնակարգ կրթության պետական չափորոշչով նախատեսված 12-ամյա կրթության համակարգով հիմնական (տարրական և միջին) դպրոցում ավարտվում է հայոց լեզվի (քերականության) ուսուցումը: Դրան գուգահեռ նույն ընթացքում դպրոցականներն ուսումնասիրում են գրականությունը՝ որպես ընթերցանություն: Քանի որ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն ստանալ ցանկացող պատանիներն ու աղջիկները համապատասխան ուսումնական հաստատություն դիմում են արդեն իսկ հանրակրթական դպրոցի հիմնական փուլն ավարտելուց, իսկ մի զգալի մասն էլ միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, ուստի և նրանց հետագա կրթությունը իրականացվում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներին և կրթական ծրագրերին համապատասխան:

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառում «Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ» առարկայի գործող ծրագիրը, որն ստեղծվել է առավել քան մեկ տասնամյակ առաջ, այլև չի բավարարում ժամանակի ու հասարակության զարգացման հարահոս ընթացքին և լուրջ վերանայման կարիք ունի: Անհրաժեշտ է ու կարևոր, որ մասնագիտական ունակություններ ու կարողություններ ձեռք բերող պատանիներն ու աղջիկները կյանք մտնեն իրենց մասնագիտության շուրջ համակողմանի գիտելիքներով ու մասնագիտական անհրաժեշտ բառապաշտություն զինված:

Կրթադաստիհարակչական գործընթացում, ինչպես նկատելի է, խախտվում է դեռահասների պահանջմունքների, հետաքրքրությունների և մատուցվող գիտելիքների համարժեքությունը: Ակնհայտ է, որ ժամանակակից պահանջները և հասարակության զարգացումը ենթադրում են նոր մոտեցումներ կրթական բնագավառում, որոնք անհրաժեշտ են դիտարկել այդ բնագավառի արդիականացման համատեքստում: Այսինքն՝ արդի ցանկացած ուսումնական հաստատություն, այդ թվում՝ միջին մասնագիտական և արհեստագործական ուսումնարանները պետք է զարգանան իրականությանը, հասարակական և պետական պահանջներին համահունք: Եթե դեռահասը ստանում է այնպիսի գիտելիքներ, որոնք տարանջատ են իրականությունից և չեն ամրապնդվում իրական փորձով, ապա ակնհայտ է դառնում սովորողի անտարբերությունը կրթական գործընթացի նկատմամբ: Այս դեպքում գիտելիքի մատուցումը դառնում է սուկ մեխանիկական վարժանք, առաջացնում է դժկամություն և չի կարող ապահովել անձի ինքնազարգացումը:

Ներուսումնական և արտառուսումնական փոխներգործուն ակտիվության պայմաններում միայն կարելի է խոսել սովորողների սոցիալականացման, և որպես վերջնարդյունք՝ քաղաքացիական հասարակություն ստեղծելու մասին: Միայն ակտիվ ուսումնառության պայմաններում է հնարավոր զարգացնել դեռահասների հմտությունների և կարողությունների այն պաշարը, որը կհանգեցնի անհատի ինքնադրսնորմանը՝ որպես հասարակության լիիրավ անդամ: Կրթական բարեփոխումներն այս առումով պետք է էապես խարսխված լինեն այնպիսի կարևոր մոտեցմանը, ինչպիսին է սովորողների նկատմամբ անհատական մոտեցումը: Այն պարզ հանգամանքը, որ դեռահասները աչքի են ընկնում տարբեր նախասիրություններով և հետաքրքրությունների շրջանակներով, վկայում է նրանց տարաբնույթ ինքնադրսնորման մասին:

Ուսուցման զարգացման գործընթացը պետք է հանգեցնի նրան, որ սովորողը ինքնուրույն եզրահանգումներ անի՝ հիմք ունենալով սովորող – մանկավարժ (ենթավարպետ, դասախոս) և հակառակ փոխներգործուն կապը: Ուսուցանողը պետք է ձգտի համապատասխանեցնել դասավանդման ձևը սովորողին: Սա կարևոր հանգամանք է սովորողի անհատական զարգացման համար: Ժամանակակից կրթական բարեփոխումների առանցքը պետք է դառնա ինչ այնպիսի մոտեցումը, որը

բավարարում է անշափահասի զարգացման պահանջները: Գաղտնիք չէ, որ ավանդական դասավանդման մեթոդները և դաստիարակչական հնարները հիմնականում սպառել են իրենց, քանզի փոփոխվել է պահանջմունքների բավարարման աստիճանը: Սովորողը պետք է դիտարկվի ոչ թե սուկ գիտելիքներ մտապահող և տրամադրվող նյութը վերարտադրող սուբյեկտ, այլ նրա նկատմամբ անհրաժեշտ է կիրառել հետաքրքրությունները խթանող այնպիսի հնարներ, որոնք կապահովեն նրա գործուն դերը ուսումնառության գործընթացում: Նման մոտեցումներից առաջին հերթին պետք է նշել համագործակցային ուսուցման մեթոդները, որոնք ապահովում են փոխօգնության մքնուրոտ սովորողների միջև: Ժամանակակից մանկավարժության մեջ ուսուցման համագործակցային մոտեցումը փաստում է հենց այդ հրողություն նաևին: Այն շաղկապում է սովորելը և սովորեցնելը, որի ընթացքում ու արդյունքում սովորողը ձեռք է բերում հմտություններ և գիտելիքներ, որոնք կիրառելի են անբողջ կյանքի ընթացքում: Արդյունավետ կրթության համար կարևոր է ոչ միայն ուսուցման ձևը, այլև ձեռք բերած գիտելիքների կիրառելիությունը իրական կյանքում:

Առաջին հայացքից թվում է, թե կուտակված մանկավարժական հարուստ փորձը և նրա կիրառությունը բավական են, որպեսզի ապահովի դեռահասի մասնագիտական կրթության և դաստիարակության գործընթացի համապատասխանությունը հասարակական պահանջմունքներին: Սակայն ներկայիս իրական պատկերը հուշում է, որ միայն դասական մանկավարժական մոտեցումը քիչ է, որ եկել է լուրջ և արմատական փոփոխությունների ժամանակը: Այս առումով կրթական բարեփոխումների գործընթացը ենթադրում է ոչ միայն գիտելիքների յուրացման նոր մեթոդներ և ձևեր, այլ ևս մեկ անգամ հաստատում է, որ այն պետք է ուղղված լինի անհատի ձևավորմանը և ինքնահաստատմանը: Սա է այն ճանապարհը, որով պետք է անցնի անբողջ կրթական համակարգը, այդ թվում՝ միջին մասնագիտական և արհեստագործական կրթություն իրականացները համապատասխան կրթօջախները:

Կրթությունը կառուցողական դարձնելու պահանջը ժամանակի հրամայականն է: Իրականությունից տարանջատ կրթական միջավայրով հնարավոր չէ ուղղորդել անշափահասների սոցիալականացման գործընթացը: Սովորողը պետք է կարողանա ընկալել սոցիալական պատասխանատվություն, լինի առավել կողմնորոշվող և խելամիտ: Իսկ սա նշանակում է, որ կրթական բարեփոխումները երեխաների սոցիալական ճանաչողության առումով պետք է համահունչ լինեն հասարակական պահանջներին: Որքան բարձր լինի շրջանավարտի՝ գիտելիքները գործնականում կիրառելու փորձը, այնքան նրա համար հեշտ կլինի կողմնորոշվել հասարակության մեջ՝ իր ուրույն տեղը գտնելու համար:

«Յայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ» դասընթացի դասավանդման ընթացքում հայոց լեզվի, գրականության, խոսքի մշակույթ առարկաների ինտեգրում: Ըստ արհեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների և ծրագրերի՝ Յայաստանի Յանրապետության միջին մասնագիտական և արհեստագործական ուսումնական հաստատություններում պետք է ուսումնասիրվի «Յայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ» առարկայի 72 ժամյա դասընթաց: Առարկայի անվան մեջ արդեն իսկ կա որոշակի տարրաբաժնում՝ հայոց լեզու, խոսքի մշակույթի հիմունքներ: Բնականաբար, հայոց լեզուն շատ տարրողունակ բնագավառ է, և նրա յուրաքանչյուր բաժին հնարավորություն է ընձեռում նյութի խորացված ուսումնասիրման համար: Յնչյունաբանության, բառագիտության, ձևաբանության ու շարականության բաժիններն ունեն նյութն ավելի հետաքրքրաշարժ, գրավիչ ու գործնական դարձնելու լայն հնարավորություններ: «Խոսքի մշակույթի հիմունքներ» վերտառությունը հասցեագրված է նաև գրականությանը՝ ասմունքին, արտահայտիչ ընթերցանությանը, ստեղծագործական բնույթի աշխատանքներին: Խոսքի մշակույթի հիմնական գերխնդիրն է ապահովել հասարակության յուրաքանչյուր անդամի խոսքի համապատասխանությունը գրական լեզվի գործուն օրինաչափություններին: Խոսքի մշակույթը լեզվաբանության բնագավառներից մեկն է և նպատակ ունի առավելագույն չափով նպաստելու այդ համապատասխանությանը, որն անհրաժեշտ է թե՝ խոսողների

բանավոր ու գրավոր խոսքի բարձր մակարդակի ապահովման, թե՛ գրական լեզվի համաչափ զարգացման, կատարելագործման տեսակետից: Խոսքի մշակույթն ընդգրկում է լեզվի բոլոր բաղադրիչները բոլոր կողմերով՝ բառապաշար, քերականական կառուցվածք, ուղղախոսություն, ուղղագրություն, ոճաբանություն: Նրա հիմքում դրված են գրական լեզվի նորմաները: Լեզվական ճշտության հետ միաժամանակ, խոսքի մշակույթի պահանջներից մեկն էլ խոսքի ոճական յուրահատկության հաշվառումն է, որով ապահովում է խոսքի առավել արտահայտչականությունն ու նպատակայնությունը: Դենց այստեղ է, որ խելամիտ ուսուցանողը պետք է ուղղորդված և հմտորեն օգտագործի գեղարվեստական գրականությունը: Ծրագրի շրջանակներից դուրս պետք է մեծ տեղ տալ արտադասարանային այնպիսի միջոցառումներին, ինչպիսիք են գրական - երաժշտական վիկտորինաները, ցերեկույթ - երեկույթները, ստեղծագործական մրցույթները, գրական ալմանախների, պատի թերթերի հրատարակումները և այլն:

«Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ» առարկայի դասավանդման նպատակները: Կրթությանը ներկայացվող ժամանակակից պահանջներն ու որակը դարձնելով գերակա խնդիր՝ հարկ է «Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ» առարկայի դասավանդումը կազմակերպել այնպես, որ ապահովվի սովորողի ստացած տեսական և մասնագիտական գիտելիքների կիրառությունը գործնականում: Այս առումով սովորողների մասնագիտական կրթությանը մեծապես կարող են նպաստել գործնական, գրական - գեղարվեստական, քերականական հետաքրքրաշարժ, աշխուժացնող վարժությունները, գծապատկերները, ինչպես նաև նպատակային կազմված քրեստոմատիաները: Միևնույն ժամանակ ծրագրերում պարտադրաբար տեղ պետք է տալ այնպիսի գործնական գրությունների ուսուցմանը, որոնց առնչվում ենք կյանքում՝ ոիմումը, ինքնակենսագրությունը, տեղեկանքը, լիազորագիրը, նամակը, հեռագիրը, իրենց մասնագիտությանը վերաբերող նորարարական առաջարկներն ու գյուտերը և այլն:

Դասընթացում բացի գործնական աշխատանքներից պետք է ներառել նաև գրավոր աշխատանքներ՝ թելադրություններ, շարադրություններ, գործնական գրություններ, թեստեր, մասնագիտական կարծիքներ՝ սովորողների բանավոր և գրավոր խոսքը զարգացնելու նպատակով:

Մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունը պետք է հանդիսանա այն միջավայրը, որտեղ դեռահասը պետք է հարստացնի իր իմացական և ստեղծագործական կարողությունները: Գաղտնիք չէ, որ այս առումով գեղարվեստական գրականության հնարավորությունները գրեթե անսահման են ու տարաբնույթ. լավ ընտրված գրական նյութը կարող է տվյալ և հարակից մասնագիտությունների նկատմամբ առաջացնել բուռն հետաքրքրություն ու սեր, տալ լրացնիչ հարուստ տեղեկություններ, ընդհուած՝ մասնագիտական:

Մասնագիտական կրթության ասպարեզում հայոց լեզվի և գրականության (խոսքի մշակույթի հիմունքներ) դասավանդումը ունի մի կարևոր և սկզբունքային նպատակ՝ նպաստել սովորողի՝ որակյալ, գրագետ ու բանիմաց մասնագետ դառնալուն:

Գիտելիքները գործնականում ամրապնդելու մոտեցումը ենթադրում է թե՝ միջանձնային, թե՝ ներանձնային հարաբերություններ, որոնց արդյունքում կապահովվի սովորողի ինքնազարգացումը և ինքնահաստատումը: Այն պարզ ճշմարտությունը, թե նի խելքը լավ է, երկուսը՝ ավելի լավ, խոսում է հօգուտ համագործակցային ուսուցման, որն արդի ժամանակաշրջանում լայն տարածում է ստացել աշխարհում: Առանձնապես «Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների» առարկայի դասավանդման ընթացքում ուսուցման և դաստիարակության իրականացումը արդի կրթական համակարգում պետք է դիտարկել որպես մի գործընթաց, որի արդյունքում սովորողը ոչ միայն տեսական գիտելիքներ է ծեռք բերում, այլև սովորում է ապրել:

Միջին մասնագիտական և արհեստագործական ուսումնական հաստատություններում «Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ» առարկայի ուսուցումն առանձնահատուկ տեղ ունի՝ որպես աշխարհաճանաչողության, անձի զարգացման, նրա նտավոր առաջընթացի, տրամաբանական և պատկերավոր

մտածողության, հոգելեզվամտածողական զարգացման ու կատարելագործման հիմնական միջոց, ինչպես նաև մնացած բոլոր առարկաների ընկալման, յուրացման և արժեքնորման նախադրյալ: «Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ» առարկայի ուսուցումը նպատակ ունի նպաստել սովորողների մտքերի, զգացմունքների ու ապրումների առավել հստակ ու ճշգրիտ արտահայտմանը, տվյալ իրադրության պահանջով և բազմազան ոճերի կիրառությամբ բանավոր ու գրավոր խոսք կազմելու հմտության զարգացմանը, ստեղծագործական կարողությունների դրսնորմանն ու դրանց հետագա մշակմանը: Իսկ այս ամենը հնարավոր է իրականացնել ուսումնական պլանով նախատեսված առարկաների, ըստ հնարավորի, ինտեգրմանը:

«Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ» առարկայի ուսուցման նպատակը պետք է լինի սովորողի մեջ մշակել և կատարելագործել ժամանակակից գրական հայերենի պահանջներին համապատասխան խոսք կառուցելու, իր խոսքը վերահսկելու, բարբառային, ժարգոնային արտահայտություններից մաքրելու, մայրենի լեզվով տարբեր բնույթի տեքստեր և գրականություն կարդալու, կարդացած գրական երկը ինքնուրույնաբար մեկնաբանելու կարողություններ: Շեշտը պետք է դնել նաև բառարաններից, հանրագիտարաններից, տեղեկատու գրականությունից, տպագիր և էլեկտրոնային աղբյուրներից օգտվելու, գեղարվեստական և գիտահանրամատչելի գրականություն կարդալու, գործնական բնույթի զանազան փաստաթղթեր կազմելու կարողությունների, ինչպես նաև տարբեր իրադրություններում համապատասխան խոսքային վարդագիծ դրսնորելու ունակության զարգացման վրա: Միջին մասնագիտական և արհեստագործական ուսումնական հաստատություններում «Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ» առարկայի դասավանդումն ունի հետևյալ նպատակները.

➤ սովորողների բառապաշտի հարատացում, որը նպաստում է աշխարհայացքի և ճանաչողության ընդլայնմանը,

➤ ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողությունների մշակում, լեզվաբերականական գիտելիքները խոսքի կառուցման ընթացքում կիրառելու հմտության կատարելագործում,

➤ գրական և մասնագիտական տեքստի վերլուծության և մեկնաբանության միջոցով գրվածքի լեզվաոճական առանձնահատկությունները բացահայտելու կարողության կատարելագործում,

➤ շարադրությունների, փոխադրությունների, ռեֆերատների, գեկուցումների, վերլուծական - դատողական գրավոր խոսքի, կարծիքի և այլ ստեղծագործական աշխատանքների միջոցով կապակցված շարադրանք ստեղծելու կարողությունների մշակում,

➤ տարբեր բնույթի (գեղարվեստական, արձակ և չափածո, իրապարակախոսական, գիտական և այլն) տեքստերի լեզվաոճական վերլուծության միջոցով սովորողների լեզվական ճաշակի և խոսքի մշակույթի զարգացում,

➤ տարբեր տիպի բառարաններից, հանրագիտարաններից, տեղեկատու և օժանդակ, տպագիր և էլեկտրոնային ձեռնարկներից օգտվելու և ինքնուրույն կերպով գիտելիքներ ձեռք բերելու հմտությունների մշակում,

➤ տարբեր բնույթի գեղարվեստական (արձակ և չափածո) ստեղծագործությունների ուսուցման ընթացքում սովորողների արտահայտիչ ընթերցանության, ասմունքի, ճարտասանական կարողությունների զարգացում:

«Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ» առարկայի դասավանդման նպատակների իրականացման ուղիները: «Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ» առարկայի դասավանդումը պետք է կազմակերպել ուսուցման ժամանակակից համագործակցային (խմբային, զույգերով, անհատական) մեթոդներով, եղանակներով, հնարներով, որոնք հնարավորություն կտան ապահովել սովորողի հետազոտական աշխատանքի մասնագիտական - բովանդակային և լեզվական – խոսքային կողմերին ներկայացվող պահանջները: Այս առումով քերականական նյութի ուսուցման կամ վարժությունների համար նախատեսված տեքստերը պետք է ընտրել թեմատիկ և

լեզվաոճական բազմազանության սկզբունքով, իսկ առաջադրանքներն ու վարժությունները պետք է ուղղվեն ինքնուրույն աշխատելու հմտությունների ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը: Միաժամանակ դրանք պետք է պարունակեն աշխարհաճանաչողական, հասարակագիտական, բնագիտական, մասնագիտական գիտելիքներ և նպաստեն սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը: Մասնավորապես «Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ» առարկայի դասընթացը նախատեսում է սովորողներին գիտելիքներ հաղորդել մայրենի լեզվի դերի, նրա զանազան գործառույթների, նրա պատմական զարգացման փուլերի, գրական և բարբառային տարրերակների վերաբերյալ:

Ուսումնական լրացուցիչ նյութերի ու բնագրերի հատուկ ընտրությամբ պետք է շեշտվի մայրենի լեզվի նշանակությունը ազգապահպանության գործում, հայոց լեզուն բնորոշվի որպես հայ ժողովրդի հարատևման, նրա ազգային ինքնության պահպանման գրավական և ազգային մշակույթի բարձրագույն ձև: Պետք է գաղափար տրվի անհատի և հասարակության կյանքում ինքնաճանաշման և աշխարհընկալման մեջ մայրենի լեզվի նշանակության մասին: Դասընթացն ուսումնասիրելիս որոշակի ժամաքանակ է հատկացվում կապակցված խոսքի, ոճագիտության և գործնական գրությունների, տարրեր բնույթի շարադրանքների ուսուցմանը: Նախատեսվում է լեզվական յուրաքանչյուր միավորի ուսումնասիրության ժամանակ ուշադրություն դարձնել նրա գործառական և ոճական արժեքին, համապատասխան վարժությունների միջոցով ամրապնդել դրանց գործնական կիրառությունը խոսքում: Ուղղագրության ուսուցումը պետք է կատարվի թե՝ օրինակելի, թե՝ սովորողի կազմած տեքստերի հիման վրա, որոնք բացի տվյալ ուղղագրական կանոնին համապատասխան բառերի քննություն-վերլուծությունից, դիտարկվելու են նաև քերականական այլ իրողությունների միասնականության մեջ: Այսինքն՝ ամեն մի քերականական իրողության ուսուցում պետք է ամրապնդվի կապակցված ամբողջական խոսքի՝ տեքստի կառուցման և վերլուծության ձևով: Նույն սկզբունքով բառագիտության ուսուցման ժամանակ ամիրաթեշտ ուշադրություն պետք է դարձվի հոմանիշների, հականիշների, համանունների, հարանունների, դարձվածքների, մասնագիտական բառերի և տերմինների (եզրաբառերի) գործառական ու ոճական առանձնահատկություններին, խոսքի պատկերավորման մեջ և ոճական տարրեր կառուցներում նրանց ունեցած դերին:

«Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ» առարկայի ծրագիր: Առարկայի ծրագիրը ներկայացվում է երեք բաժիններով՝ ա) ուսուցանվող նյութը, բ) ուսուցման նպատակը, գ) ուսումնական գործունեությունը:

«Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ» առարկայի ուսուցման ընթացքում հայոց լեզվի և գրականության ինտեգրումը, ի թիվս այլ միջոցների, իրագործվում է կապակցված խոսքի զարգացմանը վերաբերող ուսումնական գործունեության ձևերով, որոնց մեջ ներառված են նաև գրական երկերի լեզվաօճական ուսումնասիրության, այդ երկերի և դրանց հեղինակների մասին տեղեկատվության որոնման, հետազոտական և ստեղծագործական աշխատանքներ կատարելու առաջադրանքների միջոցով:

Ծրագրի այս կառուցվածքն ընտրված է որպես լրացուցիչ մեթոդական օգնություն ուսուցիչներին, թեև չի փոխարինում առանձին մեթոդական ուղեցույցներին ու ուսումնաօժանդակ ձեռնարկներին, որոնք պետք է կազմվեն հետազայում՝ ծրագրի և չափորոշիչների հիման վրա:

Ծրագրում տրված ժամաքանակը նշվում է ընդհանուր կերպով, մեծ խմբավորումներով, ունի կողմորոշիչ դեր՝ ուսուցիչներին հնարավորություն տալով անիրաժեշտության դեպքում փոփոխություններ կատարելու:

Հայոց լեզու և խոսքի մշակույթի հիմունքներ առարկայի ծրագիր (72 ժամ)

N	Ուսուցանվող նյութը	Ուսուցման նպատակը	Գործունեության տեսակները
1.	Հայոց լեզվի ծագումը: Մեսրոպ Մաշտոցն ու հայոց այբուբենը, լեզվի զարգացման փուլերը: Ինտեգրված ուսուցման համար օգտագործել Պ. Սևակի «Եվ այր մի Մաշտոց անուն...» պոեմը և Վ. Սանթրյանի «Մաշտոցի որդիները» Էսեների ժողովածուն: 4ժամ	Գիտակցել Մեսրոպ Մաշտոցի գործի մեջությունը, ընթանել գրերի գյուտի պատմաքաղաքական և մշակութային դերը:	Տեղեկատվական տարբեր աղբյուրներից գրերի գյուտին նվիրված նյութերի (հետաքրքիր տեղեկություններ մինչմաշտոցյան գրերի գյուտին և այբուբենի քրիստոնեական կրոնի հետ ունեցած աղերսների մասին որոնում- ուսումնասիրություն) Սովորողների թիմային առաջադիմության մեթոդ
2.	ճարտասանություն կամ պերճախոսություն, հրետորություն Րաֆֆու «Պարույր Հայկազն» վեպը, Վանիկ Սանթրյանի «Մաշտոցի որդիները» էսեների ժողովածուից հայ նշանավոր ճարտասանին նվիրված հատվածը 4ժամ	Գաղափար ունենալ գեղեցիկ, պատկերավոր ու արտահայտիչ խոսելու արվեստի և գիտության, նրա կանոնների և սկզբունքների մասին: Ինանալ հրետորական արվեստի ծագման,	Տարբեր ժանրերի ստեղծագործությունների (հատվածների) արտահայտիչ ընթերցանության արդյունակության և ասմունք: Դասախոսության մեթոդ
3.	Հայերենի ուղղագրությունն ու ուղղախոսությունը: Հենրիկ Յարությունյան «Հետաքրքրաշարժ հայոց լեզու» և գեղարվեստական գրականություն, որն առնչվում է տվյալ մասնագիտությանը 10ժամ	Տիրապետել ուղղագրական արժեք ունեցող բառերի ծիշտ գրությանն ու արտասանությանը, բառերի ծիշտ շեշտադրությունն ու նախադասությունների հնչերանգը: Անսխալ գրել տարբեր բնույթի տեքստեր:	Ուսուցումը կազմակերպել հիմնականում գործնական՝ գծակարգերի և այլուսակների կիրառմամբ Խճանկար (Զիգոս) Քառարաժան
4.	Հոմանիշներ և հականիշներ, համանուններ, հարանուններ «Հայկական ավանդապատումներ» <ul style="list-style-type: none"> ➤ Հայկ և Բել ➤ Տիգրան և Աժդահակ ➤ Արա Գեղեցիկ և Շամիրամ «Հին հունական լեգենդներ ու առասպելներ» <ul style="list-style-type: none"> ➤ Հերակլես ➤ Արգոնավորդներ 4ժամ	Ընկալել հոմանիշների ու հականիշների հակադարձությունը, տարբերել նրբերանգները, ոճական արժեքները:	Վարժություններ տրված ընտրովի բառերի հոմանիշները և հականիշները կազմելու վերաբերյալ Ոտտեր «Հին հայկական առասպելներ և ավանդություններ» - պատկերազարդ ալբոնի ուսումնասիրում Շրջագայություն պատկերասրահում

5.	<p>Բառապաշարի տարբեր շերտերը (համագործածական, գոքային, առօրյա-խոսակցական)</p> <p>Ա. Աբրահամյան «Բառ և խոսք»</p> <p>Ն. Մկրտչյան «Բառերի կենսագրությունից»</p> <p>Կիմ Բակչի «Քարե սիմֆոնիա»</p> <p>Վարդգես Պետրոսյան «Դայլական էսքիզներ»</p> <p>6Ժամ</p>	<p>Կատարել բառերի ընտրություն ըստ խոսքային իրադրության (առօրյա -կենցաղային, ուսումնական միջավայր, հասարակական-մշակութային վայրեր):</p>	<p>Տեքստային աշխատանք խմբային հետազոտության մեթոդ</p>
6.	<p>Տվյալ մասնագիտության հետ կապված փոխառություններ, օտարաբանություններ, նորաբանություններ և հնաբանություններ</p> <p>Ակ. Բակունց «Բրուտի տղան», «Հովնաբան Մարչ»</p> <p>Ղ. Աղայան «Ճորք Անգեղ», Ճեփեստոսի մասին առասպելը՝</p> <p>Ա. Կումի «Դին հունական լեգենդներ և առասպելներ» գոքից</p> <p>Գ. Նիկոլաևա «ճակատամարտ ճանապարհին» վեպից հատվածներ</p> <p>8Ժամ</p>	<p>Դարստացնել բառապաշարը, գաղափար ունենալ տարբեր տիպի բառարանների մասին, ամրապնդել բառարանից օգտվելու կարողությունը:</p>	<p>Տրված ընտրովի գեղարվեստական գրականություննից դուրս գրել հանապատասխան բառաշարքեր և դրանք օգտագործել գրավոր և բանավոր խոսքում, բառարանների օգնությամբ որոշել տեքստում հանդիպող բնիկ և փոխառյալ բառերը, կազմել մասնագիտական տերմինների (եզրաբառերի) բառացանկեր</p> <p>Բառի տոհնածառը</p>
7.	<p>ճիշտ խոսենք և գրենք թերասությունների և թյորուասացություններ (ուղղագրական, հոլովական, խնդրառական, խոնարհման և այլ կարգի սխալներ)</p> <p>Յ. Պարոնյան «Ազգային ջոջեր»</p> <p>4Ժամ</p>	<p>Տիրապետել ժամանակակից գրական լեզվին,</p> <p>կարողանալ խոսել հոլովական, խնդրառական խոնարհման սխալներից գերծ լեզվով:</p>	<p>Յոլովական գուգածնությունների, բայական խոնարհումների և քերականական այլ իրողությունների ուսուցման միջոցով բանավոր և գրավոր խոսքի ընթացքում անձշտությունների և խոսքի վթարմերի շուկանքում ուղղությամբ տարվող աշխատանքներ</p> <p>Փաստերի բուրգ</p>

8.	Հայերենի կետադրությունը: Գեղարվեստական գրականության ընտրովի հատվածներ Համո Սահյանի «Հայաստանը երգերի մեջ», Պ. Սևակի «Մարդը ափի մեջ», Ակ. Բակունցի «Մթնաձոր» ժողովածուներից 6Ժամ	Բանավոր խոսքում՝ հնչերանգի, տրամաբանական շեշտի գրական արտասանության, գրավոր խոսքում անսխալ կետադրության կարողությունների ձեռք բերում:	Գործնական վարժություններ տրոհման, առօգանության, բացահայտման կետադրության շուրջ Հասկացության սահմանման քարտեզ
9.	Ոճարանություն, ոճերի տեսակները՝ վարչական, գեղարվեստական, հրապարակախոսական, առօրյա - խոսակցական, անհատական: Մասնագիտական որևէ դասագիրք, ՀՀ Սահմանադրություն, Ղ. Աղայանի «Անահիտ» հեքիաթից արհեստներին առնչվող ընտրովի հատվածներ՝ 8Ժամ	Խորացնել և ընդհանրացնել հայերենի ոճերի իմացությունը, կարողանալ գործնականում օգտվել դրանցից՝ ըստ խոսքային հրադրություն և գրվածքի նպատակի:	Միևնույն թեման շարադրել տարբեր ոճերով՝ հարազատ մնալով տվյալ ոճի բառապաշտին և պահպանելով այդ ոճի առանձնահատկությունները Զուգադրության առյուսակ
10.	Գործնական գրություններ՝ նամակ,լիազորագիր,դիմում, ինքնակենսագրություն, բացատրագիր, բնութագիր, տեղեկանք, քաղվածք արձանագրություն և այլն: Բնագրային և փաստավավերագրական փաստաթթեր մեջերի կյանքից, հուշեր (Ռ. Զարյան «Հուշապատում», Վ. Տերյան, Ռ. Վարուժան «Նամականի») Գեղարվեստական գրականության ընտրովի հատվածներ՝ Նար - Դու «Անա Սարոյան» 10Ժամ	Իմանալ գործնական գրությունների հիմնական տեսակները, կարողանալ անհրաժեշտության դեպքում կազմել այդպիսի գրություններ:	Կազմել տարբեր տեսակի (պաշտոնական նամակ, դիմում, լիազորագիր, ինքնակենսագրություն, բացատրագիր, բնութագիր, տեղեկանք, քաղվածք արձանագրություն) գործնական գրություններ Ֆրայերի մոդել

«Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ» առարկայի դասավանդման մեթոդական ուղեցույց –ձեռնարկ

Երկու տող

Հեղինակները ներկա ծրագիրը փորձել են կազմել այնպես, որ հնարավորություն տան ընդգրկել կյանքի տարբեր սոցիալական աստիճանների վրա գտնվող և տարբեր արժեքային համակարգեր ուժնեցող մարդկանց տեսակետները: Այնպիսի միջոցներ, ինչպիսիք են գործերը, ծրագրված դասավանդումը, հեռուստացույցը կամ համակարգիչը, այսօր լայն տարածում են գտել: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այս

միջոցները դեռահաս ուսանողների ինքնուսուցման գործում մեծ դեր են խաղում, ուստի և ներկա ծրագրում գործնական վարժությունները և «ինչպես անել» տեղեկատվությունն ուսումնառության հիմնական շարժառիթներից են: Դայտնի է, որ ժամանակակից սովորողները յուրաքանչյուր աշխատանքի, այդ թվում նաև՝ ուսուցման արդյունավետությանը մեծ ուշադրություն դարձնող անհատներ են: Սոցիոլոգիական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սովորողը միշտ կատարում է հետևյալ հարցադրումը՝ «Ո՞րն է սովորելու ամենաէժան, ամենահեշտ, ամենաարագ ճանապարհը»:

Այսօր կրթական համակարգի բարեփոխումը ոչ միայն մասնագետների, այլև հասարակության ուշադրության կենտրոնում է: Այդ բարեփոխման հիմնախնդիրներին ուղղված բազմաթիվ գրքերի, հետազոտությունների առատության մեջ, ինչպես միշտ, մի կողմից կարևորվում են ուսումնական ծրագրերը, մյուս կողմից՝ ուսուցման նոր առաջադիմական մեթոդներն ու մոտեցումները: Կրթական բարեփոխումների այս համատեքստում նմանատիպ ձեռնարկներում քննվում են նաև միջին մասնագիտական և արհեստագործական ուսումնական հաստատությունների սովորողների բարոյահոգեբանական մթնոլորտի, ծնողների, հասարակության հետ համագործակցության այլ հարցեր: Այդ աշխատությունների հեղինակներից քերն են, սակայն, իրենց ուսումնասիրությունները հիմնում դասախոսի, վարպետի, ուսուցչի մանկավարժական գործընթացի շարժիչ ուժի, կրթօջախի հաջողության կարևոր տարրի վրա: Կրթական բարեփոխումներ իրականոցնող օղակները իրավացիորեն ուշադրության կենտրոնում են պահում սովորողների կարիքները՝ կոչ անելով ստեղծել «սովորողակենտրոն» ուսումնական հաստատություններ: Սակայն երբեք չպետք է մոռանալ կրթօջախում որոշիչ դեր և ազդեցություն ունեցող ուսուցչի աշխատանքը:

Ծրագրի թեմաների դասավանդման ուղեցույց

Ծրագրը արդյունավետ և նպատակային իրականացնելու համար ստորև տրվում են յուրաքանչյուր թեմայի մատուցման մերողները, դրանց նկարագրությունները, հնարիներն ու եղանակները, դրանց ընթացքում տրվելիք լրացուցիչ բնագրեր, գծակարգեր, աղյուսակներ:

Թեմա 1

Յայոց լեզվի ծագումը: Մեսրոպ Մաշտոցն ու հայոց այբուբենը, լեզվի զարգացման փուլերը (4 ժամ)

Թեմայի ուսուցման նպատակը – Թեմայի ուսուցման ավարտից հետո աշակերտները որոշակի գիտելիքներ պետք է ստանան նախամաշտոցյան գրերի գոյության, Մաշտոցի կատարած վիթխարի գիտական – հետազոտական աշխատանքի, հայերենի հնչյունակազմին լավագույնս տիրապետման և դրանց համապատասխան հայոց գրերի ստեղծման մասին, միաժամանակ գործնական գիտելիքներ ստանան հայոց տառերի թվանշանյին գործածության մասին: Մակերեսային գիտելիքներ պետք է ունենան նաև հայերենի գրատեսակների (Երկարագիր, շղագիր և այլն) մասին: Մանրամասն գիտական հենքով գիտելիքներ պիտի ունենան հայերենի ձայնավոր և բաղաձայն հնչյունակազմի, բաղաձայնույթի և առձայնույթի մասին, կարողանան բերել համապատասխան օրինակներ:

Կահավորման անհրաժեշտ միջոցներ – Սույն թեման ուսումնասիրելու ընթացքում ուսուցիչը ցուցադրման համար պետք է ունենա Ստեփանոս Ներսիսյանցի «Մեսրոպ Մաշտոց», «Սահակ Պարթև» և Հրազյա Ռուիսկյանի «Վրանշապուհ» դիմանկարների, Գր. Խանջյանի «Յայոց գիրը» ոստայնագորգի վերատպությունները: Ուսուցչի սեղանին պետք է լինեն Հրազյա Աճառյանի «Յայոց գիրը», Էդ. Աղայանի «Մեսրոպ Մաշտոց» աշխատությունները, Դ. Ղեմիրճյանի «Մեսրոպ Մաշտոց» անավարտ վեաի

հրատարակությունը, Պ. Սևակի «Եվ այր մի Մաշտոց անուն...» պոեմը, Վ. Սանթրյանի «Մաշտոցի որդիները» էսեների ժողովածուն, Ն. Վիրաբյանի «Հայ ժողովոդի ծագման աստվածաշնչան իմբքերն ու Մեսրոպ Մաշտոցը» գրքույկը, Էջմիածնում պահպանվող Հայոց այբուբենի ադամանդակուռ, ոսկեհուռ տառերի նկարը, Արագածի փեշին տեղադրված Հայոց տառերի արձանախմբի լուսանկարը և Ս. Արուտչյանի «Հայոց գիրը»՝ մեր այբուբենի պատկերագարդ տառատեսակներին նվիրված գիրք - ալբոմը և լրացուցիչ այլ նյութեր:

Դասավանդման ընթացքը- Կարելի է օգտագործել դասի մուտքի գրույցի, դաս - դասախոսության եղանակները, իսկ ընթացքում գործադրել համագործակցային ուսուցման ներկայացված մեթոդներից որևէ մեկը՝ Փոխներգործուն ընթերցանության ուղեցույց կամ սովորողների թիմային առաջադիմություն: Թեճայի հաղորդման սկզբուն ուսուցիչը մուտքի գրույցի միջոցով գաղափար է տալիս նախամաշտոցյան գրերի գոյության մասին, ընդգծում, թե Մաշտոցը Վռամշապուհ արքայի և Սահակ Պարթև կաթողիկոսի հովանավորությամբ ինչ տքնանքով է ստեղծում սեփական ժողովոդի գոյը պահպանելու մեծագույն կրվանը՝ հայոց այբուբենը: Ծեշտում է այբուբենի դերը մեր ժողովոդի ինքնության պահպանության, հոգևոր և տարաբնույթ արվեստների ստեղծման գործում:

Փոխներգործուն ընթերցանության ուղեցույց

Փոխներգործուն ընթերցանության ուղեցույցը հիանալի մեթոդ է, որն օգնում է սովորողներին՝ տեքստային նյութերի ընթերցանությունն առավել արդյունավետ դարձնել: Այն ուսումնառության ուղեցույցների տարրերակներից մեկն է. ընթերցվող նյութի գլխավոր, եական գաղափարները պարզելու նպատակով սովորողները ներգրավում են փոքր խմբով կատարվող աշխատանքի մեջ:

Այս մեթոդի կիրառումը ներառում է հետևյալ քայլերը.

• Սովորողներին համառոտ ներկայացրեք ընթերցանության համար նախատեսված առաջադրանքը՝ պարզելու յուրացվելիք կարևոր տեղեկատվությունը և հայտնաբերելու հնարավոր այն որոգայթները, որոնք կարող են խոչընդոտել գաղափարի ըմբռնմանը: Հատկապես ուշադրություն դարձրեք այն դժվարություններին, որոնց կիանդիպեն սովորողները: Ուշադրություն դարձրեք նաև տեքստի աչքի ընկնող առանձնահատկություններին, որոնք կարող են վրիապել նրանց աչքից, օրինակ՝ նկարներ, աղյուսակներ կամ գծագրեր: Պարզեք ցանկացած անհամապատասխանություն, որ կարող է ծագել սովորողների ունեցած նախնական գիտելիքների և տեքստի միջեր: Գուցե հեղինակը ենթադրել է այնպիսի գիտելիքների առկայություն, որոնք սովորողներից շատերը դեռ չունեն: Արդյո՞ք հեղինակը մտքերն ու բառերը ներկայացնում է առանց բավարար բացատրությունների և օրինակների, կամ այնպիսի լեզվով ու ոճով է գրում, որ կարող է դժվար ընկալելի լինել ոնանց համար:

• Սովորողների համար գործուն ընթերցանության ուղեցույց կազմեք՝ զույգերով կամ խմբով լրացնելու համար: Օգնեք կողմնորոշվել, թե կարդալու ընթացքում ինչի վրա կենտրոնացնեն ուշադրությունը, որ կարողանան յուրացնել նյութի խրթին թվացող հատվածները: Այնպիսի հարցեր առաջադրեք, որոնք կդրդեն սովորողներին՝ պետք հանգամանորեն մտածել նյութի մասին, իմաստային կապեր հաստատել և եզրակացնելուներ անել: Սա նաև կօգնի խնդիրները համագործակցությամբ լուծելու փորձ անել և համոզվել, որ գտել են ճիշտ պատասխանները:

• Ընթերցանության համար նախատեսված նյութը երեք մասի բաժանեք: Մի մասը սովորողներից մեկը պետք է բարձրաձայն ընթերցի խմբի համար: Երկրորդ մասը յուրաքանչյուրը պետք է մտքում լուր ընթերցի: Իսկ երրորդ՝ պակաս կարևոր մասը, կարելի է պարզապես աչքի անցկացնել: Ուղեցույցն օգտագործեք լրացուցիչ նախնական տեղեկատվություն ապահովելու համար կամ դրանով խրախուսեք սովորողներին՝ մտագրոհի միջոցով բացահայտելու այն, ինչ արդեն գիտեն տվյալ թեմայի մասին:

• Յուրաքանչյուր խմբի հանձրարարեք իրենց արդեն լրացված ուղեցույցները որպես ուրվագիծ օգտագործել՝ ամբողջ դասարանին իրենց քննարկման արդյունքներին հաղորդակից դարձնելու նպատակով:

Առավելությունները

• Սովորողների համար հնարավորություն է ստեղծվում փորձարկել գրավոր նյութերին զանազան նպատակներով և տարբեր արագություններով ծանոթանալու հնարները՝ ուշադիր լսել տեղեկատվության մի մասը, ավելի ուշադիր կարդալ մեկ ուրիշ հատվածը, իսկ ինչ-որ բան էլ թռուցիկ աչքի անցկացնել:

• Սովորողներն իրենց գործընկերների հետ կարող են պարզել տեքստի անհասկանալի մասերը կամ քննարկել նյութը:

• Փոխադրուն ընթերցանության ուղեցույցի մեթոդը առավել արդյունավետ է լինում ընթերցանության դժվարություններ ունեցող սովորողների համար:

Թեմա 2 ճարտասանություն կամ պերճախոսություն, հռետորություն (4 ժամ)

Թեմայի ուսուցման նպատակը – Սովորողները հստակ պատկերացում պետք է կազմեն և ձեռք բերեն խոր համոզնունք, որ յուրաքանչյուր խոսք, կախված այն բանից, թե ինչ կերպ է ներկայացվում ունկնդիրին, տարբեր արժեք և ազդեցության տարբեր չափ կարող է ունենալ: Պիտի հասկանան, որ իրենք ևս պետք է տիրապետեն խոսքի արտահայտչականության տարբեր ձևերին, միջոցներին ու հնարներին, կարողանան պատշաճ մակարդակով ասմունքել՝ ներկայացնելով արձակ կամ չափածո ստեղծագործություններ:

Կահավորման անհրաժեշտ միջոցներ – Ցուցադրել Ռաֆֆու «Պարույր Ջայկազն» վեպը, Վանիկ Սանթրյանի «Մաշտոցի որդիները» էստեմերի ժողովածուից հայ նշանավոր ճարտասանին նվիրված հատվածը, Ջայկական հանրագիտարանի «ճարտասանություն» բառ – հոդվածը, նշանավոր ճարտասանների դիմանկարներ:

Ունենալ հայ ժամանակակից լավագույն խոսքի վարպետների՝ Ռ. Չարյան, Գ. Աբաջյան, Լ. Սամվելյան և այլ հրապարակախոսների ելույթների ձայնագրություններ, տեսաերիզներ, ասմունքողների կատարումներ:

Դասավանդման ընթացքը- Մուտքի գրույցի միջոցով ուսուցիչը գաղափար է տալիս իին աշխարհի նշանավոր ճարտասաններ Դեմոսթենեսի, Սոլկրատեսի, Ցիցերոնի, հայագի Պարույր Ջայկազնի և նշանավոր այլ հրապարակախոսների մասին: Նշում է, թե որքան որոշիչ կարող է լինել դիպուկ և արտահայտիչ խոսքը, մարդկային հասարակության, զանգվածների առաջնորդման և դեկավարման, հեղափոխական և այլ մոլումների դրդման գործում: Ապա, շարունակելով խոսքը, նշում է, որ հռետորությունը կամ ճարտասանությունը գիտություն է իմաստալից, գեղեցիկ, համոզիչ խոսելու արվեստի և ավելի լայն իմաստով, ընդհանրապես գեղարվեստական արձակի մասին: Ծագել է հին Հունաստանում՝ մ. թ. ա. 5-րդ դարում: Գիտական համակարգի է վերածվել 3-2-րդ դարերում, Հռոմում՝ 1-ին դարում: Առաջին տեսաբանը Արիստոտելն է, որը գրել է «ճարտասանություն» աշխատությունը: Հռետորությունը Ջայաստան մուտք է գործել մ. թ. ա. առաջին դարում և զարգացում ապրել Տիգրան Մեծի և Արտավազդ Բ-ի օրոք: Ջատկապես նշանակալից է եղել 5-րդ դարում: Նշանավոր ճարտարախոս – հռետորներ էին Մեսրոպ Մաշտոցը, Մովսես Խորենացին, Եղիշեն, Եզնիկ Կողբացին: Ուշագրավ Ջավիան Մայրավանեցու «Խրատ վարուց» ճառերի ժողովածուն. հռետորական ոճն զգացվում է նաև Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» ստեղծագործության մեջ: Թե՛ 5-րդ դարում, թե՛ հետագայում Գլածորի և Տաթևի համալսարաններում

դասավանդվել է ճարտասանություն, որոնց կարկառուն ներկայացուցիչներն էին Գրիգոր Տաթևացին, Եսայի Նչեցին, Հովհան Որոտնեցին: Յօնուրություն զարգացմանը մեծապես նպաստել են Մխիթարյան միաբանները:

Ճարունակելով խոսքը՝ ուսուցիչը նասնավորապես համեմատաբար մանրանասն գաղափար է տալիս *Պարույր Շայկազնի*՝ հայազգի հրետորի և փիլիսոփայի մասին, որը որպես Աքենքի ճարտասանական դպրոցի ղեկավար հանդես է եկել 276-368թթ: Սերել է կեսարացի (Կապադովկիա) հայ տոհմիկ ընտանիքից: Կրթությունն ստացել է Աքենքում և գրել ու ուսուցանել է հունարեն: Նրա մասին տեղեկություններ է հաղորդում կենսագիր Եվնապիոսը: Նա հաղորդում է, որ *Պարույրը* ունեցել է բազմաթիվ աշակերտներ, որոնց թվում՝ Հռոմի ապագա կայսր Հուլիանոսը, Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Նազիազանցին և ուրիշներ: Աշակերտների մեջ մեծ թիվ են կազմել կապադովկիացի հայերը: Զգերազանցված հրետորի, ճարտասունության ու փիլիսոփայության ուսուցչի նրա տաղանդը ճանաչում է գտել նաև Հռոմում, ուր նա հրավիրվել է որպես թագաժառանգի դաստիարակ: Իր հսկ կենդանության օրոք Հռոմի հրապարակներից մեկում կանգնեցվել է *Պարույր Շայկազնի* արձանը՝ «Աշխարհի թագուիի Հռոմը՝ ճարտարախոսության թագավորին» մակագրությամբ: *Պարույր Շայկազնը* իր մանկավարժական գործունեությամբ և աշխատություններով եռանդուն կերպով տարածել է անտիկ հեթանոսության մշակույթի ու գիտության ավանդույթները:

Օգտադործել ավանդական դաս - դասախոսության մեթոդը:

Թեմա 3 Հայերենի ուղղագրությունն ու ուղղախոսությունը (10 ժամ)

Թեմայի ուսուցման նպատակը – Սովորողները պետք է խորացնեն իրենց ուղղագրական գիտելիքներն և ուղղախոսական հմտությունները, կարողանան ճիշտ խոսել և գրել՝ գրավոր և բանավոր խոսքում սխալներ, վրիպումներ և խոսքային վթարներ թույլ չտալով:

Կահավորման անհրաժեշտ միջոցներ – Ցուցադրել հայոց այբուբենին նվիրված տարրեր տարիների հրատարակած գեղարվեստական և տպագիր տառատեսակների ալբոմներ, Գր. Խանջյանի «Հայոց այբուբենը» նկարի վերատպությունը, ուղղախոսական և ուղղագրական գծակարգեր, աղյուսակներ, վայելչագրության տետրեր, ինչպես նաև լրացուցիչ ուսումնաօժանդակ ձեռնարկներ:

Դասավանդման ընթացքը- Գործնական տարաբնույթ վարժությունների, թեստերի միջոցով, խճանկար և քառարաժան մեթոդների կիրառմամբ խորացնել սովորողների ունակություններն ու կարողությունները՝ միաժամանակ ուշադրություն դարձնելով տվյալ բնագրային հատվածի գեղարվեստական արժանիքներին, խոսքի արտահայտչական միջոցներին: Օգտագործել խճանկար, քառարաժան մեթոդները:

Խճանկար - առաջադրանք

Խճանկար - առաջադրանքը լսարանում կարող է կիրառվել տարրեր ձեւերով, օրինակ.

- Խճանկար - առաջադրանքի միջոցով սովորողները կարող են դասագրքի տրված գլխից տարրեր հատվածներ կարդալ, նույն թեմայի վերաբերյալ տարրեր կարծ պատմվածքներ կամ նույն հեղինակից այլ պատմվածքներ:

- Նոր հանձնարարված թեմայի սահմաններում կարող են հետազոտել ուշադրության արժանի տարրեր ոլորտներ:

- Սովորողները կարող են խճանկար - առաջադրանք կիրառել անկախ հետազոտությունների նախագծեր իրագործելու համար: Յուրաքանչյուր խումբ

պատասխանատվություն է կրում ընդհանուր թեմայի սահմաններում մի կոնկրետ ոլորտի ուսումնասիրության համար:

Այս մեթոդի կիրառումը ներառում է հետևյալ քայլերը.

• Պարզեք տրված դասի մեջ կարևոր թեմաների առնչվող նյութերը: Յաշվի առեք առաջադրանքը կատարող սովորողների գիտելիքները և, եթե անհրաժեշտ է, ընտրեք տարբեր բարդության և հազեցվածության հատվածներ:

• Սովորողները 4-6 հոգանոց համագործակցային խմբեր են կազմում՝ (խմբի անդամների թիվը կախված է ընտրված տեքստերի քանակից): Յուրաքանչյուր խմբից մեկը պատասխանատվություն է կրում մի հատվածի ընթերցանության համար: Ելնելով խմբի բնույթից՝ կամ ինքներդ հանձնարարեք ընտրված հատվածները, կամ թույլ տվեք, որ սովորողներն իրենք ընտրեն իրենց ցանկությամբ:

• Առաջարկեք սովորողներին ինքնուրույն կարդալ իրենց հանձնարարված հատվածը: Եթե բնագրերը պատճենահանված են, կարող եք առաջարկել նրանց էջի վրա ընդգծել ուղղագրական արժեք ունեցող բառերը, որոնք հետո հաղորդելու են խմբի մյուս անդամներին: Այն նյութերի համար, որոնց վրա չի կարելի գրել, ինքնասոսնձվող թղթեր տվեք, որոնց վրա նշուներ կանեն:

• Վերախմբավորեք սովորողներին՝ ըստ հանձնարարված բնագրերի (մի խմբում են հավաքվում բոլոր նրանք, ովքեր նույն տեքստն են կարդաել և ուսումնասիրել, որպեսզի կարողանան համենատել գրառումները և քննարկել տեղեկությունները, իրենց մտքերն ու կարծիքները): Յուրաքանչյուր խմբին հանձնարարեք մանրանասն ուսումնասիրել խմբի յուրաքանչյուր անդամի կողմից հավաքագրած տեղեկությունները, դրանք ի մի բերել՝ կարևոր դրույթները պատկերող կապակցված ամփոփման մեջ, ասենք՝ գաղափարների քարտեզ, գրաֆիկական ուրվագիծ, կամ ընդգծված գրառումների մի ամբողջական շարք: Յուրաքանչյուր խմբից դասի վերջում հավաքեք այս բոլոր գրառումները և պատճենահանեք, որպեսզի հաջորդ օրը լսարանի բոլոր անդամներն ունենան իրենց անձնական կրկնօրինակը:

• Սովորողներին հանձնարարեք վերադառնալ իրենց նախնական խմբերը: Յիմա մի խմբում հավաքված են դասի սկզբում քննարկմանը ներկայացված բոլոր բնագրերի համար «մեկական փորձագետ», որոնք կարող են իրենց հատվածի մասին ձեռք բերված կարևոր տեղեկությունները հաղորդել մյուսներին՝ օգտվելով նախօրոք գրված թերթիկներից: Խմբի մնացած մասը պատասխանատու է նոր տեղեկատվության յուրացման համար, որը կգնահատվի տվյալ գլխի գնահատման ժամանակ:

Առավելությունները

• Սովորողներն առնչվում, ծանոթանում են ավելի լայնածավալ նյութի հետ, քան հնարավոր կլիներ, եթե նրանցից յուրաքանչյուրն ինքնուրույն կարդար առաջարկվող բոլոր աղբյուրներից յուրաքանչյուրը:

• Սովորողները կարող են յուրացման համար ընտրել այն նյութերը, որոնք առավել շատ են համապատասխանում իրենց ընդունակություններին և նախասիրություններին:

• Ընթերցանությունից քաղվածը յուրացնելու համար սովորողները աջակցություն են ստանում իրենց դասընկերներից:

• Սովորողները ձեռք են բերում կարդացած հատվածից կարևոր տեղեկատվությունը ընտրելու և համադրելու հմտություն, քանի որ նրանք խմբի մնացած անդամների համար ուսուցչի դեր են ստանձնում:

Քառարաժան

Գրվում է՝ թ , արտասանվում՝ թ	Գրվում է պ , արտասանվում՝ պ
Գրվում է փ , արտասանվում՝ փ	Գրվում է թ , արտասանվում՝ փ

Ծանոթություն: Սույն մեթոդը խորհուրդ է տրվում ուսուցանել նաև մնացած չորս եռաստիճան բաղաձայնների՝ գ-կ-թ, դ-տ-թ, ծ-ծ-զ, ջ-ճ-չ , ուղղագրությունն ու ուղղախոսությունը:

Առաջարկվում է այս բաղաձայնների, ձայնավորների և երկինչունների շուրջ ուսումնական նյութ ստեղծել: Սովորողներին բաժանում են խմբերի և յուրաքանչյուր խմբի տրվում է ասենք՝ երկինչուններին վերաբերող համապատասխան բառացանկը (հեքիաթ, կրիա, խավիար, բամիա, փասիան, օվկիանոս, միլիարդ, իշիաս, քինիա, միմիայն, ալելուիա, ռադիո, միլիոն, կարիերա):

Յուրաքանչյուր խումբ ստեղծում է իր ուսումնական նյութը՝ օգտվելով գեղարվեստական բնագրերից, հանրագիտարաններից: Կարող են ստեղծել հեքիաթ, թրորիկ պատմություն: Նյութը կարող է ընդգրկել աշխուժացնող, հանելուկային հարցադրումներ: Ավարտելուց հետո ամեն մի խումբ ներկայացնում է իր ստեղծածը և հիմնավորում՝ շեշտադրելով առաջադրանքի առավելություններն ու արդյունավետությունը: Խնճերով աշխատելու ընթացքում ուսուցիչը շրջում է՝ ուղղորդող միջամտությանը նպաստում աշխատանքի ճիշտ ընթացքին և արդյունավետությանը, հետևում հատկացված ժամանակին: Վերջում տրվում է ուսումնական նյութի օրինակ:

Թեմա 4 Հոմանիշներ, հականիշներ, համանուններ, հարանուններ (4 ժամ)

Թեմայի ուսուցման նպատակը – Սովորողները պետք է կայուն գիտելիքներ ստանան բառերի տեսակների մասին՝ ըստ իմաստի՝ հատկապես հոմանիշների և հականիշների մասին, կարողանան գտնել տրված բառի հոմանիշը և հականիշը, ըմբռնեն դրանց երանգային տարատեսակ նրբիմաստները:

Կահավորման անհրաժեշտ միջոցներ – Ունենալ ծրագրում նշված գեղարվեստական ստեղծագործություններից կողմնորոշիչ հատվածներ, հոմանիշների և հականիշների վերաբերյալ գծակարգ - այսուսակներ և նախօրոք պատրաստած թեստեր ու բառաշարքեր՝ գործնական աշխատանքներ կատարելու համար:


Դասավանդման ընթացքը- Գործնական տարաբնույթ վարժությունների, թեստերի միջոցով, պատկերասրահի մեթոդով կատարել խմբային աշխատանքներ: Միաժամանակ պետք է ուշադրություն դարձնել տվյալ բնագրային հատվածի գեղարվեստական արժանիքներին, խոսքի արտահայտչական միջոցներին: Օգտագործել «Պատկերասրահ» մեթոդը:

Պատկերասրահ

Ուսուցիչը սովորողներին բաժանում է խմբերի, ամեն խմբին հանձնարարում է նախ լուր կարդալ, առասպեկի՝ իրենց հատկացված հատվածները, ապա առաջարկում է խմբով քննարկել և որոշել, թե խմբի անդամներից ամեն մեկը վերոհիշյալ հատվածներից որի վրա է ուզում աշխատել: Այդ հատվածները վերնագրվում են ըստ Ռոտտերի համապատասխան նկարաշարքի՝

1. Երվանդի պատերազմն Արտաշեսի հետ և փախուստը
2. Արտաշես և Սաքենիկ
3. Արտաշեսի ծանր հիվանդանալը և մահամերձ վիճակում կարոտաբաղձ տենչը՝ «Ո տայր ինձ ծուխ ծխանի...»
4. Արտաշեսի մահը, Արտավազդի դժգոհությունը
5. Արտաշեսի ամեծքը
6. Արտավազդի կալանումը վիշապազունների կողմից

Երբ յուրաքանչյուր խմբի ներսում աշխատանքի բաժանումն ավարտվում է, ուսուցիչը նոր խմբեր է կազմում՝ ըստ առաջադրանքների: Այսինքն՝ առաջին առաջադրանքն ընտրածները (հոմանիշների շուրջ աշխատողները) հավաքվում են մի սեղանի շուրջ, երկրորդները (հականիշների շուրջ աշխատողները)՝ մեկ այլ: Այսպիսով ձևավորվում են նոր խմբեր, որոնցից յուրաքանչյուրը պետք է ուսումնասիրի, քննարկի և դրա արդյունքում ստեղծի մի պատառ, որտեղ գրանցվում է վերոհիշյալ բառատեսակների շարքերի շուրջ կատարած աշխատանքների իրագործման ուղղությամբ ստացված արդյունքը: Աշխատանքն ավարտելուց հետո ամեն խումբ իր ստեղծած պատառը փակցնում է լսարանի պատերին: Ուսուցչի հրահանգով յուրաքանչյուր սովորող վերադառնում է իր նախկին խումբը: Յետո խմբերը հերթով մոտենում են բոլոր պաստառներին: Ամեն պաստառի մոտ բացատրություններ է տալիս այն սովորողը, որը մասնակցել է դրա ստեղծմանը: Աշխատանքն ամփոփվում է, իսկ սովորողները դրանց շուրջ գրում են բնութագրող բառերը, հասկացությունները կամ արտահայտությունները, որոնք գժերով միացնում են հիմնաբառին:



1.



Երվանդի պատերազմն Արտաշեսի հետ և փախուստը

Երբ Արտաշեսի նշանները Երվանդի գորքի ճակատի առաջ երևացին, Արգամը հետևակների բազմությունը մի կողմ քաշվեց: Իսկ Սմբատը իրամայեց պղնձե փողերը հնչեցնել և իր գորքի ճակատն առաջ շարժելով սլանում էր, ինչպես արծիվը կաքավների երամի վրա: Իսկ հայոց նախարարները, որոնք (Երվանդի ճակատի) աջ և ձախ թևերն էին կազմում, խառնվում միանում էին նրա հետ: Վրաց գորքերը թեպետ իրենց Փարսման թագավորի հետ հանդուգն հարձակում գործելով ընդհարվեցին, բայց շուտով փախչում էին մյուս կողմ: Այլտեղ Երվանդի գունդը և Միջագետքի գորքերը սարսափելի կոտորած կրեցին: Երկու ճակատների իրար խառնվելիս Արտաշեսի դեմ են գալիս՝ տավրոսից քաջ մարդիկ, որոնք մահն աչքերն առած՝ Երվանդին խոստացել էին, թե Արտաշեսին կսպանեն: Սրանց հետինու պատահում է Գիսակը, Արտաշեսի ծծմոր որոին, և մեջ մտնելով՝ նրանց սպանում է և հաղթություն է տանում, որի ժամանակ նրա երեսի կեսն էլ սրով կտրում են և մեռնում է այս գործի վրա: Մնացալ գորքերը փախուստի են դիմում:

Իսկ Երվանդը, ձիով շատ ասպարեզներ անցնելով, և իր բանակից մինչև քաղաքը հաստատած իջևաններում նոր-նոր ձիեր հեծնելով, փախչում էր անընդհատաբար: Սմբատն էլ, նրան հետամուտ լինելով, սաստկապես հալածում էր գիշերով մինչև քաղաքի դուռը: Իսկ Մարաց գորքերը, Երվանդի գնդի կողմն անցնելով, մթության մեջ բանակն էին դնում դիակների վրա: Արտաշեսն էլ, հասնելով Երվանդի խորանին, որի շուրջ նա կաշու և կտավի առագաստներով պարիսա էր քաշել, իջավ և գիշերը նրա խորանում մնաց: Իսկ երբ լուսացավ, նա, տիրաբար կարգադրելով, իրամայեց սպանվածներին թաղել: Այս հովհատը, որտեղ (մարաց) գորքերը դիակների վրա բանակ դրին, կոչեց Մարաց մարգ, իսկ

ճակատամարտի տեղը կոչեց Երվանդավան՝ իբրև թե այստեղ վանեց Երվանդին. այսպես էլ կոչվում է մինչև այսօրվա օրս: Ապա չվեց գնաց Երվանդի քաղաքը, կեսօրից առաջ:

Երվանդի դաստակերտը հասնելով՝ գործին հրամայեց, որ միասին բարձր աղաղակեն՝ «Մար ամատ», որ թարգմանվում է՝ «Մարը Եկավ»՝ սրանով հիշեցնելով այն վիրավորանքը, որ նրա մասին ուղարկում էր Երվանդը Պարսից թագավորին և Սմբատին, նրան Սար կոչելով: Յենց այս ձայնով էլ այն դաստակերտը Մարմետ կոչվեց, հավանորեն Արտաշեսի կամքով, որպեսզի Երվանդի անունը նրա վրայից վերանա: Այս է պատճառը այդ դաստակերտի անվանակոչության:

Բայց Սմբատը գիշերով Երվանդի հետևից գալով փոքրաթիվ վաշտով՝ քաղաքի դուռը պահում էր, մինչև որ Արտաշեսը, և բոլոր գործերն եկան: Եվ երբ քաջերն սկսեցին ամրոցի դեմ կռվել՝ ամրոցի մարդիկ անձնատուր եղան և քաղաքի դուռը բացին: Զինվորներից մեկը, մտնելով, վաղրով Երվանդի գլխին խփեց, և ուղեղը տան հատակի վրա ցրվեց, այսպես ջախջախվելով՝ վախճանվեց քսան տարի թագավորելուց հետո: Բայց Արտաշեսը, հիշելով, թե Երվանդը Արշակունյաց ցեղի խառնուրդ էր, հրամայում է թաղել և մահարձան դնել:

2.



Ալաների հարձակումը մեզ վրա և պարտությունը Արտաշեսի խնամիանալը նրանց հետ

Այս ժամանակներն ալանները բոլոր լեռնականների հետ միաբանելով, վրաց աշխարհի կեսն էլ իրենց կողմը ձգելով՝ մեծ թագմությամբ գալիս, սփռվում են մեր

աշխարհում: Արտաշեսն էլ ժողովում է իր զորքերի բազմությունը և տեղի է ունենում պատերազմ երկու քաջ և աղեղնավոր ազգերի միջև: Ալանների ազգը փոքր - ինչ հետ է նահանջում և մեծ կուր գետն անցնելով՝ բանակ է դնում գետի ափին՝ հյուսիսային կողմից: Արտաշեսն էլ, գալով, բանակում է գետի հարավային կողմում. գետը բաժանում է երկուսին:

Բայց որովհետև Յայոց զորքերը, ալանների թագավորի որդուն բռնելով, Արտաշեսի մոտ են բերում, ալանների թագավորը հաշտություն էր խնդրում, խոստանալով տալ Արտաշեսին՝ ինչ-որ ուզեր, առաջարկում էր նաև երդումով դաշինք անել, որ ալանների երիտասարդներն այնուհետև չասպատակեն Յայոց աշխարհը: Երբ Արտաշեսը չի համաձայնում պատանուն հետ տալ, պատանու քույրը գալիս է գետի ափը, մի մեծ բարձրավանդակ և թարգմանների միջոցով ձայն է տալիս Արտաշեսի բանակը.

«Քեզ եմ ասում, քաջ տղամարդ Արտաշես,
Որ հաղթեցիր ալանների քաջ ազգին.
Եկ, լսի՛ր ալանների գեղաչյա դստերս խոսքերին
Եւ տուր պատանուն:
Որովհետև օրենք չէ՝ որ քենի համար դյուցազունները
Ուրիշ դյուցազն զարմերի կենդանությունը ջնջեն
Կամ իբրև ծառա ստրուկների կարգում պահեն,
Եվ երկու քաջ ազգերի մեջ
Մշտնջենավոր թշնամություն հաստատեն»:

Արտաշեսը, այս իմաստուն խոսքերը լսելով, գնաց գետի ափը և տեսնելով գեղեցիկ կույսին ու լսելով նրանից իմաստուն խոսքերը՝ նրան ցանկացավ: Կանչում է իր դայակ Սմբատին, քաջ է անում իր սրտի փափազը՝ կին առնել ալանների արքայազն օրիորդին, դաշինք և ուխտ դմել քաջերի ազգի հետ և պատանուն խաղաղությամբ արձակել: Սմբատը հավանություն է տալիս և մարդ է ուղարկում ալանների թագավորի մոտ, որ ալանների արքայազն օրիորդ տիկին Սաքենիկին կնության տա Արտաշեսին: Ալանների թագավորն ասում է.

«Եվ որտեղի՞ց քաջ Արտաշեսը պիտի տա
Յազար հազարներ ու բյուր բյուրեր
Քաջերի սերունդ այս կույսի՝
Ալանների արքայազն օրիորդի համար»:

Վիպասանները երգելիս այս տեղն առասպելաբանում են՝ ասելով.

«Յեծավ արի Արտաշես արքան գեղեցիկ սև ձին,
Եւ հանելով ոսկեզօծ շիկափոկ պարանը,
Եւ անցնելով գետն իբրև սրաթև արծիվ,
Եւ նետելով ոսկեօղ շիկափոկ պարան՝
Զգեց մեջքը ալանաց օրիորդի,
Եվ շատ ցավեցրեց փափուկ օրիորդի մեջքը՝
Արագաբար իր բանակը հասցնելով»:

Իրապես այսպես է եղել: Որովհետև ալանների մոտ հարգի է կարմիր մորթը, (Արտաշեսը) բավական լայքա և շատ ոսկի է տալիս վարձանք և առնում է տիկին օրիորդ Սաքենիկին: Այս է, որ ասում են ոսկեօղ շիկափոկ պարան: Նույնպես հարսանիքի մասին երգում են առասպելաբանելով.

«Ոսկի տեղ էր տեղում
Արտաշեսի փեսայության ժամանակ.

Մարգարիտ էր տեղում
Սաքենիկի հարսնության ժամանակ»:

Որովհետև մեր թագավորները սովորություն ունեին՝ իբրև փեսա դահլիճի դուռը հասնելիս դրամներ շաղ տալ հռոմայեցիների հյուպատոսների նման. նույնպես և թագուհիները առաջաստի սենյակում՝ մարգարիտ: Երգի խսկական իմաստն այս է:

Սա Արտաշեսի կանանց մեջ առաջինը դառնալով՝ ծնուն է Արտավազդին և ուրիշ շատ զավակներ, որոնց այստեղ թվել կարևոր չհամարեցինք, այլ կիշենք հետո, երբ մի գործի կիասնենք:

3.



Արտաշեսի մահվան մասին

Արտաշեսը հիվանդացավ Մարանդում, Բակուրակերտ ավանում: Նա աբեղյանների տոհմի նահապետ ոմն Արեղոյի, որ մի ճարպիկ շողոքորթ և հաճոյախոս մարդ էր, հենց նրա խնդրով ուղարկեց Եկեղյաց գավառը, Երիզա, Արտեմիսի մեհյանը, որպեսզի կուրքերից բժշկություն և երկար կյանք խնդրե (թագավորի համար). Նա դեռ հետ չդարձած՝ Արտաշեսի մահը վրա է հասնում: Եվ (Արիստոնը) գրուն է, թե որքան բազմություն մերավ Արտաշեսի մահվան ժամանակ՝ նրա սիրելի կանայքը, հարժերը և մտերիմ ծառաները և ինչպես բազմատեսակ շքեղ պատիվներ մատուցին դիակին, քաղաքակիր (ազգերի) կարգով, և ոչ թե բարբարոսների նման: Նրա դագաղը, ասուն է, ուսկեղեն էր, գահը և անկողինը բեկեզից և մարմինը պատող պատմուճանը ուսկեթել, գլուխը թագ դրած, ուսկյա զենքն առջել: Գահը շրջապատուն էին որդիներն ու ազգականների բազմությունը և սրանց մոտ զինվորական պաշտոնյաները, նահապետները, նախարարական գնդերը և ընդհանրապես զորականների վաշտերը, ամենքը զինված, որպես թե պատրաստվում են պատերազմի, առջևից պղնձե փողեր էին հնչեցնում, իսկ հետևից սևազգեստ ձայնարկու կույսեր և լալկան կանայք, բոլորից վերջը

ռազմիկների բազմություն: Եվ այսպես տանելով՝ թաղեցին: Նրա գերեզմանի վրա կամավոր մահեր էին լինում, ինչպես վերն ասացինք: Սա թագավորեց քառասունևէ տարի՝ այսպես սիրելի լինելով մեր աշխարհին:

4.



Արտավագդի թագավորելը, իր Եղբայրներին ու քույրերին հալածելը, և նրա մահը՝ այլաբանությամբ հանդերձ

Արտաշեսից հետո թագավորում է նրա Արտավագ որդին և Այրարատից բոլոր Եղբայրներին հալածում է Աղիովիտ և Աօբերանի գավառները, որպեսզի Այրարատում, թագավորի կալվածում, չապրեն. միայն Տիրանին պահում է իրեն փոխանորդ, որովհետև ինքը որդի չուներ: Նա քիչ օրեր թագավորելուց հետո մի անգամ անցնում էր Արտաշատ քաղաքի կամուրջով՝ Գինա ակունքների մոտ կինծեր և վայրի էշեր որսալու, հանկարծ ինչ-որ ցնորժից շփոթվում, խելագարվում է, ձիուց վայր է ընկնում մի խոր փոսի մեջ և այնտեղ խորասուզվում, անհետանում է:

Նրա մասին գողքնի երգիչներն այսպես են առասպելաբանում.

«Արտաշեսի մահվան ժամանակ, հեթանոսական սովորությամբ շատ կոտորածներ էին լինում. դրա վրա, ասում են, Արտավագդը նեղանում է և ասում է Հորը.

«Երբ դու գնացիր,
Ու բոլոր երկիրը քեզ հետ տարար,
Ես այս ավերակների վրա
Ինչպես թագավորեմ»:

5.



Սրա համար Արտաշեսը, նրան անիծելով, այսպես է ասում.

«Թե դու հեծնես, որսի գնաս
Ազատն ի վեր՝ դեպի Մասիս,
Քաջքերը քեզ բռնեն, տանեն
Ազատն ի վար՝ դեպի Մասիս.
Այնտեղ մնաս, լույս չտեսնես»:



Պառավները սրա մասին զրուցում են, թե արգելված մնում է մի քարանձավի մեջ՝ երկարե շղթաներով կապված, երկու շուն կրծում են նրա շղթաները, և նա ջանք է անուն դուրս գալ և աշխարհին վերջ տալ, բայց, ասում են, դարբինների կռանահատության ձայնից կապանքներն ամրանում են: Ուստի դեռ մինչև այժմ էլ դարբիններից շատերը, առասպելին հետևելով, կիրակի օրերը երեք կամ չորս անգամ (կռանով) խփում են սալին, որպեսզի, ասում են, Արտավազդի շղթաներն ամրանան: Բայց իսկական իրողությունն այնպես է, ինչպես վերն ասացինք:

Բայց ոմանք ասում են, թե հենց սրա ծնվելու ժամանակ մի պատահարք է հանդիպել. և կարծում են, թե Աժդահակի սերունդից կանայք նրան կախարդել են, որի պատճառով Արտաշեսը նրանց շատ չարչարեց: Այս մասին նույն երգիչներն առասպելի մեջ այսպես են ասում.

«Վիշապազունքը մանուկ Արտավազդին գողացան,
Եվ նրա տեղ դրին դև»:

Բայց ինձ ճշմարիտ է թվում այն լուրը, թե նա ծննդից ի վեր մոլությամբ է ապրել, մինչև որ նույն մոլությամբ մեռել է: Թագավորությունն առնում է նրա Տիրան եղբայրը:

Թեմա 5 Բառապաշարի տարրեր շերտերը (6 ժամ)


Թեմայի ուսուցման նպատակը – Սովորողները պետք է կայուն գիտելիքներ ստանան բառերի տարրեր շերտերի մասին, իմանան դրանց տեղին ու ճիշտ գործածությունը, հեղինակային բնագրերից կարողանան առանձնացնել դրանք:

Կահավորման անհրաժեշտ միջոցներ – Ունենալ ծրագրում նշված գեղարվեստական ստեղծագործություններից առանձնացրած հատվածներ, որոնց մեջ համեմատաբար շատ լինեն նշված շերտերի բառաքանակները: Ցուցադրել բառապաշարիտրված շերտերին վերաբերող վահանակ – պաստառներ:

Դասավանդման ընթացքը- Գործնական տարաբնույթ վարժությունների միջոցով համեմատել մաքուր գրական և բարբառային տարրեր պարունակող բառապաշարով գրված գրական ստեղծագործություններ, դուրս գրել համագործածական, գրքային, առօրյա - խոսակցական բառերն ու բառակապակցությունները: Գործնական աշխատանքներ կատարել սեփական տարածաշրջանի բարբառի շուրջ: Կատարել հակադարձ աշխատանքներ՝ գրքային բառերը առօրյա - խոսակցական և հակառակը վերածելու նպատակով: Ուսուցման մեթոդ՝ **Վեճնի դիագրամ:**

Վեճնի դիագրամ

Դասավանդման ընթացքում օգտակար է նաև Վեճնի դիագրամի օգտագործումը: Այն հատկապես օգտակար է գաղափարները, հասկացությունները, քերականական իրողությունները միջանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունը բացահայտելու նպատակով: Այս դասի առնչությամբ դիագրամը սովորողներին հնարավորություն կտա համեմատել տրված բառաշերտերը: Ուսուցիչն սովորողների գույգերին առաջարկում է գծել Վեճնի դիագրամ, լրացնել շրջանագծի միայն այն երեք մասերը, որոնք նվիրված են հնարանություններին, նորաբանություններին և օտարաբանությունների, հետո գույգերը կարող են միանալ այլ գույգերի հետ և չորս հոգանոց խմբերով համեմատել դիագրամները: Աշխատանքի արդյունքում ստանում են միմյանց հատվող շրջանագծերի պատկեր, որտեղ հատվող հատվածում գրվում են երեքի համար ընդհանուր հատկանիշները



Թեմա 6


**Տվյալ մասնագիտության հետ կապված փոխառություններ,
օտարաբանություններ, նորաբանություններ և հնաբանություններ
(8 ժամ)**

Թեմայի ուսուցման նպատակը – Սովորողները պետք է տիրապետեն իրենց մասնագիտությանը և կարողանան տեղին ու նպատակային գործածել դրան առնչվող եզրաբառեր, օտարաբանություններ, նորաբանություններ, ինչպես նաև պատմական վեպերում և պատմիչների երկերում հանդիպող հնաբանություններ: Դրանք կարողանան օգտագործել գրավոր և բանավոր խոսքում, պատեհ առիթով:

Կահավորման անհրաժեշտ միջոցներ – Լսարանում ունենալ տարաբնույթ, հատկապես պոլիտեխնիկական, աշխատանքնային ուսուցման, մասնագիտական և օտար բառերի բառարաններ, տեղմինաբանական տեղեկատու, աղյուսակներ և գծակարգեր, օտարաբանությունների, նորաբանությունների և հնաբանությունների բառաշարքեր և ընտրովի նկարաշարքեր:

Դասավանդման ընթացքը- Ուսուցումը կազմակերպվում է այնպես, որ սովորողները սկզբում՝ ըստ նկարաշարքերի, անվանեն տրված առարկաները, երևույթները: Ուսուցչի ուղղորդմամբ միասնական ուժերով փորձում են գտնել նշված բառատեսակների հայերեն համարժեքները: Դժվարանալու դեպքում կարելի է օգտվել բառարաններից, տեղեկատուից: Որոշ հիմն իրատարակության ամսագրեր ու գրքեր «սրբագրվում են» խմբերի կողմից և գործնականում ծանոթանում հնաբանություններին, օտարաբանություններին, համեմատում դրանք նորաբանությունների հետ, ընդգծում դրանց առաջացման առանձնահատկություններն ու տարբերությունները: Կազմել որոշ բառերի տոհմածառն ըստ գծագրի:

Բառի տոհմածառը



Թեմա 7

**ճիշտ խոսենք և գրենք : Թերասությունների և թյուասացություններ
(ուղղախոսական, հոլովոկան, խնդրառական, խոնարհման և այլ կարգի սխալներ)
(4 ժամ)**

Թեմայի ուսուցման նպատակը – Գործնական աշխատանքների միջոցով, հեռուստահաղորդումներից, թերթերից, ռադիոհաղորդումներից բերված խոսքային, արտահայտման սխալների և վթարների օրինակների միջոցով սովորողներին ակնառու ձևով ցուցադրել, բացատրել և սովորեցնել ճիշտ խոսելու կարգը, գիտակցել տալ դրա անհրաժեշտությունը:

Կահավորման անհրաժեշտ միջոցներ - Ունենալ գ. Յարայանի թյուրասացությունների և թերասացությունների, առանձների ու ասացվածքների ուղղակի իմաստով ըմբռնման զավեշտական հետևանքներին նվիրված ծաղրանկարների շարքերի ալբոմներ, այսուսակների, գծակարգերի, բառաշարքերի, արտահայտությունների, բառակապակցությունների դիտապաստառներ, թեստեր, հարցարաններ:

Դասավանդման ընթացքը- Վեր հանել մեր հասարակության տարրեր ոլորտներում առավել տարածված խոսքային վթարների և սխալների օրինակներ: Ցույց տալ դրանց զավեշտական, ծաղրական կողմերը: Ուսուցչի կողմնորոշմանը, անհրաժեշտ դեպքում նաև՝ օգնությամբ գտնել դրանց ճիշտ համարժեքները: «Խնբագրել և սրբագրել» այդ վթարները՝ գործածելով հոլովական, խոնարհման, խնդրառական ճիշտ ձև: Օգտագործել փաստերի բուրգ մեթոդ:

Փաստերի բուրգ

Գաղտնիք չէ, որ փաստացի տեղեկատվության մեջ մասը ժամանակի ընթացքում մոռացվում է, բայց դրա մի մասը՝ առավել անհրաժեշտ տեղեկատվությունը, պետք է պետք է մտապահել, եթե մարդն իրեն գրագետ է համարում: Փաստերի բուրգ մեթոդը ուսուցիչներին տեղեկատվությունը վերլուծելու կառուցվածքային հնարավորություն է ընձեռում, այնպես, որ ուսուցումը կարողանա օգնել սովորողներին՝ կենտրոնալու կարևոր հասկացությունների՝ այն մի քանի փաստերի ու գաղափարների վրա, որոնք իսկապես անհրաժեշտ է մտապահել ժամանակի ընթացքում: Փաստերի բուրգը տեղեկատվությունը գժագրորեն դասակարգում է երեք մակարդակներում՝ հիմնական գիտելիքներ, կարճաժամկետ փաստեր, օժանդակ մանրամասներ:


Հիմնական գիտելիքներն այն գաղափարները կամ մտքերն են, որոնք գրագետ անձը պետք է հիշի ժամանակի ընթացքում: Երբեմն դա կարող է լինել մի ամբողջ գլխի մի փոքր մասը միայն: Հիմնական գիտելիքները տարիներ հետո էլ մնում են մեզ հետ:

Կարճաժամկետ փաստերը այն կարևոր տեղեկատվություններն են, որոնք հասկացություններին հնարավորություն են տալիս մնալ հիշողության մեջ հարուստ կենսափորձի որոշակի մակարդակի դեպքում, բայց ժամանակի ընթացքում դրանք նույնպես աստիճանաբար մոռացության են մատնվում:

Օժանդակ մանրամասները առավել որոշակի տեղեկատվություն են, որոնք ապահովում են ընկալման համար անհրաժեշտ խորությունը, բայց դրանց ուսուցումը չպետք է ինքնանպատակ լինի: Անշուշտ, հարուստ տեքստը ընթերցողին ոչ միայն վերնագրեր և թափ տառերով գրված բառեր է առաջարկում: Օժանդակ մանրամասները տեքստի համար այն «իմաստային սոսինձն» են, լրացումներն ու օրինակները, որոնք օգնում են լուսաբանել գաղափարը:

Տեղեկատվությունն ըստ այս երեք մակարդակների դասակարգելու դեպքում ուսուցիչները կարող են պարզել դասագրքի կազմության ու հարցերի թերությունները:

Փաստերի բուրգը աշակերտներին կօգնի պարզաբանել տեքստային տեղեկատվությունը՝ դրամասին գրելու և հիշելու համար:



Թեմա 8

Հայերենի կետադրությունը

Թեմայի ուսուցման նպատակը – Զարգացնել սովորողների՝ ճիշտ և գրագետ կետադրելու, տվյալ կետադրությանը համապատասխան առոգանությանը ընթերցելու ունակություններն ու կարողությունները:

Կահավորման անհրաժեշտ միջոցներ – Ունենալ կետադրական գծակարգեր, աղյուսակներ, համը բնագրեր՝ կետադրության բոլոր տեսակների՝ տրոհության, առոգանության, բացահայտության նշանների վերաբերյալ:

Դասավանդման ընթացքը- Համը բնագրերի օգնությամբ պարզել սովորողների կետադրելու կարողությունները և ըստ դրա խորացնել նրանց գիտելիքները խմբային, զույգերով և անհատական աշխատանքների միջոցով: Օգտագործել հասկացության սահմաննան քարտեզ մեթոդը:

Հասկացության / սահմաննան քարտեզագրում

Հասկացության/ սահմաննան քարտեզները սահմաննան գլխավոր մասերի վրա սովորողների ուշադրությունը կենտրոնացնող գրաֆիկական կառույցներ են, որոնք պատկերում կամ ընդգրկում են առարկայի, երեւույթի դասը կամ կարգը, հատկանիշները, առանձնահատկությունները, լուսաբանումներն ու օրինակները: Այս մեթոդը խրախուսում է սովորողներին՝ սահմաննան մեջ միավորել նաեւ սեփական գիտելիքները:

Այս մեթոդի կիրառումը ներառում է հետեւյալ քայլերը.

- Ցուցադրել հասկացության / սահմաննան քարտեզը: Նշել այն հարցերը, որոնց պատասխանը պետք է պարունակի արդեն ավարտուն սահմանումը. ի՞նչ է դա, ինչպիսի՞ն է: Բերել նաեւ մի քանի օրինակ: Սովորողներին հասկացության / սահմաննան քարտեզից օգտվելու օրինակ տալ՝ ընտրելով ծանոթ գաղափար կամ լսարանից համապատասխան տեղեկություններ իմանալ՝ քարտեզը լրացնելու համար:

- Ընթացիկ դասից մի նոր հիմնական եզրույթ կամ հասկացություն ներկայացնել: Սովորողներին հանձնարարել թիմերով աշխատել նոր հասկացության վրա՝ պահանջվող քարտեզը ստեղծելու համար: Բառն ընտրել առաջարկված հատվածից: Նրանց տվեք համապատասխան ցուցումներ՝ եզրաբանական կամ այլ բառարանից օգտվելու եւ քարտեզը լրացնելու վերաբերյալ:

- Երբ սովորողները վերջացնեն հասկացության / սահմաննան քարտեզագրումը, հանձնարարել քարտեզից օգտվելով տալ հասկացության լիարժեք սահմանում: Հատուկ ուշադրություն հրավիրել այն բանը վրա, որ սահմանումը պետք է պարունակի բառի կարգը, դրա հատկությունները կամ բնորոշ գործը եւ առանձնահատուկ օրինակները: Այն պետք է կազմված լինի մի քանի նախադասությունից եւ ոչ թե բառարանային կարծ սահմանումից:

- Սովորողներին հանձնարարեք մյուս կարեւոր եզրույթների եւ գաղափարների համար նույնական հասկացության / սահմաննան քարտեզներ ստեղծել ըստ ընթեցանության համար նախատեսված առաջադրանքի: Դրանցից կարող են օգտվել թեստերի կրկնողության ընթացքում կամ դրանց պատրաստվելու համար:


Առավելությունները

- Սովորողները ընդլայնում են առանցքային բառերի կամ գաղափարների մասին իրենց պատկերացումները, որոնք չեն կարող ընդամենը պարզ սահմանումներ համարվել:

- Սովորողները գաղափարի սահմաննան տեսողական պատկերացումն են կերտում, որն օգնում է մտապահել այն:

- Այս ռազմավարությունը խրախուսում է սովորողներին՝ իրենց ծանոթ գիտելիքները միավորել սահմանման մեջ: Այն կարող է կիրառվել սովորողների տարբեր խնդերուն

**Կետադրական նշանի
անունը**



Թեմա 9

Ոճաբանություն, ոճերի տեսակները

Թեմայի ուսուցման նպատակը – Սովորողներին գաղափար տալ ոճաբանության և հայերենի ոճերի մասին: Մշակել հմտություն ոճերի տեսակները զանազանելու և դրանք ծիշտ և տեղին գործածելու առումով: Խորացնել անհատական ոճերի մասին գիտելիքներն այնպես, որ սովորողները հստակ կարողանան առանձնացնել Թումանյանի և հսկակայանի, Տերյանի ու Չարենցի և մնացած հեղինակների ոճերը, համադրեն ու համեմատեն դրանք միմյանց հետ:

Կահավորման անհրաժեշտ միջոցներ – Ունենալ տարբեր տարիների հրատարակության «Լեզվի և ոճի հարցեր» ժողովածուներ, տարբեր ոճերին պատկանող առանձնահատուկ քաղվածքներ, նմուշներ, բնագրեր, գեղարվեստական գործերի հատվածներ:

Դասավանդման ընթացքը- Տարատեսակ բնագրերից, մամուլից, գեղարվեստական և մասնագիտական գրականությունից բերված օրինակների հիման վրա խորացնել սովորողների գիտելիքները ոճերի մասին՝ սկսելով գեղարվեստական, հրապարակախոսական, վարչական ոճերից մինչև խմբային և անհատական ոճեր: Օգտագործել զուգադրությունների այլուսակ մեթոդը:

Զուգադրության այլուսակ

Զուգադրությունները հզոր միջոցներ են, որոնք ընդհանրապես մարդուն և մասնավորոպես սովորողներին օգնում են հասկանալ, ընկալել նոր նյութը և գաղափարները: Դրանք միաժամանակ նպաստում են, որ սովորողները կարողանան կապակցել նոր նյութը ծանոթ հասկացությունների հետ:

Զուգադրության այլուսակը սովորողներին օգնում է հասկանալ նոր գաղափարի և իրենց վաղուց ծանոթ ինչ-որ մի երևույթի նմանություններն ու տարբերությունները: Այս մեթոդով աշխատելիս անհրաժեշտ են հետևյալ քայլերը.

• **Պարզել,** թե ինչ գիտեն սովորողները ներկայացվող նյութի վերաբերյալ: Այնուհետև այդ գիտելիքների հիման վրա ընտրել ծանոթ գաղափար (առարկա, երևույթ) և գտնել ընդհանուր եզրեր: Ծանոթ գաղափարի ընտրությունը կարող է կամուրջ ծառայել նոր գաղափարի համար:

• **Մտային գրոհը** կազմակերպել՝ սովորողների հետ քննարկելով երկու գաղափարների համար ընդհանուր առձանձնահատկություններն ու տարբերությունները: Դրանք գրանցել նմանությունների և տարբերությունների սյունակում: Անհրաժեշտ է սկսել ընդհանրություններից: Այս սյունակը լրացնելուց հետո ուսուցիչը և սովորողները ծեռարկում են տարբերությունների բացահայտումը: Ընդ որում առաջին և երկրորդ քայլերն օրինակի ձևով ներկայացվում են ուսուցչի կողմից: Եթե սովորողները որոշակի հմտություններ են ձեռք բերում, նրանց հանձնարարվում է համագործակցային խմբերում ինքնուրույն լրացնել զուգադրության այլուսակ:

• **Սովորողների** օգնությամբ պարզել, թե ինչով են երկու գաղափարները տարբերվում միմյանցից, և դրանք գրանցել տարբերությունների սյունակում: Սկզբում առաջին և երկրորդ քայլերը պետք է օրինակով ներկայացվեն ուսուցչի կողմից:

• **Սովորողների** հետ քննարկել համեմատության հիմքը կազմող հաջորդ կատեգորիաները: Օրինակ՝ որոշ նմանություններ կարող են որակվել որպես նույն ժամանին պատկանելու հանգամանք:

Առավելությունները


Զուգադրության այլուսակի կիրառմամբ սովորողները ձեռք են բերում ծանոթ կամ համանման գաղափարների համեմատական վերլուծություն կատարելու հմտություններ:

Արդյունքում մեծանում է նոր գաղափարների կամ բառերի ընկալման արդյունավետությունը:

Սովորողները փորձում են ծանոթ գիտելիքներն ակտիվացնելու միջոցով կապեր հաստատել նոր նյութի և դրան առնչվող փորձի միջև:

Սովորողները համակարգված եզրահանգում գրելու փորձ են ձեռք բերում և սովորում տվյալ բնագիրի շրջանակում համեմատել – հակադրել:

Զուգադրության գրաֆիկական կազմակերպիչ



Թեմա 10

Գործնական գրություններ

Թեմայի ուսուցման նպատակը – Սովորողներին գիտելիքներ տալ կյանքում և հասարակության մեջ գործածության մեջ գտնվող գործնական գրությունների մասին և մշակել ունակություններ հատուկ ծև ունեցող այդ գրությունների կազմանը և գործածմանը տիրապետելու համար:

Կահավորման անհրաժեշտ միջոցներ – Ցուցադրել համաշխարհային և հայ մեծերի սիրային, գործնական, պաշտոնական նամակների օրինակներ, անվանի մարդկանց նամականիներ, գործնական գրությունների օրինակներ:

Դասավանդման ընթացքը- Դաս - դասախոսությամբ գաղափար տալ մարդու շրջապատի հետ շփման ընթացքում պաշտոնապես հաղորդակցվելու, հարաբերվելու փաստաթղթային այն շարքի հետ, որ ընդհանուր անունով կոչվում է գործնական գրություններ: Փաստերով համոզել սովորողներին, որ, աշխարհ գալու առաջին օրից սկսած, մարդը շփվում է մյուս մարդկանց, հասարակության ու պետության հետ՝ փաստաթղթային կապերով, որոնք պարտադիր են, ուստի և դրանց ինացությունն անհրաժեշտ է: Օգտագործել **Ֆրայերի այլուսակ** մեթոդը:

Ֆրայերի այլուսակը

Ֆրայերի այլուսակը գաղափարներին եւ հասկացություններին առնչվող տվյալների գրանցման այլուսակ է: Այն բաղկացած է չորս բաժիններից: Կարելի է սովորողներին տրամադրել Ֆրայերի դատարկ այլուսակը եւ առաջարկել, որ վրան աշխատեն, գծեն գրատախտակին կամ ցուցադրեն պաստարի վրա: Ֆրայերի այլուսակը կարող է կարդալու ընթացքում սովորողի համար ծառայել նաեւ որպես հետազոտման ուղեցույց: Այս մեթոդի կիրառումը ներառում է ներքահիշյալ քայլերը.

• Ուշադիր վերլուծեք այն գաղափարը, որը պատրաստվում եք ուսուցանել սովորողներին: Ստեղծեք այդ գաղափարների առանձնահատկությունների ցանկը:

• Գաղափարը ներկայացրեք սովորողներին եւ հանձնարեք դրան առնչվող օրինակներ մտածել: Առավել արդյունավետ մեթոդ է սովորողների համագործակցող խմբերից ներկայացուցիչ ընտրել եւ մտագրոհի միջոցով հնարավորինս շատ տարբերակները գտնել: Օրինակներ գրեք գրատախտակին կամ ցուցապաստարին: Աշակերտներին խրախուսեք՝ օրինակներ ավելացնել ցանկի մեջ կամ վիճարկել արդեն առաջարկվածները: Կազմեք ընդհանուր առանձնահատկությունների եւ հատկանիշների երկրորդ ցանկը: Աշակերտներին խնդրեք՝ որոշել գաղափարի կարեւոր առանձնահատկությունները:

• Սովորողները արդեն պատրաստ են կարդալու գաղափարի մասին պատմող ընտրված հատվածը: Առանձնացրեք այն տեղեկությունները, որոնք հարկավոր է ներառել բաժիններից յուրաքանչյուրում՝ կարեւոր անկարեւոր առանձնահատկություններ, օրինակներ եւ բացառություններ: Նկատի ունեցեք, որ սովորողները կարդալու են լսարանի կողմից առաջարկված կարծիքները՝ հաստատելու կամ մերժելու համար: Կարող եք նաեւ սովորողներին առաջարկել այլուսակ կարդալու եւ լրացնելու ընթացքում գույգերով աշխատել: Երբ սովորողներն ավարտեն կարդալը, անդրադարձեք նրանց օգնությամբ գրի առաջ նախնական ցանկին: Ֆրայերի մեկ այլ մոդելի վրա գրի առեք այն բոլոր օրինակներն ու առանձնահատկությունները, որոնք սովորողները կարողացան կարդալու միջոցով հաստատել: Նրանց կազմած ցուցակից որոշ կետեր հարկ կլինի տեղադրել անկարեւորների կամ բացառությունների բաժնում: Սավորողներին հարկավոր է խրախուսել, որ ընթերցելու ընթացքում եւս յուրացրած նոր տվյալները գրի առնեն մոդելի համախառախան բաժնում: Ի դեպ այլուսակը լրացնելիս սովորողները կարող են վստահ չլինել այս կամ այն օրինակի հավաստիության վրա: Հնարավորություն ընձեռեք նրանց՝ գրանցելով նաեւ այդպիսի տեղեկությունները:

Սակայն առաջարկեք՝ հարցական նշանով առանձնացնել դրանք: Վերջիններս խմբային քննարկման ժամանակ կմեկնաբանվեն եւ սովորողը կստանա իր հարցերը պատասխանները:

- Եթե սովորողներն արդեն կկարողանան օգտվել Ֆրայերի մոդելից, մեթոդի մեջ բազմազանության մտցրեք: Հասկացության ծեռքբերման մեթոդը հենվում է հարցադրման մեթոդի վիա՝ նոր գաղափարներ ներկայացնելու համար: Առաջարկեք տվյալ հասկացությունը պատկերող օրինակների եւ բացառությունների գույգեր, որոնք ցույց կտան դրա հիմնական բնորոշ առանձնահատկությունները կամ հատկանիշները: Մի գույգը ներկայացրեք սովորողներին եւ խնդրեք պարզել երկու ցուցակների մեջ առկա առանձնահատկությունները, նաև նորություններն ու տարբերությունները:


- Գաղափարն ամրապնդելու համար սովորողներին հանձնարարեք աշխատել գույգերով՝ տվյալ հասկացության մասին սեփական օրինակներն ու նկատված բացառությունները գրելու համար: Ռազմավարության այս փուլը նախաձեռնելու նպատակով սովորողներին մի շարք հնարավոր օրինակներ եւ բացառությունների մասին լրացուցիչ նյութ տվեք: Դրանք սահմանելուց հետո գույգը շարունակում է գրանցել սեփական օրինակներն ու բացառությունները: Այնուհետ համատեղ աշխատանքի արդյունքները ներկայացվում են ամբողջ լսարանին:

Ապա եւ քննարկվում են ընկերների կարծիքները:

- Ավարտուն վիճակում Ֆրայերի մոդելը սովորողների համար համակարգված տեղեկատվություն է ապահովում, որը կարող է հաջողությամբ կիրառվել գրավոր առաջարանքների կատարման ժամանակ, ինչպես նաև ծառայել որպես ուսումնասիրնան համառոտ ուղեցույց:

Առավելությունները

- Սովորողները, ելակետ ունենալով պարզ սահմանումներն ու գաղափարները, համալրում են դրանք առավել խոր ու բարդ հասկացություններով:
- Սովորողներին հանձնարարվում է տարբերակել գաղափարի կամ հասկացության առանձնահատկություններն այն հատկանիշներից, որոնք երբեմն գուգակցվում եւ գուգորդվում են դրան:
- Սովորողներն ընդգրկվում են որոնողական գործընթացում, որը գաղափարը կառուցելիս հնարավորություն է տալիս առնչվել առաջադիմական ավելի բնորոշ օրինակների, ինչպես նաև հաճախ հանդիպող շեղումների, բացառությունների կամ սխալ օրինակների հետ:



Գործնական գրություններ

Գործնական գրությունները կյանքում խիստ անհրաժեշտ են ու շատ կարևոր, ուստի և դրանց ուսուցմանը պետք է առանձնակի ուշադրություն դարձնել:

Այս նկատառումով «Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ» առարկայի նոր ծրագրում գրավորների այդ տեսակին պատշաճ տեղ է հատկացվել: Գործնական գրությունները որոշ առումով ինքնուրույն, ստեղծագործական տարր են պարունակում: Դիմում, ստացական, հաշիվ, տեղեկանք, արձանագրություն և այլ կարգի գրավորներ ձևակերպելու համար որոշ տվյալներ հաղորդվում են, սակայն գրողն ինքը դրանց հիման վրա և դրանց բովանդակությանը համապատասխան ինքնուրույնաբար է շարադրում իր մտքերը:

Գործնական գրություններն ել, ինչպես գրավորների մյուս տեսակները, բաժանվում են երկու խմբի՝ ուսուցողական և ստուգողական: Ուսուցողականի դեպքում ուսուցիչը նախ ինքն է կազմում գործնական գրություններ, ապա հանձնարարում աշակերտներին այդ նույնը կատարել ինքնուրույնաբար:

Գործնական գրություններն իրենց առանձնահատուկ ձևն ունեն, որով և տարրերվում են գրավորների մյուս տեսակներից: Այս կարգի գրավորներին հատուկ է սեղմությունը և փաստերի ճիշտ ձևակերպումը: Օրինակ՝ դիմումը, ստացականը, տեղեկանքը, հայտարարությունը և այլն պետք է ձևակերպվեն այնպես, ինչպես փաստերն են թելադրում:

Դիմում

Դիմումը բավական բարդ տիպի գործնական գրություն է: Այն որոշ չափով նման է փոխադրության: Այս դեպքում տրված են լինում փաստերը, մնում է, որ գրողն այն շարադրի այնպես, որ կարդացողը հասկանա, թե ով է դիմում, ինչի համար է դիմում և ինչ է ցանկանում: Դիմումը պետք է գրվի կոնկրետ փաստերի հիման վրա, լինի սեղմ, բայց բոլոր կարևոր հանգամանքները նշող: Սկզբում մի փոքր խորքից գրվում է այն կազմակերպության հասցեն և նրա ղեկավարի ազգանունն ու անունը, որին դիմում է քաղաքացին, նրանից ներքև և նրա համեմատությամբ՝ դարձյալ մի քիչ խորքից՝ դիմողի անունը, ազգանունը, հասցեն, հետո նոր տողի կենտրոնում՝ դիմում բառը, իսկ նոր տողից՝ մի փոքր խորքից, դիմումի բովանդակությունը: Վերջում գրվում է դիմում բառը, որին հարում է դիմողի ստորագրությունը: Այս բոլորից հետո գրվում է այն վայրի անունը, որտեղ գրված է դիմումը, ամսաթիվն ու տարեթիվը:

Դիմումը պաշտոնական փաստաթուղթ է, կցվում է համապատասխան գործին, ուստի նրա ձախ կողմում պետք է լուսանցք թողնվի: Դիմումը պետք է գրվի սեղմ և արտահայտի հիմնական ասելիքը:

Երևանի Բենիամին Ժամկոչյանի անվան
թիվ 119 միջն. դպրոցի տնօրեն
պարուն Շ. Կարապետյանին
«Կրթություն» շաբաթաթերթի
աշխատակցութիւն Լ. Մարգարյանից

Դիմում

Լրացել է որդուս՝ Գեղամ Յովհաննիսյանի 6 տարին: Խնդրում եմ ընդունել նրան Զեր դպրոցի առաջին դասարան:

20.08.2008թ

Դիմում՝ Լ. Մարգարյան

Ստացական

Մարդիկ մինյանց դրամ կամ իրեր տալիս են ստացականով, որն օրինական է համարվում այն դեպքում, եթե ստորագրված է լինում պարտավորվող անձի և կողմից:

Սովորողներին ստացական գրելը պետք է սովորեցնել նրանց ծանոթ, կոնկրետ օրինակների հիման վրա: Այստեղ դնում ենք ստացականի նմուշ, որ կարելի է օգտագործել սովորողներին գործնական գրության այդ ձևը սովորեցնելիս:

Ստացական

Յրացյա Աճառյանի անվան դպրոցի գրադարանավար Վարդուիի Նահապետյանից ստացա հետևյալ գրքերը՝ 7-րդ ա դասարանի «Դասարանական գրադարան» -ում օգտագործելու համար:

1. Խ. Աբովյան - «Պարապ վախտի խաղալիք»
2. Ղ. Աղայան - «Անահիտ»
3. Ռաֆֆի - «Սամվել»
4. Ջակոբ Պարոնյան - «Մեծապատիվ մուրացկանները»
5. Շիրվանզադե - «Նամուս»
6. Ջովիաննես Թումանյան - «Մարո»
7. Դիկենս - «Դավիթ Կոպերֆիլդ»:

Ընդամենը՝ յոթ անուն գիրք:

7-րդ ա դասարանի գրադարանավար՝ Մարիամ Յարությույան

15. 10. 2008թ.

Երևան

Հաշիվ

Հաշիվն իր բնույթով մոտ է ստացականին: Լինում են դեպքեր, երբ հիմնարկություններն ու ձեռնարկությունները իրեր են փոխադրել տալիս կամ որոշ մանր աշխատանքներ են հանձնարարում մասնավոր կարգով և դրանց դիմաց վճարումներ են կատարում: Դրամական հաշվետվության համար տվյալ հիմնարկության կամ ձեռնարկության պատասխանատու անձը դրամ ստացող քաղաքացուց հաշիվ է վերցնում: Հաշվի մեջ նշում է, թե ինչ գործի համար, որքան դրամ է ստացվել: Ստացողը հաշվի տակ ստորագրում է, գրում է իր անձնագրի համարը, ինչպես նաև հասցեն, իսկ վերջում նշում է ամսաթիվը, տարեթիվը և վայրը:

Հաշիվ

Երևանի թիվ 14 դպրոց մեկ դաշնամուր, Երկու գրապահարան, մեկ բազմոց և 19 աթոռ տեղափոխելու համար ստացանք 50.000 դրամ, որի համար ստորագրում ենք.

1. Աբովյան փողոցի թիվ 120 տան բնակիչ Վախթանգ Հայրապետյան (ստորագրություն)

Անձնագրի սերիան MТ, թիվ 13678, տրված է Երևանի Կենտրոն համայնքի ոստիկանության բաժանմունքի կողմից՝ 1996 թվականի սեպտեմբերի 17-ին:

2. Արցախի փողոցի թիվ 21 տան բնակիչ Տրդատ Ջովիաննիսյան (ստորագրություն)
- Անձնագրի սերիան MТ, թիվ 182542 տրված է Երեբունու համայնքի ոստիկանության բաժանմունքի կողմից 1996 թվականի հունվարի 14-ին:

19. 7. 2008թ.

Երևան

Տեղեկանք

Տեղեկանքը դասվում է պաշտոնական փաստաթղթերի շարքը: Տեղեկանքն այն պաշտոնական վավերագիրն է, որի միջոցով հավաստվում է որևէ անձի աշխատանքի տևողությունը, վայրը, տարիքը, բնակավայրը, ընտանիքի անդամների թիվը, ստացած գումարի չափը և այլ բազմաթիվ հարցեր: Տեղեկանքները լինում են ձեռագիր և տպագիր: Մեքենագիր կամ տպագիր տեղեկանքներն ունենում են կայուն ձև, նրանցում բաց են թողնվում միայն անվան, հայրանվան, ազգանվան և թվական տվյալների տեղերը, որոնք լրացվում են տեղեկանքը տվող անձի կողմից:

Տեղեկանք

(Շտամպի տեղ)

Հայկ Վարդանի Լևոնյանը 1997-98 ուսումնական տարում սովորել է Վանաձորի Յովիաննես Թումանյանի անվան միջնակարգ դպրոցի 7-րդ «բ» դասարանում մինչև 1998 թվականի դեկտեմբերի 5-ը և ընտանիքով այլ բնակավայր տեղափոխվելու պատճառով թողել է դպրոցը: Նրան են հանձնված իր անձնական գործը և առաջադիմության թերթիկը:

Տեղեկանքը տրվում է համապատասխան բնակավայրի դպրոցի տնօրինությանը ներկայացնելու համար:

Դպրոցի տնօրեն՝
Քարտուղար՝

(ստորագրություն) Ս. Կարապետյան
(ստորագրություն) Բ. Մարտիրոսյան

Կնիքի
տեղ՝

Ծանոթություն. - Ամսաթիվն ու տարեթիվը գտնվում են շտամպի վրա՝ համապատասխան տեղում:

Տեղեկանք

Երևանի Տիգրան Մեծ պողոտայի 6-րդ շենքի 5-րդ բնակարանի բնակիչ Գևորգ Թևոսյանն իր խնամքի տակ ունի երեք երեխա՝ Նունե, Յասմիկ, Եղիշե Թևոսյանները:

Տեղեկանքը տրվում է Վ. Տերյանի անվան թիվ 60 դպրոցի տնօրինությանը ներկայացնելու համար:

Տնային լիազոր

(ստորագրություն) Խ. Սարգսյան

Կնիքի տեղ
12. հոկտեմբերի 2008թ.
Երևան

Հայտարարություն

Ժողովներ իրավիրելու, զանազան միջոցառումներ անցկացնելու մասին մարդկանց իրազեկ պահելու, միջնակարգ մասնագիտական և արհեստագործական կրթօջախներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում, զանազան դասընթացներում սովորողներ ընդգրկելու, հիմնարկություններում,

ձեռնարկություններում մարդկանց աշխատանքի ընդունելու նպատակով տրվում են հայտարարություններ: Այսպիսի գրությունը վերնագրվում է հայտարարություն, որից ներքև գրվում է նրա բովանդակությունը, վերջում՝ հայտարարություն տվող կազմակերպության կամ անձի անունը, ինչպես նաև ամսաթիվն ու տարեթիվը և վայրի անունը:

Որոշ հայտարարություններ փակցվում են հիմնարկությունների, ձեռնարկությունների, փողոցների հարմար տեղերում, դրանց հատկացված տախտակներին, իսկ որոշ հայտարարություններ տպագրվում են թերթերում, շաբաթաթերթերում և ամսագրերում: Հայտարարության ձևը պարզ է և սովորեցնելու համար առանձին դժվարություն չի ներկայացնում: Սկզբում սովորողներին պետք է ցույց տալ հայտարարության որևէ նմուշ, ապա թեմաներ առաջադրել և պահանջել դրանց վերաբերյալ հայտարարություններ գրել:

Հայտարարություն

Այսօր՝ երեկոյան ժամը 6-ին, թիվ 6 միջն. դպրոցի դահլիճում կայանալու է ուսուցչական կոլեկտիվի և V-XI դասարանների բոլոր սովորողների համատեղ ընդհանուր ժողովը՝ նվիրված 2007-2008 ուսումնական տարվա արդյունքների ամփոփմանը: Բոլորի ներկայությունը պարտադիր է:

Թիվ 6 դպրոցի տնօրինություն

20 հունիսի 2008թ.
Երևան

Լիազորագիր

Մարդիկ իրենց բազմազան փոխհարաբերությունների ընթացքում միմյանց փոխարինաբար իրեր են հանձնում, ապահով գնումներ են կատարում կամ որևէ հասանելիք են ուզում ստանալ և այլն: Լինում են դեպքեր, երբ փոխհարաբերության մեջ մտած կողմերից մեկը բացակայում է և իր ստանալիքը հանձնարարում է վստահելի մի երրորդ անձի: Վճարողը կամ փոխատուն որպեսզի հավաստիանա կամ հետագայում թյուրիմացություններից խուսափի, լիազորված անձից պահանջում է հավաստագիր, որը կոչվում է լիազորագիր: Այն պետք է հաստատված լինի լիազորողին ճանաչող որևէ պաշտոնատար անձի կնիքով:

Լիազորագիր

Ես՝ Արտաշատավանի թիվ 2 ուսումնարանի սովորող Հասմիկ Դարբինյանս, լիազորում եմ ընկերոջ՝ Վահագն Արշակյանին, դպրոցի ուսումնարանի տնօրեն պարունակարանից ստանալու իմ փաստաթղթերը՝ ծննդյան վկայականը, ավարտական ատեստատը և այդ ուսումնարանում սովորելուս մասին տեղեկանքը:

Արտաշատավանի թիվ 2 ուսումնարանի սովորող՝
(ստորագրություն) Հասմիկ Դարբինյան

Հաստատում եմ Արտաշատավանի Գ. Նժդեհի անվան փողոցի թիվ 18 տան բնակիչ Հասմիկ Դարբինյան ստորագրությունը:

Թաղային լիազոր՝

(ստորագրություն) Ն. Գաբրիելյան

Կնիքի տեղ՝

21 օգոստոսի 2008թ.

Արտաշատավան

Հրավիրատոմս

Ինչպես դպրոցական, այնպես էլ հասարակական կյանքում և անհատ մարդկանց կենցաղում տեղի են ունենում զանազան դեպքեր, հավաքներ, հանդիսավոր ժողովներ, գրական - գեղարվեստական ցերեկույթներ, երեկույթներ, գրողների և արվեստագետների հոբեյաններ, հարսանիքներ, խնջույքներ և այլն, որոնց մասնակցելու համար հիավիրվում են քաղաքացիներ, հարազատներ ու բարեկամներ: Այսպիսի հրավերները կատարվում են գրավոր ձևով: Գրավորի այդ տեսակը կոչվում է Հրավիրատոմս:

Հրավիրատոմսներն ունենում են տարբեր ձևավորում և բովանդակություն. դա կախված է հրավերը կազմակերպողի ճաշակից և նպատակներից: Այսպիսով, հիավիրատոմսը փաստորեն մի փոքր շարադրություն է: Հրավիրատոմս բառը գրվում է որպես վերնագիր, ներքնում՝ հիավիրողի անուն ու ազգանունը, հետո՝ բովանդակությունը, ներքնում՝ հրավիրող կազմակերպության կամ անհատի անունը և հասցեն:

Հարգելի պարոն Լ. Արամյանին

2002 թվականի ապրիլի 10-ին, երեկոյան ժամը 5-ին Երևանի Պատամի հանդիսատեսի թատրոնի դահլիճում կայանալու է մայրաքաղաքի բոլոր դպրոցների աշակերտական գեղարվեստական ինքնագործ խմբերի ստուգատես:

Խնդրում ենք ներկա լինել:

Հասցեն՝ Մոսկովյան փողոց թիվ 18

Երևանի քաղաքապետարանի կրթության վարչության պետ Օ. Վաթյան
(պատասխանատու անձի ստորագրությունը)

Արձանագրություն թիվ 5

Աշտարակի թիվ 2 ուսումնարանի սովորողների ընդիանուր ժողովի. կայացած 2008 թվականի նոյեմբերի 10-ին: Ժողովին մասնակցում էին ուսումնարանի 156 սովորողներից 134-ը, ուսումնարանի տնօրեն պարոն Տ. Մակարյանը, ուսումնական մասի վարիչ պարոն Պ. Մարտիրոսյանը, քիմիայի ուսուցիչ, դասղեկ Դ. Սիմոնյանը, ուսուցիչներ Ա. Խաչատրյանը, Բ. Լևոնյանը, Գ. Ղանիելյանը, Խ. Երանոսյանը, Զ. Թադևոսյանը, Լ. Պետրոսյանը և ծնողական կոմիտեի անդամ Ս. Գևորգյանը:

1. Լսեցին. – 2007-2008 ուսումնական տարվա առաջին կիսամյակում երկրորդ կուրսի սովորողների առաջադիմության արդյունքները (գեկուցող՝ ուսմասվար Պ. Մարտիրոսյան):

Ըստ էռթյան արտահայտվեցին սովորողներ Վ. Մամիկոնյանը, Խ. Մաթևոսյանը, Ն. Շովիաննիսյանը, մաթեմատիկայի ուսուցիչ Բ. Լևոնյանը, ծնողական կոմիտեի ներկայացուցիչ Ս. Գևորգյանը և Լ. Պետրոսյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ կուրսում աշխատանքային կարգապահությունը բավարար է, անհարգելի բացակայությունները վերացված են, սովորողների մեծամասնությունը ուսումնարան է գալիս պատրաստ:

Ելույթ ունեցողները քննադատեցին սովորողներ Գ. Ավոյանին, Ս. Խալաթյանին, Պ. Լիպարիտյանին և Թ. Թումանյանին վատ աշխատելու, անկանոն հաճախելու, վատ գնահատականներ ունենալու համար:

1. Որոշեցին. - ա) Առաջին կիսամյակում վատ գնահատական ստացած սովորողներ
 - գ. Ավոյանին, Ս. Բարսեղյանին, Պ. Լիպարիտյանին և Թ. Թումանյանին կցել առաջա դեմ սովորողեր Կ. Խանթուրյանին, Բ. Նազարեթյանին, Ս. Գեղամյանին և Ֆ. Ոսկանյանին: Պարտավորեցնել կուրսի ավագին՝ օգնել դասղեկին կարգապահության պահպանման գործում:
 - թ) Կազմակերպել «շարժական գրադարան» և այնտեղ կենտրոնացնել դասագրքեր, օժանդակ գրականություն ու գննական պարագաներ,

որաբեսզի բոլոր սովորողները կարողանան օգտվել դրանցից: Խնդրել ուսումնարանի տնօրեն պարոն Տ. Մակարյանին՝ ուսումնարանի միջոցներով լրացնել կուրսի շարժական գրադարանի ֆոնդը:

2. Լսեցին. - Արտադրական էքսկուրսիա կազմակերպելու հարցը (գեկուցող քիմիայի ուսուցիչ Ա. Խաչատրյան):

2. Որոշեցին. – Կազմակերպել էքսկուրսիա Երևանի պատմության և Արմավիրի «Սարդարապատ» թանգարանները: Էքսկուրսիան կազմակերպված կերպով անցկացնելու համար ընտրվեց հանձնաժողով հետևյալ կազմով՝ դասղեկ Դ. Սիմանյան, կուրսի ավագ Կ. Անդրեասյան, հայոց պատմության և հայ գրականության ուսուցիչներ Ա. Խաչատրյան, Խ. Երանոսյան:

Ժողովի նախագահ՝
Քարտուղար՝

(Կ. Անդրեասյան)
(Պ. Վարդանյան)

Լեզվի դերը հասարակության և անհատի կյանքում

Լեզուն մարդու կենսագրծունեությունն ապահովող նախապայման ու միջոց է: Լեզվով են մարդիկ շփվում ու հաղորդակցվում շրջապատի հետ:

Լեզուն նաև մտածողության միջոց է, որով մարդը մտածում է, ընկալում, գրտելիքներ ձեռք բերում աշխարհի մասին: Ուստի անհրաժեշտ է լեզուն նախ և առաջ դիտարկել որպես լայն իմաստով իմացության՝ մտածողության, վերլուծության ու ընկալման, հետևաբար նաև մյուս ուսումնական առարկաների իմացության նախապայման և միջոց:

Բանավոր և գրավոր խոսքի մշակումը նպաստում է սովորողի ինքնարտահայտման, ինքնաճանաչման, ինքնակատարելագործման պահանջմունքների ձևավորմանը: Ահա թե ինչու լեզուներ ուսուցանելը միայն լեզվական կառուցյները, քերականությունը և բառերի ծիշտ գրությունը սովորեցնելու նպատակ չաետք է հետապնդի: Անհրաժեշտ է սովորողներին ընծեռել լեզվական գիտելիքներն իրական հաղորդակցական միջավայրում կիրառելու բազմազան հնարավորություններ:

Սովորողները պետք է ծանոթանան և ընթերցեն գրականության որոշակի ընտրանի, որը պետք է ներառի գրականության տարբեր ժանրեր, ինչպես նաև տարածություն ու ժամանակ չճանաչող համամարդկային թեմաներ ու գաղափարներ, խթանի սովորողների սերը ընթերցանության նկատմամբ:

Ըստ ծրագրային չափորոշիչների լեզուների ուսուցման գերխնդիր կարող են համարվել՝

- բանավոր խոսքի զարգացումը
- արդյունավետ հաղորդակցական կարողությունների և հմտությունների զարգացումը
- գրավոր խոսքի զարգացումը (գրելու տեխնիկան և մտքերը գրավոր արտահայտելը)
- արդյունավետ ընթերցանության կարողությունների և հմտությունների զարգացումը
- ճկուն լեզվամտածողության զարգացումը
- հաղորդակցության ըթնացքուն լեզվական միջոցների կառուցյների, լեզվական օրինաչափությունների և կանոնների գիտակցումը:

Մայրենի լեզուն հիմք է ծառայուն նաև այլ լեզուների յուրացման համար: Լեզուները ուսուցման և դասավանդման նպատակը անձի ձևավորման ու նրա ընդհանուր զարգացման մակարդակը հիմնավորապես բարձրացնելն է: Դրա նշանակությունն ավելի

կմեծանա, եթե նկատի ունենանք մեր ժամանակներում միջմշակութային կապերի ուժեղացման անհրաժեշտությունը:

Մայրենի լեզվով արդյունավետ հաղորդակցման առաջնահերթ խնդիրներից մեկը ժամանակակից մասնագիտական գրականության մեջ ներկայացված է ամենահակիրճ ձևով՝ կողմնորոշվել, թե ինչպես, երբ, ինչու, ում և ինչ առել կամ գրել: Սա նշանակում է, որ լեզվամշակութային ու հաղորդակցական նպատակների ձևավորման համար միայն ինչպեսը (քերականությունը) և ինը (բովանդակությունը) ամենահիմն բավարար չեն. թեև դրանք բանավոր եւ գրավոր խոսքի հիմքն են կազմում: Լեզվին՝ որպես հաղորդակցման միջոցի, տիրապետումը պահանջում է հաշվի առնել նաև երբ, որտեղ, ում և ինչու հարցերը:

Ուստի միտքը և խոսքային մտադրությունը պետք է արտահայտվեն կամ ընկալվեն՝ նկատի ունենալով տվյալ իրադրությունը (երբ, որտեղ), նպատակը (ինչու), հաղորդակցվող անձ (ով-ում), որոնք կոնկրետ սոցիալական դերերի կրողներն են: Այսինքն միևնույն լեզվական միջոցներով հնարավոր չէ դիմել հարազատին, ընկերոջը, պաշտոնական անձին, ուսուցչին, տնօրենին և այլն: Յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է համապատասխան լեզվական հատուկ միջոցներ: Ընդ որում «խոսել - լսել, գրել – կարդալ»-ը հաղորդակցության դրսնորման տարբեր տեսակներ են, որոնք կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ բանավոր և գրավոր: Մարդիկ գրուցում, հաղորդակցվում են միմյանց հետ՝ միանգամայն որոշակի նպատակով՝ ողջունել, հարցնել, հաղորդել, իմանալ, ծշել, պարզաբանել, ինչ-որ բան հաստատել, հերքել, շնորհավորել և այլն: Հացորդակցման այս նպատակն էլ հենց կոչվում է հաղորդակցման խնդիր:

Հաղորդակցության հիմք ստեղծելուց բացի լեզվի յուրացման ընթացքում պետք է իրականացնել նաև սովորողի ընդհանուր զարգացումը, ճանաչողական նպատակների կիրառումը, ինչպես նաև միջառարկայական կապերի ամրապնդումը: Չե՞ որ սովորող մայրենի և օտար լեզուների միջոցով է տեղեկություններ ստանում գրականությունից, աշխարհագրությունից, պատմությունից և այլն: Անհրաժեշտ է դասերը կազմակերպել սովորողականտրոն ուսուցման սկզբունքներով, այսինքն՝ ապահովել սովորողների ակտիվությունը, նպաստել, որ նրանք դառնան ուսումնառության գործընթացի մասնակից և որոշումներ կայացնող, կարողանան ստանձնել սեփական ուսումնառության պատասխանատվությունը, իսկ ուսուցիչը պետք է դառնա աջակից և խորհրդատու: Անփոփելով վերը շարադրվածը՝ հարկ է նշել, որ ուսուցման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել՝

- «Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ» առարկայի ծրագրային պահանջները և կրթական չափորոշիչները
- սովորողների հետաքրքրությունները, հակումները, շահագրգովածությունները
- սովորողների անհատական առանձնահատկությունները, ինչի վրա կիմնվի նրանց նկատմանը տարբերակված մոտեցումը:

Կարևոր է նաև, որ սովորողը ոչ միայն իմանա սովորել, այլև իմքն իրեն գնահատի, գիտակից իր լեզվական փորձը, հաղորդակցման անհրաժեշտությունը, համագործակցի ընկերների հետ:

Ինտեգրված թեմատիկ միավորները մշակելիս պետք է բացահայտել հարակից առարկաների ինտեգրման հնարավորությունները, ընդգծել լեզվի դերը՝ որպես սոցիալական փորձի, մշակույթի, տեղեկատվության, գիտելիքների ընկալման միջոց: Հաշվի են առնվորմ նաև սովորողների հետաքրքրություններն ու տարիքային աճանձնահատկությունները, ուստի կարծում ենք, որ դասերի բովանդակությունը կխթանի սովորելու ցանկությունը, կօգնի ստեղծագործական ու երևակայական մտքի զարգացմանը, կզարգացնի ընդհանուր առմանը խոսքային գործունեությունը:

Սովորող պետք է

1. Արդյունավետ հաղորդակցվելու հմտություններ դրսնորի և կարողանա

- ընտրել հաղորդակցության ռազմավարությունը՝ Սահմանել հաղորդակցական նպատակը խոսքը օգտագործել տարբեր նպատակների համար (տեղեկացնել, գվարճացնել, շնորհավորել, համոզել, մխիթարել, արդարանալ և այլն)
- Ընտրել հաղորդակցաման իրավիճակին համապատասխան լեզվաօճական միջոցներ
- Դրսևորել տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու կարողություն՝ հաշվի առնելով հասցեատիրոջը
- իրավիճակին համապատասխան փոխել ու հարմարեցնել խոսքը
- խոսակցություն վարել, զրուցել հասակակիցների և մեծերի հետ
- ակտիվորեն լսել (նայելով խոսողի աչքերին, հարցեր տալով և վերածնակերպելով լսածը)
- խոսքի ժամանակ ճիշտ օգտագործել դիմախաղը, շարժուձևը (ժեստը) ժամանակը դրանց իմաստը
- կիրառել բարեկիրթ խոսքի ընդունված լեզվական միջոցներն ու կառույցները, որոնք անհրաժեշտ են հաղորդակցական առօրյա իրավիճակներում և խոսքային ժամրերը:

2. Բանավոր խոսքի համապատասխան հմտություններ դրսևորել և կարողանալ
 - արտահայտել բանավոր մտքեր ու գաղափարներ, ստեղծել կապակցված բանավոր խոսք
 - ճիշտ կառուցել խոսքը, լեզվի օրինաչափությունների հիման վրա
 - խոսել՝ հետևելով խոսքի արտասանական նորմերին
 - հաջորդաբար ներկայացնել մտքերը, կարողանալ ընդգծել ասելիքի կարևոր կետերը
 - բանավոր տեղեկություններ փոխանակել
 - բանավոր կարծ ելույթ ունենալ, պատմություններ հորինել կամ պատմել իր առօրյայից
 - հարցեր տալ և պատասխանել իրեն տրված հարցերին
 - իմանալ և հետևել զրուցի կանոններին
 - մասնակցել բանավոր իրադրային և դերային խաղերին
 - ակտիվ և ներգրավված ունկնդրի կարողություններ դրսևորել
 - լսել ու ընկալել ականավոր մարդկանց խոսքի իմաստն ու կառուցվածքը
 - վերափոխել բանավոր լսած տեղեկությունները
3. Գրելու, գրավոր խոսքի համապատասխան կարողություններ ու հմտություններ դրսևորել, կարողանալ
 - ստեղծել կապակցված գրավոր խոսք
 - պլանավորել, գրել, ծևավորել, խմբագրել իր գրածը
 - գրելուց առաջ գտնել գաղափարը, ասելիքը
 - մշակել գրելու պլանը
 - կենտրոնանալ հիմնական գաղափարի վրա
 - խմբավորել փոխկապակցված գաղափարները
 - նյութը շարադրել այնպես, որ այն ունենա սկիզբ, ընթացք, ավարտ
 - ներառել հիմնական գաղափարը զարգացնող նկարագրական մանրամասներ
 - վերանայել, խմբագրել գրածը՝ տրամաբանության և պարզության տեսակետից
 - ստուգել վերջնական տարբերակը՝ քերականության և ուղղագրության տեսակետից
 - գրել ոչ միայն գեղարվեստական (հեքիաթ, պատմվածք), այլ նաև գործնական, նկարագրական տեքստեր (նամակ, շնորհավորանք, հրավերք, պարզ

բացատրություն, կարծ հաշվետվություն, դասարանական թերթի հոդված և այլն)

4. Ընթերցանության համապատասխան կարողությունները ու հմտությունները դրսևորել, կարողանալ
- կարդալ և ըմբռնել տեքստի իմաստը
 - ընթերցելապահպանելով կարդալու որակական հատկանիշները
 - ընթերցելիս օգտագործել բնագրի կազմակերպական (խմբավորում, դասակարգում, ձևավորում) միջոցները, (բովանդակությունը, վերնագրերը, տառատեսակները, գծագրերը, նկարները), որոնք կարողն են հուշել տեքստի իմաստը, օգնել կանխագուշակել, նախնական պատկերացում կազմել
 - ինքնուրույն հետաքրքրող տեղեկություններ որոնել և գտնել իրեն մատչելի տարբեր աղբյուրներից
 - ընթերցանության ընթացքում բարիմաստի բացահայտման որոշակի ռազմավարություններ կիրառել՝
 - բարի նշանակությունը հասկանալ համատեքստում
 - գուշակել բարի իմաստը՝ բառակազմության վերլուծության օգնությամբ
 - օգտվել բառարաններից, հանրագիտարարանից
 - կազմել անձնական բառարան
 - ակտիվ ընթերցանության կարողություններ և հմտություններ դրսևորել
 - սահմանել կարդալու նպատակը
 - կապ հաստատել իր նախկին փորձի և ընկալվող նյութի միջև
 - տեքստում գտնել առանցքային (բանալի) բառերն ու հասկացությունները
 - կանխատեսումներ կատարել, ապա հաստատել կամ վերանայել դրանք
 - հարցեր տալ և պատասխանները գրել տեքստում
 - համեմատել և հակադրել կերպարները, փաստերը, երևույթները, իրադարձությունները
 - տրամաբանորեն կազմակերպել (դասակարգել, դասավորել) տեղեկատվությունը կամ իրադարձությունները
 - պատմել կամ գրել կարդացածի մասին՝ ընդգծելով կարևոր գաղափարները
 - ունեցած տեղեկատվության հիման վրա եզրակացություններ անել
 - ստացած տեղեկություններն օգտագործել նոր նյութը, թեմաները յուրացնելիս

Ուսումնառության արդյունքները

Սովորողները իրենց լեզվական կարողությունների, հմտությունների և խոսքի տրամաբանական զարգացման շնորհիվ առավել արդյունավետ են յուրացնում այլ առարկաների ուսումնական նյութը:

Սովորողները

- ձեռք են բերում որոշակի կարողություններ և հմտություններ
- տիրապետում են բարեկիրթ խոսքի և վարքի մի շարք կանոնների
- զարգացնում են ընթերցանության կարողություններն ու հմտությունները
- կարողանում են ընկալել տեքստի իմաստը, գլխավոր գաղափարը և իրենց վերաբերմունքն ու կարծիքը հայտնել դրա մասին
- սովորում են պատմություններ հորինել՝ պահպանելով անհրաժեշտ տրամաբանական կառույցը
- սովորում են բանագր և գրավոր պատմել սեփական առօրյայի, կենսափորձի մասին
- սովորում են օգտվել տեղեկատվության տարբեր աղբյուրներից:

Խորհուրդներ ուսուցչին

Ուսուցչի դերը: Յայ ժողովրդի առաջ իր մեծ ու պատասխանատու պարտքը կատարելու, նրա անցյալ, ներկա ու ապագա սերունդների միջև կենդանի կապ ստեղծելու յուրօրինակ առաքելություն ունի հայոց լեզվի և գրականության ուսուցիչը: Մեր բազմադարյան պատմության, բանահյուսության և գրականության հորդաբուխ ակունքներից նա կարող է անքանակ օրինակներ քաղել իր սաներին հայեցի դաստիարակելու, ոգեղեն սնունդ տալու, անհրաժեշտ գիտելիքների պաշարով գինելու և նրա ներաշխարհի հուգական լարերի վրա դրականորոն ներազդելու համար:

Անառարկելի է և անուրանալի, որ սերունդների կրթության ու դաստիարակության գործում ուսուցիչը զբաղեցնում է ամենակարևոր և առաջնակարդ տեղը: Չէ՞որ նա է հետևողականորեն ու համբերատարությամբ կաթիլ առ կաթիլ զարգացնում աշակերտների մտածողությունը, օգնում նրանց՝ գիտելիքներ ձեռք բերելու և գործնականում կիրառելու, նպաստում սովորողների աշխարհայացքի, բարոյական ընթացակարգությանը, կրթում ճաշակ:

Իսկ այս ամենը ուսուցիչը կարող է իրականացնել միայն իր կոչմանը անսահման նվիրվածությամբ, ժամանակի, հանգստի, նյութական ներդրումների, նպատակին հասնելու համառության գնով:

Բնականաբար առավել արդյունավետ է լինում ուսուցչի աշխատանքը, եթե նա բացի աշխատասիրությունից, գիտելիքների հարուստ ու բազմակողմանի պաշարից, նրանկատությունից ու դիտողականությունից, բնությունից օժտված է և գեղեցիկ ասմունքելու, երգելու, նկարելու կարողություններով:

Յայոց լեզվի և գրականության գաղտնիքներին խորանուխ է դարձնում իր սաներին և իր առջև ծառացած պատվավոր, դժվարին խնդիրներն իրագործելու համար լավ ուսուցիչը աշխատում է յուրաքանչյուր դաս դարձնել տեսանելի, լսելի, հուզիչ և առավել ընկալելի: Իսկ այս ամենին հասնելուն ուսուցչին օգնում է գործինացորոն ու նպատակային ծևով, ժամանակակից դասի պահանջներին համապատասխան կահավորված հարուստ ու բովանդակալից լսարան: Իր գերագույն նպատակը՝ այն է՝ սաներին բազմակողմանի, հայեցի դաստիարակելու և մայրենի լեզվի և գրականության մասին արվեստաշաղախ գիտելիքներ հաղորդելու գործը իրականացնելու համար ուսուցիչը հայոց լեզվի և գրականության լսարանը պետք է դարձնի մի այնպիսի կենտրոն, որը հոգևոր անսպառ սնունդ տալու հնարավորություն ունենա իր դեռահաս սաներին, կարողանա օգնել նրանց՝ ճանաչելու վեհն ու գեղեցիկը, նսեմն ու անմարդկայինը, աննշնարն ու կատարյալը: Ունակ լինի զարգացնելու նրանց միտքը, վարժեցնելու հետազոտական, գործնական աշխատանքի, դարձնի նրանց խելացի ու բարի, մեր ժողովրդի ավանդական վարքութարքին հավատարին, ազգային արժանապատվությամբ օժտված, իսկական հայրենասեր, ծշմարիտ մարդասեր, սեփական խողի ու հարազատ ժողովրդի, մարդկության առաջ հաշվետու, ապագա հասարակության մեջ իրենց սեփական դիրքորոշումն ունեցող մարդիկ:

Նման լսարանում սովորողները լայն հնարավորություններ ունեն՝ հաղորդակցվելու արվեստներին և, հատկապես, խորանալու խոսքի արվեստի բազմաբովանդակ աշխարհի մեջ, վայելելու նրա անկրկնելի հնայքը: Այդպիսի լսարանը դարնում է ուսուցչի կողմից ասես աննկատ իրահրվող, միտումնավոր կերպով բորբոքվող գրական աշխահին, հեղինակին, իրական կյանքին վերաբերող բուռն բանավեճերին, իրենց ինքնությունը և վերաբերմունքը, աշխարհայացքը հաստատել ձգտող պատանի սրտերի հավաքատեղի: Ուսուցչի օգնությամբ այստեղ են վերջնական տեսքի բերվում, ծշտվում տարաբնույթ միջոցառումների ծրագրեր, ելույթներ, խնբագրվում պատի թերթեր, ստեղծվում բազմաթիվ ալբոմներ, ալմանախներ, նյութեր, հոդվածներ, գրական թոթովանքներ: Այստեղ է, որ կրթօջախի յուրաքանչյուր սովորող բազմաթիվ բառարաններից, տեղեկատուններից կարող է իմանալ իրեն հետաքրքրող բարի ծագումնաբանությունը, բացատրությունը, ստանալ լրացուցիչ տեղեկություններ ծրագրային հեղինակների, նրանց ստեղծագործությունների մասին:

Սի խոսքով, ուսուցչի հետևողական, սրտացավ ջանքերով կրթօջախում պետք է ստեղծվի հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների լսարան – կարինետ, որը յուրօրինակ գրական ընթերցարահի, ցուցադրադահիճի, ձայնադարանի, կերպարվեստի բազմաթիվ վերատպությունների, ուսուցչի և աշակերտների ինքնաշեն նյութերի ցուցարահի համալիր կենտրոն դառնա:

Լսարան – կարինետի կահավորումը: «Յայոց լեզու և խոսքի մշակույթի հիմունքներ» առարկայի լսարան – կարինետում այսօրվա պահանջներին համապատասխան պետք է ունենալ՝

- **տեխնիկական միջոցներ** – համակարգիչ՝ միացված համացանցին, տեսաձայնարկիչ, հեռուստացույց, էկրան, ցուցադրական այլևայլ սարքեր:

- **տեխնիկական ուսումնաօժանդակ նյութեր** – տեսա և ձայնախտասկավառակներ, տեսապատկերներ (սլայդ), գծակարգեր

- **գրադարան** -գեղարվեստական ծրագրային գրականություն, լրացուցիչ ընթերցանության նյութեր, մեթոդամանկավարժական, լեզվաբանական, գրականագիտական գրականություն, բառարաններ, տեղեկատուններ, հանրագիտարաններ, հուշապատում, մասնագիտական ամսագրեր ու թերթեր, տարբեր մատենաշարեր՝ «Սշանավոր նարդկանց նասին», «Յայ դասական գրողներ», «Պատկերազարդ հայ գրականություն», «Յայոց լեզուն գծակարգերում», «Պատկերազարդ հայոց լեզու», 8«Գրականության ուսուցման մեթոդիկա», զանազան բնույթի դիտապատառներ:

- **ձայնագրություններ** - արտասանում է հեղինակը շարքից՝ Ա. Իսահակյան, Յովի. Շիրազ, Պ. Սեւակ, Յ. Սահյան, Գ. Էմին, Ռ. Դավոյան եւ այլն:

- **նպատակային հեռուստահաղորդումների ձայնագրություններ** – (ձայնագրությունները կարող են կատարած լինեն թե ինքը՝ ուսուցիչը, թե՝ աշակերտները, որոնցից լավագույնները տեղ են գտնում կարինետի ձայնադարանում):

- **կերպարվեստի ստեղծագործությունների վերատպություններ** - Յովիկաննես Այվազովսկի, Գետրոց Բաշինջայան, Էդուարդ Խաբեկյան, Յրաչյա Ռուխկյան, Միեր Աբեղյան, Մարտիրոս Սարյան, Յակոբ Կոջոյան, Գրիգոր Խանջյան, Դմիտրի Նալբանդյան: Յայ դասական գրողների դիմանկարների հավաքածու եւ այլնե:

- **քարտեզներ** - աշխարհի, ԱՊՀ երկրների, ՀՀ եւ Արցախի, Յայաստանի պատմական քարտեզներ եւ այլն:

- **տպագրական հիմքով (պետական)** ուղղագրական եւ ուղղախոսական պլակատներ, քերականական գծակարգեր, ինքնաշեն ուսումնադիտողական նյութեր:

- **վահանակներ, ցուցապատառներ** - «Այսօր դասին», «Գործնական գրություններ», «Ծանուցվում է» «Բանք Մեծաց», «Յետաքրքրաշարժ Յայոց լեզու», «Անադարտ պահենք մայրենի լեզուն», «Դասը վարում է հեղինակը»:

- **պատի թերթեր** - Երկրի պատմության կարեւորագույն իրադարձությունների դեպքերի նշանավոր տարելիցների առթիվ հրատարակված թերթեր, տարբեր տարիների ստեղծած թերթերի հոդվածների հավաքածուներ եւ այլն:

- **բանահյուսական նմուշներ** – Յանելուկներ, առածներ, ասացվածքներ, թեւավոր խոսքեր, աֆորիզմներ:

Բացի նշվածներից կարինետում պետք է լինեն նաեւ տարբեր տարիների հրատարակությունների քրեստոնատյաններ, հայերենագիտական լեզվաբանական, գրականագիտական, ուղղախոսական – ուղղախոսական, բացարական, հոմանիշների, հականիշների, աշխարհագրական, պատմական, բուսաբանական, պոլիտեխնիկական, աշխատանքային ուսուցման, կենսագրական, հայ-ռուսերեն, ռուս-հայերեն եւ այլ բնույթի բառարաններ:

Եղած ուսումնամեթոդական նյութը ոչ թե պատահաբար պետք է դարձվի այսուայնտեղ, այլ դասդասվի հատուկ համակարգումով: Դրանք պետք է տեղաբաշխվեն ճաշակով վերնագրված պահարանների առանձին բաժաննունքներում: Բաշխիչ նյութերը, որոնք պետք է ամրացված լինեն ստվարաթղթերի վրա, պետք է քարտավորվեն ըստ

սովորողների կուրսերի եւ ծրագրային թեմաների հատուկ բաժանարարների միջոցով: Նյութերի յուրաքանչյուր հավաքածու պետք է համարակալվի եւ պահպի համապատասխան թղթապանակներում: Համարակալված եւ թվարկված պետք է լինեն նաեւ պետական եւ ինքնաշեն պաստառները, գծագրերը, այցուսակները: Փորձառու ուսուցիչը պետք է ամընդհատ համալրի իր կարինետը նորանոր նյութերով: Սովորողները եւս պետք է մասնակցեն իրենց ընդհանուր կարինետ - զինանոցի հարստացմանը: Համատեղ ուժերով՝ ծնողների, հասարակայնության, հովանավորների պետք է բազմապատկվեն սովորողների իմացության աղբյուրները եւ դրանք գործածվեն տարբեր դասերի ընթացքում՝ նպաստելով սովորողների ավելի բազմակողմանի եւ խոր գիտելիքների ձեռք բերման:

Դասավանդման ավանդական մեթոդները

Համբահայտ է, որ ուսուցման մեթոդները բաժանվում են երեք գլխավոր խմբերի՝ խոսքային մեթոդներ, զննական մեթոդներ և գործնական մեթոդներ:

Դասի բացատրում-մեկնաբանում-պարզաբանումը, պատմումը, դասախոսությունը, ընթերցումը, հարցուապատասխանը, դասագրքի զանազան պահանջների, առաջադրանքների կատարումը մտնում են այս դասակարգման առաջին խմբի մեջ: Երկրորդ՝ զննական մեթոդների խմբի մեջ են մտնում զննական այլևայլ պարագաների, համակարգիչների, նկարների, սլայդների, կինոֆիլմերի, մակետների, ալբոմների, գծակարգերի, առյուսակների ցուցադրումն ու դիտումը: Երրորդ խմբի մեջ են մտնում վարժությունների կատարումը, գծապատկերների և այյուսակների կազմումը, քերականական և գրականագիտական (ծրագրերի սահմաններում) կոնկրետ հանձնարարությունների կատարումը, քարտաշարերի ստեղծումը, ուսումնասիրվող ստեղծագործության նկարազարդումը և այլն:

Գրականության ուսուցման ընթացքում, հատկապես նոր նյութի հաղորդման ժամանակ, կարևոր տեղ է գրավում խոսքային մեթոդի պատմողական եղանակը: Ժամանակակից դասերի մեջ իր արժանի տեղն ունի և նոր նյութի հաղորդման՝ դասդասախոսության տեսակը, որը եականորեն տարբերվում է բուհական դասախոսությունից: Այն անցկացվում է հատկապես ակնարկային թեմաները, գրողի ստեղծագործությունը սովորողներին ներկայացնելիս, տեղին, ժամանակին և ուսուցման երեք գլխավոր խմբերի համադրումով ասելիքը առավել գրավիչ ու հետաքրքիր դարձրած հնար-եղանակներով, տեխնիջոցների կիրառմամբ:

Տեխնիջոցների օգտագործումը

Ուսուցչի հարուստ զինանոցի անբաժան մասն են կազմում էկրանային միջոցները, որոնք նրա մշտական «օգնականներն» են դասն առավել գործնական դարձնելու ճանապարհին: Նախօրոք նախապատրաստած նյութերը էկրանային միջոցներով ցուցադրելը և դրանցով աշխատանքները տանելը ունեն մի շարք առավելություններ, նախ՝ որ մատուցվող նյութը դարձնում են ավելի ակնառու և տեսանելի բոլոր սովորողների համար, թույլ են տալիս ունենալ ժամանակի բավականաչափ խնայողություն (գրատախտակին երկար-բարակ գրելու փոխարեն վայրկենաբար ցուցադրվում է մի ամբողջական բնագիր, հատված, գծապատկեր, այյուսակ, ասույթ և այլն):

Օրինակ՝ «Հասկացություն տաղաչափության մասին» և «Չարենցի պոեզիայի տաղաչափական առանձնահատկությունները» թեմաները բացատրելիս ու խորացնելիս էկրանավորում են հատվածներ հայ պոեզիայի ընտիր նմուշներից և աշակերտների հետ միասին կատարում գործնական աշխատանքներ՝ հաշվելով տրված բանաստեղծությունների ուժքերը, որոշում տեսակները:

Մեծ հաջողությամբ է կիրառվում էպիդասկոպը գրական թեմայի հետ կապված այս կամ այն դիմանկարը ցուցադրելիս և օգնում «կարդալու» որևէ նկարչի կտավ:

Օրինակ՝ Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգությունն ուսումնասիրելիս, Արայի և Շամիրամի կերպարները բնութագրելու ժամանակ ուսուցիչը էպիդասկոպով ցուցադրում է Վարդգես Սուրենյանի «Շամիրամը Արա Գեղեցիկի դիակի մոտ» հանրահայտ կտավը՝ վերատպությունից մի քանի անգամ մեծադիր: Սովորողների ուշադրությունը գամուն է պատկերին և պարզ ու անկաշկանդ գրույց է Վարում ոչ միայն հետևելով սովորողների հայտնած մտքերի ու փաստերի ճշտությանը, այլև աննկատ, օգնելով նրանց խոսքի կառուցման հմտության զարգացմանը, նպաստում է բառապաշտի հարստացմար, ապահովում միջառարկայական կապը կերպարվեստի հետ: Իսկ հայ գրականությունը դրա համար տալիս է մեծագույն հնարավորություններ:

Այսօր անհնար է պատկերացնել «Թումանյան» թեման առանց Դմիտրի Նալբանդյանի «Վերնատուն», Դ. Ղեմիրճյանի «Վարդանանք» վեպն անցնելիս Գրիգոր Խանջյանի «Վարդանանք» կտավների վերատպությունների ցուցադրման և սովորողների ուշադրությունը դրանց արտահայտած տրամադրության, գունային երանգների, գաղափարական բովանդակության վրա հիավիրելու: Կամ՝ «Սասունցի Դավիթ» էպոս ուսումնասիրելիս մի թե հնարավոր է ցցուցադրել Երվանդ Քոչարի «Սասունցի Դավիթ» նշանավոր քանդակի նկարը՝ անհրաժեշտ մեկնաբանություններով:

Գրականության նկատմամբ սերն ավելի է խորացնում և սովորողներին կապում պոեզիայի հետ «Լավագույն ասմունքող» մրցույթի անցկացումը: Մրցույթը շահած սովորողների կատարումը ձայնագրվում է և պահվում կարինետի ձայնադրամում: Տարիների ընթացքում կուտակվում է բավականաչափ նյութ, որն ուսուցիչը կարող է հաջողությամբ օգտագործել հետագա տարիների դասերի ընթացքում: Իսկ թե որքան հուզիչ է և ինչ ազդեցություն կարող է ունենալ ասմունքի մեծ վարպետների կատարումները, ընթերցումները, մեկնաբանելու հարկ չկա:

Փորձառու ուսուցիչը տարիներ շարունակ հարստացնում է իր կարինետի ձայնադրամները հայ նշանավոր դերասանների ասմունքի նորանոր ձայնագրություններով և դրանք օգտագործում որպես դասի մուտք՝ սովորողներին ասմունքի գաղտնիքներին ու տեխնիկային գործնականում ծանոթացնելու, գեղարվեստական արտահայտչամիջոցների և հնչերանգի շուրջ վարժություններ կատարելու ընթացքում: Մեծերին հաղորդակցվելու, նրանց կենդանի ձայնն ունկնդրելու միջոց են և հայ գրողների՝ իրենց իսկ ստեղծագործությունների ընթերցումների ձայնագրությունները:

Բոլոր սովորողներն էլ այսօր ակնածանքով, ներքին սրբազն հոգեկան դողով են լսում Ավետիք Խահակյանին, Յովհաննես Շիրազին, Պարույր Սևակին, Նաիրի Զարյանին, Գեղամ Սարյանին և հաճույքով՝ ժամանակակից արձակագիրներին ու բանաստեղծներին:

«Տերյան» թեման ուսումնասիրելիս ունկնդրում են Սուսաննա Գաբրիելյանին: Իսկ մեր բանաստեղծներին, սկսած մեծն Նարեկացուց, ուսուցիչը ծանոթացնում է առաջին հերթին նրանց գրական տեքստերով գրված գոլտրիկ երաժշտական գործերով: Տեղին է հիշեցնել, թե ինչ ազդեցություն է գործում երաժշտությունը մարդու վրա և ինչպես կարող է վերափոխել նրան: Իզուր չէ, որ փորձառու ուսուցիչը «Սայաթ-Նովա» թեմայի շուրջ գրավոր աշխատանքների ընթացքում գրատախտակին գետեղում է Ռուսկյանի հանրահայտ «Սայաթ-Նովա» դիմանկարը, մեղմորեն միացնում նրա երգերի լավագույն կատարումները՝ դրանով լսարանում ստեղծելով քնարական մթնոլորտ: Նույնանման հնարը հաջողությամբ է կիրառվում և Թումանյան, Խահակյան, Տերյան, Զարենց և այլ թեմաներն անցնելիս:

Մշտապես կատարվող նման աշխատանքը սովորողների համար դառնում է սովորական, ոչ արտառոց, և նրանք առավել արդյունավետ են աշխատում:

Ի դեպ, հայոց լեզվի և գրականության ուսուցիչը բազմիցս առիթ է ունենում խոսելու Մեսրոպ Մաշտոցի, նրա ստեղծած հայոց այբուբենի նասին: Տեղին է հիշեցնել, որ շատերը չգիտեն հայ մեծ երախտավորի հանրահայտ, այսօր մեր դասագրքերում գետեղված դիմանկարի հեղինակի անունը: Ուսուցիչը սովորողներին ցուցադրում է դիմանկարի գունավոր վերատպությունը էպիդասկոպի օգնությամբ և հայտնում, որ դիմանկարը նկարել է Ստեփանոս Ներսիսյանը շուրջ հարյուր տարի առաջ: Այն

լավագույնն է ճանաչվել մրցույթում, և այսօր յուրաքանչյուր նկարիչ ակամա աշխատում է մեծ մարդուն պատկերելիս հարազատ մնալ ներսիսյանական դիմանկարի բնօրինակին: Նման միջոցներն ապահովում են դասի հետաքրքրությունը, լրացուցիչ գիտելիքներ հաղորդում սովորողներին, դասերը դարձնում գրավիչ:

Գրականության դասերն, անշուշտ, շահում են, երբ ուսուցիչը կենսագրությունն ուսումնասիրելու նախօրյակին գրականության նկատմամբ հակում ունեցող սովորողներին նա հանձնարարում է ուսումնասիրել նշված գրողների կենսագրությունը առանձին-առանձին՝ ըստ Յայկական հանրագիտարանի, Գառնիկ Ստեփանյանի «Կենսագրական բառարանի», Ռուբեն Զարյանի «Հուշապատումի» և, երբ ներկայացնում է գրողի կենսագրությունը խոսքը կառուցում է այնպես, որ անհրաժեշտ տեղում խոսքը տա սովորողներին: Նման հնարի կիրառությունը խոսքը դարձնում է անկաշկանդ ու համարձակ: Մյուս սովորողները ձգտում են հաջորդ անգամ հանդես գալ ուսուցիչ հետ: Զգում են, որ իրենց ելույթ ունեցող ընկերներն ավելի շատ ու հետաքրքիր տեղեկություններ գիտեն, քան իրենք, ներքին մղում են զգում, որ իրենք ևս իմանան, անգամ հաղթահարեն որոշ դժվարություններ:

Գործնական, հետազոտական աշխատանքի ձև է սովորողներին որևէ գրողի մասին պատի թերթ հրատարակելու կամ ալբոն պատրաստելու խմբակային հանձնարարություն տալը: Թեման ամփոփելիս 3-4 սովորող ներկայացնում են մի պատի թերթ կամ ալբոն, որը պատրաստել են ըստ նախօրոք տրված հանձնարարությունների և խորհուրդների (թերթի չափի, ընդգրկելիք նյութի, ձևավորման, նկարագրման վերաբերյալ): Ընդ որում, դրանք լայն ու անկեղծ քննարկման և գնահատականի են արժանանում դասընկերների կողմից: Արդյունքներն ամփոփում է ուսուցիչը, կատարում անհրաժեշտ շտկումներ, տալիս նոր ցուցումներ: Միասին կատարած աշխատանքը միևնույն դասարանի սովորողների միջև առաջացնում է ազնիվ մրցակցություն, ընդհանուր գործում իր մասը ունենալու ցանկություն:

Գաղտնիք չէ, որ մինչև սովորողն ամենայն լրջությամբ չընթերցի գրական երկը, չկատարի համապատասխան աշխատանք, անհնար է անցկացնել գրականության ընտիր դաս: Փորձառու ուսուցչը սովորողին սովորեցնում է, վարժեցնում է դրան իր դասերի ընթացքում՝ նպատակային ու հետևողական աշխատանքներ տանելով դասարանում դասագրքերի կամ քրեստոնատյաների, բնագրի բովանդակության շուրջ:

Գրականության դասը հետազոտական, գործնական աշխատանքի վերածող ուսուցչի հաջողություններն ակնբախ են: Նախօրոք ընտրված հատվածների ընթերցուր, դրանց ըստ ամենայնի վերլությունները մի անգամ ևս ընդգծում են ստեղծագործության արժանիքները, ցույց տալիս նրա տեղը մեր գրականության մեջ, շարժում սովորողների հետաքրքրությունը երկի նկատմամբ, հուզում նրանց սրտերը: Ո՞ր մի տասներորդին անտարբերությամբ կլսի Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» վեպից հայոց այրուձիի տունդարձի նկարագրությունը, վիրավոր ռազմիկի սրտառուց կարոտի, մորմորի տողերը:

Սովորողները, ըստ ուսուցչի հանձնարարաւոյքնա, տանը կազմում են վեպի կերպարների «պատկերաբան», փորձում են իրենց ամբողջական տպավորությունը տվյալ կերպարի մասին արտահայտել «բառային նկարչության» միջոցով, փնտրում, գտնում են հայ արձակագիրների ստեղծագործություններում եղած բնանկարները, որոշում, թե ինչ դեր են կատարում դրանք գեղարվեստական պատկերի կերտման գործում:

Սովորողներին գրականության հետ սերտորեն կապում են նրանց գեղարվեստական, պատկերավոր մտածողությունն են զարգացնում սովորողների կողմից ուսուցչի խորհուրդներում ստեղծվող էափիլմերը: Սրանք գրական ստեղծագործության բովանդակությանը համապատասխան նկարների ժապավեն, հավաքածուներ են, որոնք նկարվում են դասարանի շնորհալի սովորողների միջոցով, կամ միասնական ուժերով հավաքվում են համապատասխան պատրաստի նկարներ ու փակցվում թղթե ժապավենի վրա՝ դասանյութը մատուցելիս ցուցադրելու համար: Այս հնար նպաստում է նյութի ավելի խոր ընկալմանը, երբեմն գրական ստեղծագործությունը բոլորովին նորովի մեկնաբանելու, մինչև անգամ ուսուցչի համար, աննկատ մնացած մի փաստարկ,

իրողություն, մանրամասն հայտնագործելուն: Յիշենք, թե ինչ պատկերավոր են Զարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության տողերն այս տեսակետից:

Եպիֆիլմը պատարատելիս ուսուցիչն ու նրա սաները օգտագործում են իին բացիկներ կամ դրանց չափով կտրված ստվարաթղթե ուղղանկյուններ, որոնք միմյանց են միանում սոսնձված մոնլաթե թերթիկներով, որպեսզի հեշտ ծալվեն և ճպատռվեն: Ապա այդ ուղղանկյունների վրա փակցվում են ուսուցչի, շնորհալի սովորողների և ծնողների կողմից արված անհրաժեշտ նկարները: Սովորողների առանձին խնբերի պատրաստած էպիֆիլմերն անցնում են դասարանական մրցույթի բովով, ապա բոլորի համատեղ ջանքերով ընտրվում է դրանցից լավագույնը կամ տարբեր խնբերի հաջողված կադրերից ստեղծվում է բոլորովին նորը, հետևելով, որ այն ոչ միայն գրականագիտական գիտելիքների, սովորողների խոսքի զարգացման, կերպարվեստի հետ հաճելի հանդիպման միջառարկայական կապերի ստեղծման հարուստ նյութ պարունակի, այլև համապատասխանի գեղագիտական բարձր ճաշակի:

Եպիֆիլմերը, բացի գիտելիքների խորացումից, նպաստում են և սովորողների դիտողականության ու ճաշակի զարգացմանը, մտքերը պատկերավոր ու կոնրկեր արտահայտելուն, նկարներն «ընթերցելուն»: Թույշը են տալիս սովորողների երևակայությանը, նպաստում գեղարվեստական մտածողության զարգացմանը, մղում աշակերտներին որոնողական, հետազոտական աշխատանքների, հատկապես «մտերմացնում» կերպարվեստի, քանդակագործության հետ: Շատ սովորողներ այս աշխատանքների ընթացքում ի հայտ են բերում նկարչական ունակություններ: Շնորհալի ուսուցչի նպատակառուղված խորհուրդների շնորհիվ ձեռք են բերում բերեր ու ալրոմներ, վահանակներ ձևավորելով կարողություններ: Նպատակային և գործնական ձևով է օգտագործում ուսուցիչը կողոսկոպը նաև բառարանային աշխատանքներ կատարելիս: Սովորողների միջոցով դասի ամժանոթ բառերն ու արտահայտությունները բացատրել – մեկնաբանելուց հետո դրանք ցուցադրվում են էկրանին: Սովորողները ստուգում են իրենց կողմից տրված բացատրությունների իսկությունը և ապա արտագրում բառարաններում: Նույնատիպ աշխատանք է տարվում և ուղղագրական, ուղղախոսական որոշակի արժեքներ ունեցող բառախմբների հետ: Ուսուցիչը նանկավարժայան երկարատև գործունեության, գրավոր աշխատանքների ստուգման արդյունքների հիման վրա ըստ դասարանների կազմել է առավել հաճախ հանդիպող նման բառաշաբթեր և անխտիր բոլոր դասերին հետուղական աշխատանքներ է տանում իր սովորողների գիտագիտության մակարդակն ու բառապաշտի հասրտացումն ապահովելու համար: Այս առումով հատկապես արդյունավետ են ընտրովի բառաշաբթերով ու բառակապակցություններով տրվող ստեղծագործական շարադրությունները: Սակայն այս բոլորը ուսուցիչը չի իրականացնում միակողմանիորեն և ինքնանպատակ, քաջ գիտակցելով՝ որ սովորողների ճանաչողական ունակությունների բացահայտումը և դրանց զարգացումը որպես ելակետ պահանջում են զննականության և գործնական աշխատանքի նպատակային ու հետուղական գործորդումը: Երեխաներին աշխարհն ու կյանքը ճանաչել տալու բարդ գործնթացը կապված է առարկայացման, նյութականացման ու զգայնությունների հետ: Ուսուցիչը ձգտում է, որ իր սանը, հետագայում կյանք մտնելով՝ իրապաշտորեն ճանաչի իր շրջապատը աշխարհը, մաղրուն, դրանց մասին չունենա տարտան կամ լոկ վարդագույն պատկերացումներ և կյանքի անսպասելի վայրիկերումների առաջ անձարակ ու պայքարի համար անպատրաստ, կամագուրեկ, թույլ արարած չդառնա: Այդ իսկ պատճառով մեր լեզվի, գրականության ակունքներին հաղորդակից դարձնելով իր սաներին, Ո. Ասոյանը ուշի ուշով հետամուտ է լինում նրանց մեջ գրականության ու լեզվի նկատմամբ բնական հակում, նախասիրություն ունեցող սովորողների որոնմանը: Զանում է բոցավառել նրանց հոգում առկայծող փոքրիկ կրակները, ջերմացնել նրանց խոսքի և այլ արվեստների անմահ շողերով:

Նա հետևողականորեն հավաքում և պահում է գրական ալմանախներ, դրանց մեջ գետեղելով՝ իր սովորողների գրական բորբվանքները, նախապատրաստում և անցկացնում է հանդեսներ, ներկայացումներ: Ըստ գրական ստեղծագործությունների տեքստերի հանձնարարում է կատարել նկարագարդումներ – շարունակել այս կամ այն

գրական ստեղծագործությունը՝ հորինելով նոր ավարտ կամ սկիզբ: Յաճախ է հանձնարարում տանը հորինել հեքիաթներ, առակներ, փորձել հայ դասական գողտրիկ ստեղծագործությունների հիման վրա (առավելապես՝ բանաստեղծությունների) ստեղծել երգ կամ երաժշտություն:

Աշխարհաճանաչողությունն ու շրջապատի նկատմամբ վերաբերմունքն մարդու մեջ սկզբնավորվում է նրա ծննդավայրում, հայրենի բնօրրանում: Յայրենի երկրի բնության, մարդկանց, տնտեսության, մշակութային կյանքի ուսումնասիրումը առատ նյութ է ընձեռում մայրենի լեզվի և գրականության դասարանային և արտադասարանային պարապմունքների համար: Իր գործով տարված ուսուցչի փորձը ցույց է տալիս, որ բնության հետ շփումը անասելի հաճույք է պատճառում սովորողներին, զարգացնում է նրանց դիտողականությունը, հարստացնում միտքն ու խոսքը:

Եվ, իրոք, սովորողները դիտելով, ուսումնասիրելով հայրենի բնությունն իր ողջ բազմազանությամբ, տարվա բոլոր եղանակներին, առավել խորությամբ և ըմբռնողությամբ են ընկալում դրական երկերում ներկայացված բնապատկերների արժեքը, ձգտում են հարազատ լեռնաշխարհից ստացած իրենց տպավորությունները գեղեցիկ ու պատկերավոր վերարտադրել իրենց բանավոր և գրավոր խոսքում:

Ասոյանի սաները հայրենի երկրի բնությունը տեսարժան վայրերը, արդյունաբերական նշանավոր կառույցներ ուսումնասիրելիս ոչ միայն կատարում են կանոնավոր դիտումներ, գրառումներ, այլև՝ լուսանկարահանում: Այդ ամենի հիմնա վրա նրանք գրում են նկարագրական, դիտողական բնույթի շարադրություններ, տպավորություններ, հետազոտական և պրոբլեմային բնույթի փոքրիկ հոդվածներ, կազմում ալբոմներ:

Դասի նախապատրաստումը

Որպեսզի ապահովի իր յուրաքանչյուր դասի հաջողությունը. ուսուցիչը հիմնավոր ու հետևողականորեն է նախապատրաստվում դրանց: Նրա դասի ընթացքում կարևոր տեղ են գրավում.

ա) դասի մուտքի կազմակերպումը (որևէ հետաքրքիր դրվագ, միջադեպ, նկար, քանդակ, հուշ և այլն)

բ) սովորողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների զարգացում (խոսքային, գործնական, գննական մեթոդների կիրառում)

գ) անհատական ինքնուրույն աշխատանքների կազմակերպում

դ) դասի հետաքրքրականությունն ապահովելու հնար՝ եղանակներ, միջոցներ

ե) տեխնիջոցների և դիտողական պարագաների օգտագործում

զ) դասի ճշգրիտ, նպատակային կառուցում (փուլերի հաջորդական կապը)

է) բառարանային աշխատանքի կազմակերպում (բառապաշտի հարստացում)

ը) սովորողների բանավոր խոսքի և պատմողական ունակությունների զարգացում

թ) նոր նյութի հաղորդում (գիտական բովանդակության ապահովում, արդիականացում, տեղայնացում)

ժ) նոր գիտելիքների ամրապնդում ու գարձնական կիրառում

ի) տնային աշխատանքների բնույթն ու ծավալը

լ) դասի ընթացքում ժամանակի ռացիոնալ օգտագործում (կողոսկոպի, էպիդական միջոցով տեքստերի, գծակարգերի, այյուսակների ցուցադրում)

խ) դասի ընթացքում դաստիհարակչական խնդիրների իրականացում

ծ) դասի հուզականության ապահովում

կ) սովորողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ստուգում և գնահատում:

Դասի կահավորումը: Վահան Տերյան թեման մատուցելիս ուսուցիչը նախապատրաստում է հեղինակի դիմանկարը «հայ դասական գորողներ» հավաքածուից եւ ցոցադրում է սովորողներին: Նրան նվիրված ալբոմը կյանքի եւ գրական գործունեությանը նվիրված ժամանակագրական այյուսակը, ծննդավայրի, գրողի

ծնողների, ընտանիքի անդամների, բնակարանի, ուսանած վայրերի, հրատարակած գործերի վերատպությունները եւ նշանավոր մարդկանց հեղինակին նվիրված ասույթները, նրա իսկ ասույթները նվիրված ժողովրդին եւ հայոց լեզվին, ինչպես նաև հատվածներ ստեղծագործություններից, որոնք նվիրված են Հայաստանին, հայ ժողովրդին, գրական ստեղծագործությունների ցանկը, թերթեի եւ ամսագրերի հեղինակին նվիրված կտրոն - թերթոնները նույնպես ներկայացվում են սովորողների ուսումնասիրությանը: Թեմայի ուսուցումից մեկ օր առաջ հատուկ վահանակի վրա «Ծանուցվում է» տեղադրվում են գրողին նվիրված թղթապանակի նյութեր: Դրա ներքեւում եղած հատուկ գրադարակներում եւ սեղանի վրա դասավորվում են հեղինակին նվիրված մենագրությունները, հուշերի, նրա երկերի ժողովածուների հատորյակների հատընտիրների օրինակներ: Նրա ստեղծագործությունների լավագույն կատարումներով ձայներիզներ, կինոօդակ, ձայնապնակներ կամ ձայներիզներ, ինչպես նաև տվյալ հեղինակի ստեղծագործությունների թեմաներով ստեղծված երգեր, երաժշտական գործեր եւ հեռուստահաղորդման տեսաերիզներ: Օրինակ՝ Վահան Տերյան թեմային անդրադառնալիս պետք է ներկայացվի Տերյանի ծննդավայրի հայկական տաճ հոր եւ մոր դիմանկարները համապատասխան մակագրություններով, եղբայրների նկարներ՝ Ղազարոս Զավախնցի, Արամ Ներսես եւ նրա կանանց՝ Սուսաննա Պախալովայի եւ Անահիտ Շահինջանյանի, դստեր՝ Նվարդ Տերյանի նկարները ցուցադրելու համար: «Մեծերը՝ Տերյանի մասին» վահանակ, որի վրա գետեղված են Խահակյանի, Թումանյանի, Եղիշե Չարենցի, Պարույր Սեւակի, Գեւորգ Ենինի ասույթները Չարենցի եւ Մահարու լուսանկարը Տերյանի կիսանդրու մոտ՝ «Տերյանի հետ էլ նկարվեցինք...» մակագրությամբ: Նկարաշարքեր Դմիտրի Նալբանդյանի «Վերնատուն» նկարը, հոդվածներ, հորեւյանական հրատարակություններ, Տերյանի ստեղծագործությունների հուշանվերային օրինակներ՝ նվիրված մեծ բանաստեղծի 100-ամյակի: Վահանակ՝ «Տերյանը ասել է...»: Տերյանի ծրագրային եւ արտադասարանային ընթերցանության համար նախատեսված ստեղծագործությունների անձանոթ բառերի բացատրություններ, պատկերավորման եւ արտահայտչական միջոցների ընտիր օրինակներ: Տերյանի տոհմածառի գծապատկերը: Ընդորում, յուրաքանչյուր նկար, պատկերագարդում պետք է ունենա տեղեկատվական, Տերյանի ստեղծագործություններից քաղված հատվածների, այլոց՝ Տերյանի մասին ասված արձակ կամ չափած ասված խոսքի բնորոշ մակագրություն:

Բնականաբար, անգամ ամենահարուստ ու բազմաբովանդակ կարինետը ինքնին ոչինչ չի կարող տալ սովորողներին, եթե չինի նրանց հայտնագործությունների եւ իմացության արահետներով հաստատականորեն դեպի նպատակակետ առաջնորդող ուսուցիչը:

Համագործակցային դասի պլանի օրինակ

Քայլ 1 Ընտրել թեման

Ընտրել թեման, հստակեցնել դասի բովանդակությունը և դասւ ընթացքը: Ինչ է ակնկալվում դասի ընթակակերտներին տալ որևէ աշխատանք, որը նրանք կկատարեն փոքր խմբերով: Աշխատելու ընթացքում նրանք կպատրաստեն ցուցադրություններ ողջ դասարանի համար՝ նրանց հետ քննարկելով և վերլուծելով աշխատանքը:

Քայլ 2 Հրահանգներ տալուց առաջ հստակեցնել նպատակներն ու միջոցները

Դասի համառոտ ներկայացումը
Ակադեմիական նպատակները

Ուսուցիչը պետք է հստակեցնի բովանդակային նպատակները, թե ինչ գիտելիքներ է ուզում հաղորդել սովորողներին դասի ընթացքում: Բովանդակային նխպատակները սովորողների մոտ գիտելիքների ձեռքբերումն է:

Սոցիալական հմտությունների ձևավորման նպատակները

Դրանք կախված են առաջադրանքի կազմակերպման ձևից: Որքանով է այն ենթադրում փոխօգնություն, համագործակցության անհրաժեշտություն: Սոցիալական հմտությունների ձևավորման, զարգացման նպատակը սովորողների մոտ նյոււներին օգնելու և խնդիր նյոււն անդամներին խրախուսելու, արդյունավետ շփվելու, համագործակցելով խնդիրներ լուծելու հմտությունների ձեռքբերումն է: Ուսուցիչը մեկ դասի համար կարող է ընտրել մեկ կամ երկու հմտություն, որոնց ձևավորումը առավել հրատապ է համարում:

Միջոցները

Առաջադրանքը ներկայացվում է թերթիկի վրա համառոտ շարադրված:

Տարբեր չափերի թղթեր, գրիչներ, գունավոր թղթեր կամ մարկերներ, մկրատներ, կաշուն թղթեր...

Տևողությունը

Անհրաժեշտ է հստակեցնել դասի տևողությունը: Այն կարող է ամփոփվել մեկ դասաժամով: Սակայն համագործակցային ուսուցման մի շարք մեթոդներ կարող են պահանջել ավելի երկար ժամանակ՝ 2 կամ 3 դասաժամ: Այս դեպքում ուսուցիչը պետք է հստակ պատկերացնի դրանցից յուրաքանչյուրի սկիզնը ու վերջը: Եվ քանի որ այդ դասաժամների միջև կարող են օրեր անցնել հարկ կլինի վերհիշել նախորդ դասին կատարվածը և նոր միայն անցնել նոր աշխատանքի շարունակությունը:

Դասասենյակի դասավորությունը

Յուրաքանչյուրի պետք է նստի մեկ սեղանի շուրջ:

Խնդիր չափը և կառուցվածքը

Չորս հոգանոց տարասեռ խնդեր: Կարելի է պատահական խնդերի բաժանել՝ ապահովելով դրանց տարասեռությունը: Օրինակ՝ 24 հոգանոց դասարան կազմելու կարելի է հանձնարարել հաշվել մինչև վեցը: Այսպիսով բոլոր մեկերը կկազմեն մեկ խումբ, երկուսները՝ երկրորդ խումբ, երեքները՝ երրորդ խումբ և այլն: Արդյունքում կլունենանք վեց՝ չորս հոգանոց խնդեր:

Դերերը

1. Ընթերցող/ հարցեր տվող – Կարդում է հանձնարարված ողջ նյութը և ստուգում՝ հասկացե՞լ են արդյոք խնդիր անդամները:
2. Ժամանակին հետևող – Հիշեցնում է ժամանակի մասին և թույլ չի տալիս ժամանակ վատնել:
3. Խրախուսող / գովարանող – Խրախուսում է խնդիր յուրաքանչյուր անդամի լավ աշխատանքը և գովարանում ներդրումները:
4. Դիտորդ - Խնդիր աշխատանքի ընթացքում դիտորդական թերթիկում գրանցում է յուրաքանչյուրի գործողությունները:
5. Գրառող - Գրանցում է խնդիր աշխատանքը, իիմնավորումներն ու լուծումները: Այն պետք է հիմք ծառայի խնդիր անդամներին համար:

Դերերը կարող են տարբեր լինել՝ կախված նպատակներից: Ուսուցիչը դրանք պետք է համապատասխանեցնի վարժությանը:

Դերերը խնդիր անդամներին հանձնարարվուն են պատահականորեն: Սովորողները պետք է տարբեր դերեր կատարելու փորձ բերան:

Քայլ 3 Բացատրել առաջադրանքը և համագործակցության նպատակը:

Առաջադրանքի հրահանգները

Ուսուցիչը պետք է համոզվի, որ բոլորն են հասկացել, որ իրենցից յուրաքանչյուրը պատասխանատու է առաջադրանքի կատարման համար: Նա պետք է բացատրի, որ յուրաքանչյուր խմբից պատահականորեն ընտրելու է մեկ կամ երկու սովորող, որոնք պետք է ներկայացնեն իրենց աշխատանքներն ու հիմնավորումները,: Այսպիսով բոլորը կհասկանան, թե ինչու պետք է պատրաստ լինեն հասկանալու և բացատրելու իրենց խմբի որոշումները:

Դաշտության հասնելու չափանիշները

Խմբի բոլոր անդամները պետք էի վիճակի լինեն բացատրել իրենց կատարումներմն ու պատճառաբանությունները: Նրանք կարող են մրցանակներ ստանալ առաջադրանքների կատարման համար: Դնարավոր են առաջադրանքի կատարման նիքանի ճանապարհներ: Մրցանակներ կարող են ստանալ մեկից ավելի խմբեր, ինչպես նաև խումբը կարող է ստանալ մեկից ավելի մրցանակներ:

Դրական փոխկախվածություն

Խմբի անդամները պետք է համաձայն լինեն որոշումների հետ: Յուրաքանչյուր սովորողի որևէ խմբային դեր է հատկացված: Նրանք աշխատում են ընդհանուր նյութերով:

Անհատական հաշվետվությունը

Յուրաքանչյուր անդամ պետք է կարողանա լսարանին բացատրել և հիմնավորել իրենց խմբի աշխատանքի արդյունքները:

Ներխմբային համագործակցություն

Խմբերը որքանով են կարողացել համեմատել իրենց մտահղացումները, գնահատել արդյունքները:

Առանձնահատուկ վարքագծերը

Խմբի բոլոր անդամները կարողանում են քայլ առ քայլ բացատրել, թե ինչպես են նրանք հանգել այդ եզրահանգմանը:

Խմբի անդամները օգնույուն են խնդրել, երբ չեն հասկացել՝ ինչպես լուծել խնդիրը:

Խմբի անդամները մեկը նյուսին խրախուսել են մասնակցել՝ ապահովելով պարզ ու ճշգրիտ բացատրություն և օգնություն:

Պարզաբանել մասնակցությունը խրախուսելու, քաջալերելու հմտությունը դասը սկսելուց առաջ:

Քայլ 4. Վերահսկում, միջամտում և առաջադրանքի ներկայացում:

Վերահսկում

Մինչ աշակերտներն աշխատում են, անհրաժեշտ է պարբերաբար մոտենալ, դիտել յուրաքանչյուր խմբի առաջադրանքի կատարման և խմբային համագործակցության ընթացքը: Ուսուցիչը կարող է պատահականորեն ընտրել մեկին՝ բացատրելու հարցերից մեկը: Կարելի է սովորողների հարցը փոխանցել խմբին՝ լուծումը նրանցից ստանալու ակնկալիքով, կամ հանձնարարել սովորողներին այն ուղղել հարկան խմբերին:

Միջամտում

Հարցն ընդունել միայն այն դեպքում, եթե այն առաջացել է խմբի բոլոր անդամների մոտ: Միջամտել խմբերին՝ հիշեցնելով, որ բոլոր հիմնավորումները ձևակերպեն: Լսել, նկատել և գովաբանել, եթե աշակերտները կիրառում են սոցալական հմտություններ:

Առաջադրանքի ներկայացում

Ըստ առաջադրանքի՝ յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր աշխատանքը: Խմբերից պատահականորեն ընտրվում են երկու սովորող, որոնք ներկայացնում են աշխատանքը: Յուրաքանչյուր խմբի ներկայացումից հետո տրվում է երկու օրվա ժամանակ՝ քննարկելու եւ վերլուծելու ներկայացման հետ կապված հարցերը:

Յուրաքանչյուր խումբ պետք է երեք հարց պատրաստի ներկայացնող խմբին: Կամ խմբերը պետք է աշխատանքը ներկայացնող խմբին հարցերն առաջադրեն պատահականորեն: Սովորողները հնչեցնում են հարցը, իսկ ներկայացնող խումբը երեսուն վայրկյան հետո պետք է պատասխանի հարցին: Գործընթացը շարունակել նույն կերպ, մինչեւ բոլոր խմբերն ավարտեն իրենց ներկայացնումները:

Քայլ Գնահատում եւ Խմբային գործընթաց – մշակումներ

Գնահատում

Գնահատել խմբի համագործակցային հմտությունները գնահատման թերթիկի օգնությամբ: Պատրաստել գնահատման թերթիկ խմբային ներկայացումները գնահատելու համար: Նրանցում կարելի է նշել բոլոր խմբերը ուշագրավ հարցերն ու պատասխանները և դրանց դիմաց մրցանակային նիշ դնել, իսկ ոչ ուշագրավ կամ սխալ պատասխանների դեպքում մրցանակային մեկ նիշ համել կամ իամստով հակառակ նիշ դնել: Նախօրոք սովորողներին տեղեկացնել, թե գնահատման ի՞նչ ձև է կիրառվելու: Նրանք հնարավորություն կունենան նախապատրաստվելու:

Փոքր խմբային գործընթաց/ մշակումներ

Դասի վերջում դիտորդները խմբի անդամներին ցույց են տալիս դիտորդական թերթիկի տվյալները: Խումբը վերլուծում է արդյունքները:

- Որոշում է, թե որքանով են արդյունավետ աշխատել միասին:
- Գրանցում է դիտարկումների արդյունքները և միասին ավելի արդյունավետ աշխատելու բարելավման կարգ մշակում:
- Ընդգծում է բարելավման հիմնական նպատակը՝ ինչը կարելի է անել ավելի լավ, քան անցած անգամ:

Լսարանային մշակումներ

Լսարանը քննարկում է, թե որքանով խմբերն արդյունավետ աշխատեցին միասին: Ուսուցիչը պետք է խթանող հնարներ մշակի՝ հիմնվելով կոնկրետ դիտարկումների վրա և շեշտելով սովորողների դրական վարքագիծը:

Հաջողության նշումը

Խումբը տոնում է իրենց բարդ աշխատանքի ավարտը և հաջողությունները:

Դասից հետո

Ամեն դասից հետո դասի վերաբերյալ տպավորությունները հակիրճ գրառել տետրում: Վերլուծել դասի ուժեղ և թույլ կողմերը:

- Ինչը և ինչպես կարելի է ավելի լավ անել հաջորդ անգամ:
- Արդյո՞ք ճիշտ էր հաշվարկված ժամանակը:
- Արդյո՞ք իրականացան դասի նպատակները և որը ինչ չափով:
- Կիրառվել են համագործակցային ուսուցման բոլոր տարրերը: Չատ ավելի հեշտ է կենտրոնանալ հաջողությունների վրա, սակայն ավելի կարևոր է հատկապես կատարման թույլ կողմերի վրա կենտրոնանալը: Պետք է կարողանալ սխալներից դասեր քաղել:
- Ինչո՞ւ ինչ որ բաներ հաջող չստացվեցին: Ուղիներ փնտրել շտկելու դրանք:
-

Ուսուցիչն իր աշխատանքը գնահատելու համար կարող է ժամանակ առ ժամանակ սովորողների շրջանում դասերից իրենց ստացած տպավորությունների մասին

հարցումներ անցկացնել: Սակայն այս միջոցից խորհուրդ ենք տալիս օգտվել միայն այն դեպքում, եթե ուսուցչի և սովորողների մեջ փոխադրձ վստահություն կա, և նրանց պատասխաններն անկեղծ կլինեն: Հարցերի թիվը սահմանափակել, աշխատել, որ դրանք լինեն հստակ ձևակերպված: Հարցերը կարող են վերաբերել դասի բովանդակությանը և վարման կարգին:

Վերջում ամրագրել հաղթանակներն ու հաջողությունները:

Համագործակցային դասի հիմնական կառուցվածքը

- Զերմացում
- Համագործակցային կառույց
- Գնահատում և անդրադարձ

Գոյություն չունի համագործակցային ուսուցման դասի կառուցման միայն մեկ ճշնարիտ ուղի:

Դասի անցկացման երեք հիմնական փուլերը հետևյալն են.

1. Զերմացում՝ պատրաստվել սովորելու և համագործակցության (5-15 րոպե)• Դասախոսը, ուսուցիչը ներկայացնում է դասի թեման
• Նա տալիս է խթանող հարց կամ թեմա՝ զույգերով իրար հետ քննարկելու համար
• Յուրաքանչյուրը մասնակցում է փոխազդելով 2-5 րոպե:
• Այս փուլում մասնակիցները ակտիվացնում են իրենց գիտելիքները և ծնվում եննոր հարցեր կամ գաղափարներ:
• Զերմացումն ավարտվում է մեծ խմբում անցկացվող քննարկմանք:
• Նպատակի առաջադրում՝ բովանդակային նպատակներ, մտածողության նպատակներ, սոցիալական և ինքնազնահատման նպատակներ:
• Նպատակները կարող են դրվել ուսուցչի կողմից կամ ամբողջ խմբով համատեղ:
2. Համագործակացային ուսուցման կառուցում՝ հիմնված բովանդակության վրա 20-40 րոպե:
 - Մտածիր մենակ, զույգվիր, կիսվիր:
 - Առաջադրանք հենքային խմբերի համար և ներկայացում:
 - «Խճանկար», «Զբոսանք պատկերասրահում» կամ այլ հնարների օգտագործում:
 - Առաջադրանքը է մշակված լինի համագործակցային ուսուցման տարրերի հիման վրա:
3. Գնահատում՝ ինչպես հասանք մեր նպատակներին, ինչպես համագործակցեցինք (10-15 րոպե)
 - Արդյունքները՝ ինչպիսի՞ն է արդյունքը, մենք բավարարվա՞ծ ենք: Որոնք էին խմբերի տարրերությունները:
 - Գործնքացը՝ ինչպես էինք համագործակցում: Ինչպե՞ս ընթացավ աշխատանքը, խնդիրների լուծումը:
 - Ի՞նչը մենք միասին կանենք ավելի լավ կամ այլ եղանակով:
 - Հետադարձ կապ խմբերի համար: Խմբերի յուրաքանչյուր անդամին տալիս են հետադարձ կապ:

Համագործակցային խմբերի ձևավորման սկզբունքները

Համագործակցային ուսուցման մեթոդները կիրառելիս անհրաժեշտ է դասարանը բաժանել փոքր խմբերի: Սովորաբար կիրառվում է խմբերի ձևավորման չորս եղանակ, որոնք կատարվում են չորս ձևով՝ կապված դրանց տեսակների հետ:

Համասեռ խմբեր: Երբ խմբում ընդգրկված անդամների աշխատանքային կարողությունները համազոր են: Այդպիսի խմբերով աշխատելիս սովորողները, նույն կարողությունների տեր անհատների հետ շփվելով, իրենց ավելի հարմարավետ են գգում, և օգտակար է նրանով, որ խմբում կատարվող աշխատանքը շատ ավելի հաճելի է լինում նրան, քան տարբեր կարողություններ ունեցող սովորողների հետ աշխատելիս:

Պատահական խմբեր: Երբ խումբը կազմվել է պատահականորեն՝ վիճակահանությանը՝ հաշվելով, կտրտված բացիկներով և այլն: Այսպես կազմված խմբերում հնարավոր է լինեն շատ թույլ և շատ ուժեղ սովորողներ: Այս դեպքում դժվարանում է լսարանի աշխատանքի կառավարումը: Բայց սրանք այն խմբերն են, որոնց ուսուցիչը հաճախ կարող է դիմել համագործակցային մեթոդներ կիրառելիս, քանի որ համագործակցել պետք է բոլորի հետ, և սովորողները պետք է սովորեն աշխատել լսարանի բոլոր դասընկերների հետ: Դա նպաստում է համագործակցային հմտությունների զարգացմանը:

Ըստ հետաքրքրությունների կամ իմքնակամ կազմված խմբեր: Այս եղանակը բազմաթիվ առավելություններ ունի: Երբ սովորողներն իրենք են ընտրում իրենց խմբի անդամներին, սովորում են նախաձեռնություն հանդես բերել նաև հասարակական իրավիճակներում, իրենց ավելի հարմարավետ են գգում նման խմբերում աշխատելիս: Ուսուցիչն այս դեպքում պետք է նկատի ունենա, որ բոլոր սովորողներին պետք է բացատրել խմբի բոլոր ընկերների հետ աշխատելու անհրաժեշտությունն ու կարևորությունը:

Տարասեռ խմբեր: Այս խմբերում ընդգրկվում են տարբեր՝ ուժեղ, միջին և թույլ կարողությունների տեր սովորողներ: Խմբերը պետք է նաև համամասնորեն արտահայտեն լսարանի կազմը՝ ընդգրկելով թե՛ տղաների և թե՛ աղջկների:

Այս խմբերը պետք է հաճախ փոփոխվեն, իսկ ուսուցչի կողմից կանխամտածված ձևավորված խմբերը կարող են ավելի երկար պահպանվել, որպեսզի հնտանան միասին աշխատելու մեջ: Դրանց կազմը կարող է փոփոխվել համեմատաբար ուշ - ուշ: Այդ առումով ցանկալի է, որ խմբի կազմը փոքրաթիվ լինի:

Համագործակցային ուսուցման աշխատանքների կազմակերպումը արդյունավետ է չորս հոգանոց տարասեռ խմբերում: Այդ դեպքում, ի տարբերություն ավելի փոքր խմբերի, անդամները հնարավորություն են ունենում շատ շփվելու, ավելի շատ մարդկանց կողմից օգնություն ստանալու, շատ կարծիքներ լսելու, հետևաբար շատ բան սովորելու, ապահով և վստահ զգալու կայացրած որոշման մեջ՝ ունենալով ավելի շատ մարդու համաձայնություն ու հավանություն: Ավելի մեծ խմբերի աշխատանքը կազմակերպելու համար սովորողներից շատ ջանքեր են պահանջվում, խմբային աշխատանքը շատ ժամանակ է խլում, դժվարանում է դեմ փոխազդեցության ապահովումը:

Վերը թվարկված սկզբունքների դրական և բացասական կողմերը ցույց են տալիս, որ խմբեր կազմելու բոլոր ձևերն էլ կիրառելի են կախված այն բանից, թե ինչ նպատակ է հետապնդում ուսուցիչը: Խմբային աշխատանքը բոլոր սովորողներին միմյանց հետ շփվելու հնարավորություն է ընձեռում. սովորողները սովորում են համագործակցել ոչ միայն մտերիմների, այլև բոլորի հետ: Լսարանում մթնոլորտն ավելի է ջերմանում: Լսարանը կարելի է բաժանել խմբերի հետևյալ ձևերով.

➤ **Հաշվելով** (օրինակ՝ եթե լսարանը պետք է չորս խմբի բաժանվի, կանգնում են շրջանով և հաշվում են 1-4, որից հետո հանձնարարվում է մեկերին մի խումբ կազմել, երկուսներին՝ մյուս խումբը, երեքներին՝ հաջորդը, և չորսերին՝ վերջինը):

➤ **Քարտերի եղանակով** խմբերի բաժանելիս կարելի է օգտագործել անհրաժեշտ թվով գունավոր քարտեր (օրինակ՝ լսարանը երեք խմբի բաժանելու համար պետք է պատրաստել սովորողների թվին համապատասխան երեք գույնի հավասար քանակով

քարտեր) : Քարտերի փոխարեն կարելի է օգտագործել կտրտված բացիկներ: Սովորողները պետք է գտնեն իրենց բացիկի կտրոներն ունեցողներին և խմբեն նրանց հետ:

➤ **Ըստ նմանությունների կամ տարբերությունների** (օրինակ՝ ըստ ծնված տարվա եղանակի, սիրած սպորտաձևի, հագուստի գույնի և այլն), եթե խմբերի քանակն ու խմբերում անհատների թիվը էական չէ:

➤ **Ուսուցչի ընտրությամբ** խմբերը կազմվում են, եթե յուրաքանչյուր խմբում տարբեր ընդունակություններ ունեցող սովորողներ են անհրաժեշտ, կամ խմբում աղջիկների և տղաների հավասար քանակ է պետք:


➤ **Նախապես կազմված ցուցակով** ուսուցիչը նախօրոք կազմում է սովորողների ցուցակն այնպես, որ առաջին տեղում լինի ամենաուժեղ սովորողը, երկրորդում՝ նրան հավասար կամ մի փոքր թույլ և այսպես, նվազման կարգով, շարունակում է ցուցակի վերջում նշելով ամենաթույլ սովորողի անունը:

Խմբային աշխատանքը թելադրում է աշխատանքային տեղերի ոչ ստանդարտ դասավորվածություն: Տարբերակները բազմազան են, սակայն նպատակահարմար է պահպանել հետևյալ սկզբունքները:

- Յուրաքանչյուրին պետք է տեսանելի լինի դասարանի կենտրոնական մասը՝ գրատախտակը:

- Յուրաքանչյուր խումբ պետք է աշխատանքային սեղան ունենա:

- Սովորողներից յուրաքանչյուրը պետք է կարողանա տեսնել իր խմբի թույր անդամներին, ինչպես նկարում:



Դամագործակցային այլ մեթոդներ

Գաղտնիք չէ, որ դասավանդումը մարդու հնարավոր ամենաբարդ աշխատանքներից մեկն է: Թե՛ որպես ուսուցիչներ, թե՛ որպես սովորողներ և մանկավարժեականուներ, թույրս էլ գգացել ենք դասավանդման խնդրի ամբողջ ծանրությունը: Մենք գիտենք, որ այսօրվա չափանիշներով լավ ուսուցիչը բազմաթիվ հատկանիշներ պետք է ունենա՝ ներառյալ հոգատարությունը: Լավ ուսուցիչը նաև դասավանդման փորձառու, հմուտ գիտակ պետք է լինի: Հնուտ լինել՝ նշանակում է տեսանելի արդյունք տվող աշխատանք կատարելու ընդունակություն ունենալ, և որ ամենակարևորն է, պետք է գիտակցել, որ այսպիսի հմտություն կարելի է ձեռք բերել և անվերջ զարգացնել: Ուսուցչի, դասավանդողի հմտությունը բնածին չէ: Շատերը պարզապես գիտեն՝ ինչ պետք է անել, և, թվում է, աշխատում են առանց ճիգ գործադրելու, կարծես բնական ներընթանան օգնությամբ: Սա գիտելիքի չգիտակցված և ինքնաբերաբար ձեռք բերվող տեսակն է: Գիտելիքի այս տեսակը մարդը ձեռք է բերում տարբեր, հաճախ՝ չգիտակցված ճանապարհներով: Այդ եզակի ուսուցիչները հաճախ չեն ել կարող իրենց ձիրքը

փոխանցել ուրիշների, քանի որ իրենք էլ չեն կարող ասել, թե ինչ միջոցներ և ինչպես են կիրառում:

Մեր պատկերացմամբ՝ հմուտ ուսուցիչն իր աշխատանքի բարդությունը գիտակցող մարդն է, որը փորձում է գիտակցված և ծրագրված ջանքերով կատարել իր աշխատանքը: Ուսուցիչ աշխատանքի բովանդակությունն ու ձևը կախված են վերլուծության արդյունքում դրամց առավելագույն օգտակարության համոզնունքից: Դնուտ ուսուցիչը տարբերակներ է ընտրում բովանդակության ու ձևի այլընտրանքների ցուցակից: Նա ձգտում է վերահսկել և կառավարել դասավանդման ընթացքն այնպես, որ սովորողները ցանկանան սովորել, հետևեն իրենց անելիքների ընթացքին, փոխադարձ կապի մեջ լինեն և նոր փորձեր կատարեն:

Եթե սովորողների առաջադիմությունն ուսուցչին չի բավարարում, նա վերանայում է դասավանդման մեթոդ՝ այն փոփոխելու հնարավոր անհրաժեշտությունը բացահայտելու նպատակով: Դնուտ ուսուցիչի խոսքն ու վարքը հստակ են, տրամադրվածությունը՝ վճռական: Նա հստակ բացատրում է սովորողներին, թե ինչ է հարկավոր սովորել, ինչ չափանիշներ է ընդգրկում գերազանց առաջադիմությունը, և ինչ միջոցներ պետք է նախաձեռնի սովորողն այդ նշանակետին հասնելու համար:

Վերջապես, հմուտ ուսուցիչները նաև սովորողներ են՝ «դասավանդման գործի հավերժ աշակերտներ»: Այդպիսի ուսուցիչը մշտապես հաղորդակցվում է շրջապատող իրական աշխարհի, իր գործընկերների հետ, հետևում է իր մանագիտական ոլորտում գիտական հետազոտություններին՝ առաջնորդվելով՝ այն հաստատակամ հետաքրքրասիրությամբ, որի իմաստն է. «Ես անեն ինչ չգիտեմ: Ոչ ոք ամենագետ չէ և երբեք էլ չի կարող լինել, սակայն ես առաջընթաց եմ ապրում, հարստացնում եմ գիտելիքներս, բարելավում հմտություններս, բարձրացնում աշխատանքիս արդյունավետության մակարդակը»:

Այսօրվա ուսուցչի արդյունավետ աշխատանքի կարևորագույն նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Պատշաճ տեղ հատկացնելով և բոլորովին էլ չթերագնահատելով ուսուցման ավանդական մեթոդների դերն ու նշանակությունը՝ ընդգծում ենք, որ այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը գործնականորեն շատ կարևոր է և հրատապ:

Դա թույլ կտա ուսուցչի աշխատանքի արդյունավետության բարձրացման և մեկ միջոցի ներդնում: Ինչպես նոր գործիքի, սարքավորման օգտագործումը բարձրացնում է ժամանակակից արհեստավորի աշխատանքի արդյունավետությունն ու որակը, այնպես էլ համագործակցային ուսուցումը հնարավորություն է տալիս ուսուցչին դասապրոցեսը դարձնել ավելի բազմազան ու հետաքրքիր: Դամագործակցային ուսուցումն ունի նաև հասարակական գործառույթ: Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում արդեն ակնհայտ է, որ մարդիկ ավելի ու ավելի շատ կարիք ունեն աշխատելու խնբերով: Ակնհայտ է, որ այսօր մեր հասարակության անդամներն իրենց մտածելակերպով ու արժեքներով բազմազան են, ուստի և հասկանալի է դառնում, որ համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խնբային աշխատանքը արդյունավետ դարձնելու համար: Սա հատկապես գերխնդիր է մեր հասարակության համար, քանի որ հայերս սովորաբար ավելի հաջողակ ենք անհատական գործունեության մեջ, քան՝ խնբային: Մինչդեռ այսօր, զուտ անհատականությունների վրա հիմնվելով, հնարավոր չէ հաջողության հասնել պետական և հասարակական խնդիրներ լուծելիս:

Դամագործակցային ուսուցման կարևորագույն արդյունքը անձի զարգացումն ու անհատականության ձևավորումն է, քանի որ անհատականությունը ձևավորվում է մարդկանց հետ շփվելիս: Մարդն իր նմանների հետ առնչվելիս ավելի լավ է հասկանում ինքն իրեն: Ստեղծագործական գործունեությունը խնբային աշխատանք է և ստեղծագործական մտածողությունը խթանող համագործակցություն: Դամագործակցությունը նպաստում է, որ սովորողները տեսնեն այն հնարքները, ուզմավարություններն ու մոտեցումները, որ ինքն ու իր դասընկերները կիրառում են ստեղծագործելու ընթացքում:

Ուրիշների հետ աշխատելու և համագործակցային ստեղծագործական աշխատանքից առավելագույնս օգուտ քաղելու էական պայմաններից մեկը իրեն ուրիշի տեղում պատկերացնելու կարողությունն է:

Համագործակցային ուսումնառության մեթոդները կարող են արդյունավետորեն գործադրվել ցանկացած լսարանում՝ ցանկացած բովանդակություն ուսուցանելու համար: Այս մեթոդները հաջողությամբ կիրառվում են ինչպես համասեռ (հավասար ընդունակությունների տեր սովորողները կազմված), այնպես էլ օժտված անհատների կամ հատուկ կրթության լսարաններում:

Համագործակցային մեթոդների կարիքն զգացվում է հատկապես առաջադիմության տարբեր մակարդակներ դրսևորող լսարաններում: Այս մեթոդի օգնությամբ կազմակերպվող ուսումնառությունը կարող է օգնել, որ երեխանների կարողությունների, հնարավորությունների տարբերություններն ավելի շուտ դառնան միջոց, ռեսուրս:

Մեր հասարակության մեջ խնդիրների լուծման գրեթե գործընթացները տեղի են ունենում տարբեր խմբերում՝ մասնագիտական աշխատակազմ, ընտանիք, ընկերախումբ: Խնդիրի լուծումն իր բնույթով համագործակցային գործընթաց է, որում մի քանի անհատներ միասնական խումբ են կազմում՝ համատեղ նպատակների հասնելու համար: Դետևաբար, որպեսզի խնդիրը լուծվի, սովորողը պետք է ձեռք բերի միջանձնային և խմբային հաղորդակցության անհրաժեշտ ունակություններ:

Համագործակցային աշխատանքը հազվադեպ է փոխարինում ուսուցչի դեկանականական աշխատանքը, ուսումնառությունը, սակայն բավականին համալրում է անհատական աշխատանքը, անհատական ուսումնառությունը և անհատական վարժանքը

Ծրջագայություն գրքի բաժիններով

Գրքի գլուխներով կամ բաժիններով շրջագայությունը տեխնիկական հնարանք է: Այն ուղղորդում է սովորողին, տեղեկություններ հաղորդում գրքի կառուցվածքի մասին և ցույց տալիս տեքստի այն հատկանիշները, որոնք հատուկ ուշադրության են արժանի:

Այս մեթոդի կիրառումը ներառում է հետևյալ քայլերը.

- Մինչև ընթերցանությունը սկսելն անհրաժեշտ է ընտրել այնպիսի հատված, որ կիետաքրքի սովորողներին: Սա կօգնի լսարանին՝ ներգրավվել ընդհանուր թեմայի ուսումնասիրության մեջ: Ցանկացողներին պետք է տալ հնարավորություն արտահայտել իրենց կասկածները, որոնք առնչվում են բնագրին: Իրենց տեսակետները ներկայացնող սովորողներին առաջարկել հիշել այն բառերը, որոնք օգնեցին հանգել այդ եզրակացությանը: «Պարբերությունը վերընթերցելու համար սովորողներին մեկնաբանությունների բազմազանություն պետք է առաջարկել:

- Սովորողների հետ քննարկել ցանկացած հիասքափություն, որը նրանք ունեցել են՝ փորձելով բնագիրն առանց հնարների կարդալ: Նմանատիպ հատվածների մի քանի օրինակ ևս հանձնարել՝ ամեն անգամ խրախուսելով սովորողներին՝ իրենց հիշողության մեջ համապատասխան կապեր, առնչություններ փնտրել տվյալ նյութի դեպքում կիրառելու համար: Սովորողները կգիտակցեն, որ կարդալն անհամենատ ավելի արդյունավետ է դառնում, եթե իրենք տեխնիկական հնարներ են կիրառում մինչև բնագրին անցնելը:

- Համառոտ ներկայացնելու նպատակով նբագրից մի բնորոշ գլուխ ընտրել՝ պարզելով վերը քննարկվածին համանման այն առանձնահատկությունները, որոնք կարդալու ընթացքում վրիհել են սովորողների աշքից: Բազմաթիվ դասագործերում տեղեկությունը ներկայացված է տեսողական զանազան պատկերներով, որոնք ուշադրություն են հրավիրում նյութի կարևոր մասերի վրա և նպաստում դրանց յուրացմանը: «Ծրջագայեք» բնագրի որևէ էջով: Դա սովորողներին կօգնի՝ գիրք կարդալու ընթացքում տեսնել այս տեխնիկական առանձնահատկությունները:

• Հանձնարարել լրացնել «Շրջագայություն գրքի գլուխներով հարցարերը»՝ որպես գրքի ներածություն: Այս մեթոդի կիրառման օգտակար միջոց է նաև սովորողներին այնպիսի հնարավորության ընձեռումը, որի պայմաններում նրանք կարողանան բանավոր ներկայացնել այն, ինչ գտել, հայտնաբերալ են տարբեր գրքեր ուսումնասիրելիս:

Գլխի առաջին ընթերցանությունը կամ համռոտ ակնարկը ինքնակառավարվող շրջագայություն է: Սյուրի միջով անցնելու համար նախատեսված այս նախնական քայլը գործուն և եռանդուն մտածելակերպ է պահանջում, որը նպատակ ունի պարզել:

• **Թեման:** Ինչի մասին է ընտրված հատվածը կամ գիրքը: Թեմային առնչվող ո՞ր մասը ես արդեն գիտեմ:

• **Գլխավոր միտքը:** Ո՞րն է այս նյութի կամ գրքի իմաստը: Ինչի՞ համար է հեղինակն այն գրել: Ինչո՞վ կարող է այն օգտակար լինել ինձ:

• **Յիմնական նյութերը:** Որո՞նք են հիմնական փաստարկներն ու եզրակացությունները: Եթե այս նյութն ամփոփելու լինենք, ապա մանրամասնությունների մեջ մասը պարունակող ո՞ր հիմնական մտքերը կվերցնենք: Ինչի՞ն է ակնհայտորեն հավատում հեղինակը:

• **Կառուցվածքը:** Ինչպե՞ս է կազմված նյութը: Ինչպե՞ս է այն բաժանված կամ ստորաբաժնված:

• **Ակնառու մանրամասներ:** Կա՞ն այնպիսի մանրամասներ, որոնք անպայման արժանի են ուշադրության: Ի՞նչն է աչքի ընկնում տեքստի մեջ: Կա՞ն, արդյոք, թափ, շեղ կամ մեծատառերով գրված հատվածներ կամ մեջբերումներ: Կա՞ն, արդյոք, կարևոր թվացող դարձվածքներ:

• **Ոճը:** Ի՞նչն է աչքի զարնում գրելավոճի մեջ. նախադասությունների բարդությո՞ւնը կամ (կամ պարզությունը), բառապաշարի հագեցվածությո՞ւնը: Ինչպիսի՞ սահունությամբ է զարգանում շարադրանքը: Դեշտ կլինի՞, արդյոք, այն կարդալը:

• **Տոնը (վերաբերմունքը), տրամադրությունը:** Արդյո՞ք հեղինակն արտահայտում է իր վերաբերմունքը նյութի նկատմամբ: Կարո՞ղ են ես որևէ զգացմունք հայտնաբերել բնագրում: Ինչպիսի՞ն է տոնը՝ զայրալի՞ց, կատակայի՞ն, ոգևորվա՞ծ, քննադատակա՞ն, ծաղրակա՞ն, հեգնակա՞ն, դատողակա՞ն, համոզվա՞ծ, ներշնչվա՞ծ... Եթե հեղինակը փորձեր այդ նյութը կենդանի ձևով ներկայացնել, ապա ինչպիսի՞ն կլիներ այն:

Առավելությունները

• Սովորողները կարդալու ընթացքում սովորում են կիրառել տեխնիկական հնարներ:

• Սովորողներև հնարավորություն են ստանում նյութի մասին ենթադրություններ անելու: Կարդալուց հետո դրանք կարող են հաստատվել կամ ժխտվել:

• Սովորողների համար «Մասնագետ ուղեցույց» է ապահովվում՝ գլխում կարևորագույնի և բնագրում առկա՝ կարդալուն օժանդակող միջոցների կանոնավոր կիրառման մասին նախագուշացնելու համար:

Այս մեթոդները կարող է կիրառվել ցանկացած բովանդակության դասագրքային նյութերի համար՝ տարրականից մինչև բարձր դասարաններ: Գրքի գլուխներով «շրջագայելիս» կարելի է հայտնաբերածը դասընկերներին պատմել:

Թռուցիկ գրառումներ

Թռուցիկ գրառումները զարգացնում են սովորողների գրավոր խոսքը, նրանց տալիս իրենց մտքերն անկաշկանդ ինքնաբերական կերպով գրառելու հմտություն: Դրանք մղում են մտածել այն մասին, թե ինչ են սովորում եւ ինչպես: Այս գրառումները դառնում են հանձնարարություններ մի մաս: Մեթոդի կիրառումը ներառում է հետեւյալ քայլերը.

• Սովորողների հետ քննարկել այն հանգամանքը, որ մտքերի գրավոր շարադրումը խիստ կարեւոր է որեւէ գաղափար կամ գործընթաց հաստականալու, իսկապես

պատկերացնելու համար: Սովորողներին պետք է սովորեցնել դատողությունների միջոցով մոդելավորել, ստեղծել հասկացություններ եւ գրել սեփական փորձառության մասին:

• Սովորողների ուշադրությունը պետք է հրավիրել թօռուցիկ գրառումների վրա: Ասել, որ դրանք սովորելու ընթացքում մտքերն ու կարծիքները գրանցելու մեխանիզմներ են: Դա նաև յուրացրածը գնահատելու պահն է: Կախված ձեր լսարանի համակազմից՝ սովորողներին պետք է առաջարկել իրենց աշխատանքային տետրերում մի հատված առանձնացնել թօռուցիկ գրառումների համար: Որոշ դեպքերում առավել նպատակահարմար կլինի դրան թեմատիկ մոտեցում ցուցաբերել եւ սովորողներին հանձնարարել իրենց խորհրդածությունները գրի առնել նշումների համար նախատեսված առանձին տետրում:

• Պետք է ընդգծել դասի ընթացքում թօռուցիկ գրառումների կարեւորությունը: Դրանք կարող են շատ արդյունավետ լինել սովորողների համար, եթե կատարման պարբերականությունը կազմի շաբաթը գոնե մեկ անգամ: Գրառումներ անելու համար 2-10 րոպե ժամանակ տրամադրեք: Սովորողներին պետք է տալ հետեւյալ հրահանգները.

1. Թօռուցիկ գրառումները ոչ պաշտոնական գրավոր աշխատանքներ են: Դրանք ձեր մտքերի ու խորհրդածությունների արդյունքն են՝ չիդկված ու չխմբագրված: Այնպես որ, ավելի շուտ կենտրոնացնեք մտածելու եւ ոչ թե գրելու ձեւի վրա:

2. Թօռուցիկ գրառումներ հարկավոր է կատարել աշխատանքային տետրում:

3. Քանի որ ուսուցչը պարբերաբար ստուգում է աշխատանքային տետրը, ապա կարող է գրառումների կողքին մեկնաբանություններ անել՝ սկիզբ դնելով ուսուցչի եւ սովորողի միջեւ գրավոր երկխոսության:

4. Գրառումները պարզապես սովորողների համար ինքնարտահայտման միջոց պետք է լինեն:

• Թօռուցիկ գրառումները պետք է լսարանում ուսումնական գործունեության անբաժանելի մասը դառնան: Կարելի է սովորողներին հանձնարարել ներածություն գրել նոր նյութի յուրացմանը պատրաստվելու համար:

• Թօռուցիկ գրառումները լսարանում կարող են կիրառման բազմաթիվ ձեւեր ունենալ: Այս մեթոդը կարող է հատկապես օգտակար լինել որպես ներածական վարժություն՝ ամբողջ դասարանին կամ համագործակցային խմբերում քննարկումներ սկսելու համար: Դրանք սովորողներին հնարավորություն են տալիս ուրիշների հետ հաղորադկցվելուց եւ մտքեր փոխանակելուց առաջ հետազոտել սեփական մտածողությունը:

Մեթոդի կիրառումից հետո կարելի է սովորողների հետ կատարել հետեւյալ աշխատանքները

• Արդրադառնալ բնագրի տվյալ գլխին, ստուգարքին կամ քննությանը նախապատրաստվելու համար:

• Կանխատեսել փորձերի կամ իրավիճակների արդյունքները:

• Ուսումնասիրվող նյութի վերաբերյալ սեփական տեսակետ հայտնել: բացատրել, թե ինչու են որոշ բաներ տեղի ունենում:

• Անփոփել նախորդ դասի՝ սեփական ընթացքում:

• Պարզաբանել նախորդ դասից թերի ընկալված դրույթները կամ հարց բարձրացնել այն նյութի մասին, որը դեռ լավ չեք պատկերացնում:

• Գրի առնել սեփական խոհերն ու դատողությունները այլ կարդացած գրքի կամ դիտած տեսանյութի մասին:

• Դիտարկել եւ համեմատել, թե ինչպես են մտքեր ու կարծիքներ են փոփոխվում սովորելու ընթացքում կամ ինչպես են սխալ պատկերացումներն ուղղվում:

Առավելությունները

• Սովորողները շահագրգռված են մտածել այն մասին, թե ինչպես են իրենք սովորում, գործնականում կիրառում գրելու հմտությունները՝ սովորածն իրենց սեփական պատկերացմամբ ներկայացնելու համար:

• Սովորողները գրում են իրենց համար՝ որպես հանդիսատես: Դա անձնավորում է նյութի յուրացումը: Սովորողներին պարբերաբար հիշեցնում են սովորածը սեփական բառերով արտահայտելու անհրաժեշտության մասին:

• Այսպիսի գրառումները ուսուցիչների համար ուղղակի հետադարձ կապ եւ արձագանք են ապահովում՝ ավելի խոր գաղափար կազմելու այն մասին, թե ինչպես են աշակերտները պատկերացնում իրենց ուսումնական ծրագիրը եւ ինչպիսի բարդությունների են հանդիպում:

«Մագնիսական» ամփոփումներ

«Մագնիսական» ամփոփումն ընթերցանության ժամանակ հիմնական հասկացությունների տարբերակումն է, որոնք սովորողներն օգտագործում են կարեւոր տվյալներն ամփոփ ներկայացնելու համար:

Մեթոդի կիրառումը ներկառում է հետեւյալ քայլերը.

• Սովորողներին ներկայացնել «մագնիսական» բառերի գաղափարը. հարցնել՝ գիտե՞՞ն արդյոք, թե ինչպես է մագնիսն ազդում մետաղի վրա: Ինչպես մագնիսն է ձգում մետղաները, այնպես էլ մագնիսական բառերը դեպի իրենց են ձգում տեղեկությունները: Սա պատկերավոր ներկայացնելու համար սովորողներին առաջարկել իրենց բնագրից մի փոքր հատված կարդալ՝ գտնելով այն հիմնական գաղափարները կամ եզրույթները, որոնց հետ կապվում են տվյալ բնագրի մյուս մանրամասները: Երբ սովորողները վերջացնեն կարդալը, թող թվարկեն իրենց գտած հնարավոր բոլոր «մագնիսական» բառերը: Պետք է խրախուսել նրանց ասելով, որ այդ բառերի մեջ մասը կարելի է դուրս բերել ինեց բնագրից: Նշենք, որ «մագնիսական» բառերը հաճախ լինում են վերնագրերում, խորագրերում, կարող են ընդգծված լինել թափ կամ շեղ տառերով: Սովորողներին պետք է զգուշացնել նաեւ, որ ոչ բոլոր ընդգծված բառերն են անպայման «մագնիսական» լինում:

• «Մագնիսական» բառը գրել գրատախտակին կամ ցուցապաստառին: Սովորողներին հանձնարարել վերիիշել բնագրի այն կարեւոր մանրամասները, որոնք առնչվում են տվյալ «մագնիսական» բառին: Մինչ «մագնիսական» բառի շուրջ գրանցվում են այդ մանրամասները, սովորողներին հանձնարարել նույն բանն անել աշխատանքային տետրում: Հնարավորություն պետք է տալ սովորողներին մի պահ նորից աչքի անցկացնել ընտրված բնագիրը, որպեսզի կարողանան ընդգրկել ուշադրությունից վրիպած բոլոր կարեւոր մանրամասները:

• Սովորողներին հանձնարարել ավարտել ամբողջ հատվածի ընթերցանությունը: Համագործակցային խմբերում սովորողներից յուրաքանչյուրին հանձնարարել ընտրել մեկ «մագնիսական» բառ՝ դրա համար կարեւոր մանրամասները գտնելով: Երբ խմբերը վերջացնեն աշխատանքը, խմբերը կունենան չորսական բառ՝ դրան առնչվող ամբողջ տեղեկատվությամբ:

• Սովորողներին հանձնարարել իրենց համագործակցային խմբերում կազմել նախադասություններ, որոնք կամփոփեն նրանց մոտ եղած բառերի բովանդակությունը: Պետք է խորհուրդ տալ հնարավորության սահմաններում մեկ բառի տեղեկատվությունը ամփոփել մեկ նախադասության մեջ: Թեեւ կարող են լինել այնպիսի բառեր, որոնց համար անհրաժեշտ կլինի երկու նախադասություն կազմել: Կարելի է նաեւ բաց թողնել տեղեկատվության որոշ մանրամասներ, եթե խումբը կորոշի, որ դրանք երկրորդական նշանակություն ունեն:

• Սովորողներին օգնել այնպիսի հաջորդականությամբ դասավորել նախադասությունները, որ բնագիրն ամփոփվի: Այս դեպքում կարիք կլինի

նախադասությունները փոփոխել այնպես, որ սահուն կերպով հաջորդեն մեկը մյուսին: Սովորողները պետք է նաեւ որոշեն, թե արդյո՞ք ողջ տեղեկատվությունն է ընդգրկված եւ արդյո՞ք հնարավոր չէ էլի հնչ-որ բան դուրս բերել: Դրանից հետո սովորողները կարող են ստուգել իրենց ամփոփումները բարձրաձայն ընթերցելով միմյանց համար եւ լսելով, թե դրանք ինչպես են հնչում:

Առավելությունները

- Սովորողները ձեռք են բերում կարեւոր գաղափարները իրենց սեփական բառերով մեկնաբանելու գործնական փորձ:
- Սովորողներն իրենց բառապաշարը համալրում են անհրաժեշտ բառերով եւ լրացնում հասկացությունների մասին իրենց պատկերացումները:
- Սովորողները սովորում են պարզել, թե որն է բնագրի գլխավոր իմաստը եւ արժեքավոր տեղեկատվությունը կապում են այդ իմաստի հետ:
- Սովորողները կոնկերտ փորձի հիման վրա սովորում են իրենց կարդացածի մասին իմաստալից համադրություն կառուցել:

Հասկացական քարտեզագրում

Հասկացական քարտեզագրումը սովորողներին օգնում է նոր նյութն արդյունավետ ներկայացնել: Մեթոդի կիրառման համար՝ որպես յուրացմանը նախորդող համառոտ ծանոթություն, ներկայացնում ենք հետեւյալ քայլերը.

• Վերլուծել տեքստի այն հատվածը, որ սովորողները պատրաստվում են կարդալ՝ կարեւոր մտքերն ու գաղափարները յուրացնելու համար: Այնուհետեւ գտնել այն առանցքային փաստերն ու բառերը, որոնք անհրաժեշտ են այդ հասկացություններն ընթանալու համար: Անտեսել ցանկացած դժվար եզրույթ, որը կարեւոր չէ գլխավոր մտքերի յուրացման համար: Այս ձեւով կարդալու ընթացքում սովորողների ուշադրությունը չի շեղվի երկրորդական նշանակություն ունեցող եզրույթների պատճառով:

• Առանցքային գաղափարների բառերը պետք է դասավորել հասկացական քարտեզի մեջ, որը ցույց է տալիս եզրաբառերի միջեւ գոյություն ունեցող հարաբերություններն ու բառերը: Օգտագործել տեսողական տարրեր, սլաքներ, շրջանակներ, այլ պատկերներ, որպեսզի քարտեզը դառնա ավելի ցայտուն եւ մտապահվող: Ի հավելումն ընթերցանության մեջ ներկայացված բնորոշ բառապաշարի՝ քարտեզի մեջ միավորել դրանց առնչվող այն եզրաբառերը, որոնք սովորողներն արդեն գիտեն: Այս ժանոթ «ուղենիշները» սովորողներին օգնում են ճանաչել, թե ինչպես է նոր հաղորդվող նյութը հարմարվում իրենց արդեն ժանոթ նյութին եւ նախնական գիտելիքներին:

• Քարտեզը ներկայացնել սովորողներին՝ նախապատրաստելով նոր նյութի յուրացումը: Ցուցապատառի վրա հասկացական քարտեզը ցույց տալ ամբողջ լսարանին: Նրանց մոտել, որ մտածեն նոր սովորած բառերի համատների, ինչպես նաև հասկացությունների միջեւ հարաբերությունների բնույթի մասին: Բաց հարցերի օգնությամբ քննարկումներ նախաձեռնել, ինչպես օրինակ՝ ի՞նչ կարող եք ասել այս ուրվագծին նայելով:

1. Սովորողները կարող են առանցքային բառերը ներկայացնելու համար օրինակներ պետական պատճեններ եւ տեղեկատվության յուրաքանչյուր ճյուղավորում կենտրոնական գաղափարից տարբերելու նպատակով կողավորել՝ գունավոր մատիտներով ներկելու միջոցով:

2. Սովորողները թե անհատապես, թե փոքր խմբերով կարող են ակզմել իրենց քարտեզները՝ օգտագործելով մի շարք կարեւոր գաղափարներ ու եզրույթներ: Սա հատկապես արդյունավետ է եւ օգնում է տեսնել հարաբարությունները հենց նոր կարդացած նյութի ներսում:

3. Սովորողները կարող են տեքստի տրված հատվածից ընտրել կարեւոր հասկացությունների եւ եզրույթների սեփական շարքը եւ կազմել հասկացական քարտեզ, որը կներկայացնի հարաբերությունների իրենց պատկերացումը: Ի հավելումն դրա՝ նրանք կարող են նաեւ իրենց նախնական գիտելիքներից տեղեկություններ ավելացնել այդ քարտեզի մեջ: Սովորողներին կարելի է հանձնարարել քարտեզագրել գրքից մի գլուխ եւ, դասընկերներին ներկայացնելով դրանց ուրվագիծը, բացատրել ընթերցանության նոր նյութը:

Առավելությունները

- Մինչեւ տեքստի դժվար հատվածի ընթերցանությունը սկսելը սովորողներն արդեն տեսնում եւ քննարկում են նոր քառերը:
- Սովորողները աչքի առաջ ունենում են տեքստի գլխավոր հասկացությունների եւ կարեւոր տվյալների միջեւ առկա հարաբերությունների տեսողական ուրվագիծը, որն օգնում է կարդալու ընթացքում:
- Այս քարտեզներն սովորողներին նղում են խորհել այն մասին, թե ինչպես են իրենց նախնական գիտելիքները հարմարվում նոր ուսումնասիրվող նյութին:

Հարցեր հեղինակին

Այս մեթոդը ընկալման ավելի բարձր մակարդակ է ապահովում: Այն սովորողներին հնարավորություն է ընձեռում՝ պարզել – մեկնաբանել ոչ միայն բնագրի տրված հատվածը, այլ նաև այն, ինչ ուզում է ասել հեղինակը: Մեթոդը նորառում է հետեւյալ քայլերը.

• Սովորողներին ներկայացնել բնագրի հեղինակին: Քանձնարարել «անձնավորել» հեղինակին, իմանալ նրա անունը, որոշ կենսագրական տեղեկություններ, որոնք հնարավորություն կտան ավելի հանգամանորեն ճանաչել նրանց:

• Քամառու ներկայացնել բնագրի այն հատվածը, որը պետք է հանձնարարվի կադրալու համար: Որոշել, թե տրված նյութի մեջ որն է այն ամենակարեւորը, որ սովորողներին անհրաժեշտ է հասկանալ: Բացի այդ պարզել բոլոր այն հատվածները, որոնք կարող են դժվար լինել աշակերտների համար: Ընտրել այն հատվածները, որոնց վրա պետք է կանգ առնել եւ քննարկումներ սկսել՝ սովորողների հետ կարեւոր կետերը պարզաբանելու նպատակով:

• Կարճատել դադարի ընթացքում քննարկումը կենտրոնացնել հեղինակային այն հարցերի վրա, որոնք տրվում են ոչ թե ինչ-որ հատուկ տվյալներ ծշտելու, այլ հեղինակի մտադրությունները պարզելու նպատակով: Ասենք՝ ի՞նչ է փորձում հաղորդել մեզ հեղինակը, ո՞րն է նրա գլխավոր միտքը, արդյո՞ք հեղինակը հասկանալի է բացատրում այն եւ այլն:

• Երբ սովորողներն արդեն պատասխանել են հեղինակին ուղղված հարցերին, հանձնարարել նրանց շարադրել սեփական հարցերը նույն հեղինակի որեւէ այլ ստեղծագործության վերաբերյալ:

Առավելությունները

• Սովորողներին սովորեցնում է մետածանաչողական մտածողություն զարգացնել, այսինքն դառնալ այնպիսի ընթերցողներ, որոնք կարդալու ընթացքում ղեկավարում են սեփական ընկալումը:

• Սովորողները հիմնահարցերը եւ խնդիրները յուրացնում են դրանց մասին կարդալու ընթացքում եւ ոչ թե կարդալուց հետո:

- Սովորողները յուրացնում են ինքնահարցման մեթոդը, որը հիմնականում կիրառում են փորձառու ընթերցողները՝ սեփական ընկալումը ղեկավարելու եւ խթանելու նպատակով:

Տարբեր մոտեցումներ՝ ընթերցանությանը

Այս մեթոդն ընդգրկում է հետեւյալ քայլերը.

- Սովորողներին հանձնարարել սկզբում մի անգամ կարդալ պատմությունը, հոդվածը կամ բնագրի ընտրված հատվածը:

• Գտնել տեքստի կամ ընտրված հատվածի էական գաղափարներին առնչվող բազմազան տեսակետները՝ դրանք սովորողների հետ քննարկելու համար:

• Լսարանը բաժանել երեք կամ չորս հոգուց բաղկացած հանագործակցային խմբերի եւ նրանցից յուրաքանչյուրին տարբեր տեսակետներ հանձնարարել: Սովորողներին հրահանգել պարզել տվյալ տեսակետի հետ կապված հիմնահարցերը, զգացմունքներն ու մտահոգությունները:

• Սովորողներին հանձնարարել նորից կարդալ նյութը՝ բնորոշ մտքեր կամ տեղեկություններ գտնելու համար, որոնք կարող են հատուկ հետաքրքրություն ներկայացնել իրենց տեսակետի համար: Առաջարկել այդ տեղեկությունները գրի առնել առյուսակների մեջ՝ իրենց հանձնարարված տեսակետի մասին սեփական մեկնաբանությունների հետ մեկտեղ:

• Սովորողների հետ քննարկել այն նոր ավելի հանգամանալից մտքերն ու կարծիքները, որոնք երեւան կգան նշված տեքստը տարբեր տեսանկյուններից դիտարկելու ընթացքում: Նրանց կարծիքներն ի մի բերելու համար հանձնարարել գրել մի եղրափակիչ կարծիք, որն արտահայտում է նրանց վերաբերմունքը քննարկվող հարցի կապակցությամբ:

Առավելությունները

• Այս մեթոդը հաստատում է այն կարծիքը, որ տրված բնագրից կարելի է ապացուցված եզրակացությունների և ընդհանրացումների մի ամբողջ շարք քաղել:

• Այս մեթոդը կիրառելիս սովորողներն ավելի զգացմունքային մոտեցում են ցուցաբերում կարդացածին և սկսում ավելի շատ հաշվի նստել մյուսների կարծիքների հետ:

• Սովորողներին հնարավորություն է տրվում վերընթերցել նյութերը և ընտրել այն մտքերն ու տեղեկությունները, որոնք առաջին ընթերցման ժամանակ վրիպել են նրանց ուշադրությունից:

• Սովորողներին հնարավորություն է տրվում գործնականում կիրառել տեքստն աչքի անցկացնելու միջոցով տեղեկություններ քաղելու այլընտրանքային ձեւերը:

Համագործակցային ընթերցանություն եւ շարադրություն

Սա համակողմանի ծրագիր է՝ կարդալու եւ գրելու հմտությունները զարգացնելու համար: Սովորողները բաժանվում են թիմերի: յուրաքանչյուր թիմի ներսում պետք է լինի ընթերցանության տարբեր մակարդակներ ունեցող սովորողների գույգեր: Նրանք զույգերով կատարում են ճանաչողական տեսակետից գրավիչ մի շարք աշխատանքներ, այդ թվում միմյանց համար ընթերցելը պատմության պարտի մասին կռահումներ անելը, պատմվածքները մեկը մյուսի համար ամփոփելը, համառոտ վերապատմելը, պատմվախցին արձագանք գրելը, ուղղագրական, բացատրական եւ բառարանային վարժություններ կատարելը եւ այլն: Սովորողներն իրենց թիմերով աշխատում են

տիրապետել նաեւ գրավոր բնագրի հիմնական գաղափարի յուրացման եւ ըմբռնման այլ հմտությունների:

Համագործակցային լսարաններ

Համագործակցային հիմունքներով կառավարվող լսարանների մեծ մասում սովորողների վարքը լավ է, քանի որ նրանք շահագրգռված են սովորելու եւ ակտիվորեն են մասնակցում ուսումնառությանը: Սակայն հնարավոր է, որ բազմաթիվ ուսուցիչներ ցանկանան լրացնեցին քայլեր ձեռնարկել երեխանների ներուժը արդյունավետ գործունեության նպատակառությունների կողմից դասաժամի արդյունավետ օգտագործումն ապահովելու համար:

Լսարանավարության ամենաարդյունավետ մոտեցումը համագործակցային ուսումնառության նպատակով խմբերի համար դրական պարգևների համակարգի ստեղծումն է: Ուսուցիչը լսարանում ուշադրություն է դարձնում որեւէ խմբի՝ իր համար ցանկալի վարքի: Մյուս խմբերն իսկույն ընդորինակում են այն վարքը, որը ստանում է ուսուցչի դրական ուշադրությունը:

Եթե ուսուցիչն ավելի հաճախ ուշադրություն դարձնի չափազանց աղմկոտ թիմին, որը շեղվել է առաջադրանքի կատարումից, մյուսներն էլ կնդորինակեն այդ թիմին, որին հաջողվել է գրավել ուսուցիչ՝ թեկուզեւ բցասական ուշադրությունը եւ ընդհակառակը, եթե ուսուցիչն անտեսի հանձնարարությունը չկատարող թիմերին եւ հատուկ գնահատանքի արժանացնի նրանց, ովքեր աշխատում են, շուտով թիմերի մեծ մասը, եթե ոչ բոլորը, կզբաղվեն աշխատանքով: Սա ճշնարիտ է հատկապես այն դեպքերում, եթե հատուկ գնահատանքը կոնկրետ է, հրապարակային եւ արձանագրված: Ուսուցիչը պետք է ամբողջ լսարանի առաջ հստալ բացատրի, թե ինչու է հատկապես այդ թիմը հատուկ գնահատանք ստանում, եւ դա ամպայման որեւէ կերպ արձանագրի:

Արդյունավետ համագործակցային ուսումնառության համակարգի էական բաղադրիչներից մեկն են հստակ ակնկալիքներն են: Ուսուցիչը պետք է նախապես եւ հստակ սահընանի, թե ինչպիսի վարք է անհրաժեշտ դասարանում որդյունավետ աշխատանքի համար, եւ ինչպիսի վարքն է գնահատվում: Անհրաժեշտ վարքը ներառում է ուշադրությունն արագ եւ լուր կենտրոնացնելու կարողությունը երբ էլ որ ուսուցիչը խնդրի: Գնահատելի վարքը ենթադրում է նաեւ ընկերներին լրացնեցին օգնելը, համագործակցելը, ինչպես նաեւ ուշադրությունը ուրիշների կարիքների, կարծիքների եւ ցանկությունների նկատմամբ:

Լսարանավարության եղանակներ

Խմբերի կազմվելուց հետո ուսուցիչը պետք է բացատրի, որ համագործակցային խմբերով աշխատող դասարանները հաճախ բնականորեն չափազանց աղմկոտ են դաշնում: Ուսուցիչը պետք է ի վիճակի լինի աղմուկի մակարդակն արագ իջեցնել զրոյի: Նա ակնարկում է, որ դասարանը կարող է այս խնդիրը լուծել, եթե սովորի արագ արձագանքել զրոյական աղմուկի ազդանշանին: Այս ազդանշանը նշանակում է, որ սովորողները պետք է դադարեն խոսել, ուշադիր լսեն ուսուցիչն: Ուսուցիչներն իրենց սովորողների համար ընտրում են տարբեր ազդանշաններ: Ոմանք կարող են ուշադրություն խնդրել պարզապես ասելով՝ «Խնդրում եմ ուշադրություն», մյուսները կարող են լույսը վառել – հանգնել կամ զանգ հնչեցնել: Արդյունավետ է լինում նաեւ նի ձեռքը վեր բարձրացնելը: Սակայն ուսուցիչը երբեք չպետք է փորձի իր ձայնի բարձրությամբ գերազանցել դասարանի աղմուկը կամել որոշ տարածություն անցնելով մոտենալ զանգին կամ լույսի անջատիչին: Ահա զրոյական աղմուկի ազդանշանի նի քանի օրինակներ

• Վայրկյանաշափ օգտագործեք՝ հաշվելու, թե որքան տեւեց զրոյական աղմուկի հասնելը: Վայրկյանները գումարվում են ամեն շաբաթ եւ հանվում թիմի կամ լսրանայ

զվարճության ժամանակից, կամ, ընդհակառակը, գրոյական աղմուկին շուտ հասնողներն ստանում են պարգևատրման միավորներ եւ գնահատանք:

• Կարելի է ունենալ տարբեր ազդանշաններ. մեկը պարզապես աղմուկի մակարդակն իջեցնելու, օրինակ՝ ձեռքը բարձրացնել վեր, ափը՝ հորիզոնական դիրքով, մյուսը՝ աղմուկի մակարդակն իջեցնելու եւ որեւէ հայտարարություն անելու համար սովորողների ուշադրությունը գրավելու նպատակով, ձեռքը բարձրացնել վեր, ափը՝ ուղղահայաց դիրքով:

Այս հնարքի արդյունավետությունը կախված է խմբային դրական գնահատանքի արդյունավետությունից: Խրախուսանքը պետք է լինի հստակ եւ հրապարակային եւ պետք է հնարավորինս շուտ հետեւի ցանկալի

Բնագրային հատվածներ Հայոց պատմություն Հայկի ապստամբության մասին

Այս Հայկը, ասում է վայելչակագմ էր, թիկնավետ, խիստ գանգուր մագերով, վարվուն աչքերով, հաստ բազուկներով: Սա քաջ և երևելի հանդիսացավ հսկաների մեջ, դիմադրող այն բոլորին, որոնք ձեռք էին բարձրացնում բոլոր հսկաների և դյուցազուների վրա տիրապետելու: Սա խրոխտանալով ձեռք բարձրացրեց Բելի բռնավորության դեմ այ ժամանակ, երբ մարդկային ազգը սփռվում, տարածվում է բոլոր երկրի լայնության վրա, բազմամբու հսկաների, անչափ կատաղիների և ուժավորների մեջ: Որովհետև այս ժամանակ ամեն մի մարդ, խելագարված, սուրն ընկերի կողն էր կոխում, ձգտում էին մեկը մյուսի վրա տիրելու, և Բելին պատահմամբ հաջողվեց բռնանալ և բոլոր երկիրը գրավել: Որին Հայկը չկամենալով հնազանդել, Բարելոնում Արամանյակ որդին ծնելուց հետո, չվեց գնաց Արարադի երկիրը, գտնվում է հյուսիսային կողմերում, իր որդիներով, դուստրներով և որդիների որդիներով, որ գորավոր մարդիկ էին, թվով մոտ երեք հարյուր հոգի, և ուրիշ ընդուներով, նրան հարած եկվորներով և բոլոր տուն ու տեղով: Գնում բնակվում է մի լեռան ստորոտում, դաշտավայր տեղում, որտեղ ապրում էին սակավաթիվ մարդիկ առաջուց ցրվածներից: Հայկը նրանց իրեն հնազանդեցնելով՝ այնտեղ կալվածում շինում է բնակության տուն և տալիս է ժառանգություն Կաղմոսին, Արամանյակի որդուն: Սա արդարացնում է ասված անգիր հին գրույցները:

Իսկ ինքը, ասում է (Մար Աբասը), իր մնացած մարդկանցով և տուն ու տեղով շարժվում է դեպի հյուսիսային արևմուտք և զալիս բնակվում է մի բարձրավանդակ դաշտում և այս լեռնադաշտի անունը կոչում է Հարք, այսինքն թե այստեղ բնակողները հայրեր են Թորգոնի տան սերունդի: Շինում է և մի գյուղ, որն իր անունով կոչում է Հայկաշեն: Այստեղ էլ պատմության մեջ հիշվում է, թե այս դաշտի հարավային կողմում մի երկայնանիստ լեռան մոտ, ապրելիս են եղել առաջուց սակավաթիվ մարդիկ, որոնք կամովին հնազանդել են դյուցազնին: Այս էլ արդարացնում է ասված անգիր գրույցները:

Արայի և նրա մահվան մասին Շամիրամից՝ պատերազմի մեջ

Արան Նինոսի վախճանվելուց քիչ տարիներ առաջ խնամակալ դարձավ իր հայրենիքին, Նինոսից նոյնպիսի շնորհի արժանանալով՝ ինչպես և իր հայրը Արամը: Բայց այն վավաշոտ և անառակ Շամիրամը շատ տարիներից ի վեր նրա գեղեցկության մասին լսած լինելով, ցանկանում էր նրան տեսնել, բայց հայտնի կերպով չէր համարձակվում որևէ բան անել: Իսկ Նինոսի վախճանվելուց կամ Կրետե վախչելուց հետո, ինչպես համոզված եմ, Շամիրամ իր ախտը համարձակ պատվելով՝ Արա գեղեցիկի մոտ պատգամավորներ է ուղարկում ընծաներով ու նվերներով, և շատ աղաչանքներով ու պարգևների խոստումով խնդրում է գալ Նինոս իր մոտ, և կա'ն իրեն

կին առնել և բոլորի վրա թագավորել, կամ նրա ցանկության կամքը կատարել ու մեծամեծ նվերներով խաղաղությամբ իր տեղը դառնալ:

Երբ պատգամավորները շատ անգամ երթևեկության կատարեցին և Արան չհամաձայնեց՝ ապա Շամիրամը սաստիկ չարանալով, պատգամավորությունը դադարելուց հետո, առնում է իր զորքի բազմությունը և շտապում է գնալ հասնել Յայոց երկիրը՝ Արայի վրա. բայց որքան դեմքից կարելի էր գուշակել, շտապում էր ոչ այնքան նրան սպանել կամ հալածել, որքան նվաճել կամ իր ձեռք գցել, որպեսզի իր ցանկության կամքը կատարե. որովհետև մոլեգին ցանկությունից՝ նա տռապանքով սիրահարվել էր (Արայի մասին եղած պատմություններին որպես թե նրան տեսնելիս լիներ): Փութով գալիս հասնում է Արայի դաշտը, որ նրա անունով կոչվեց Այրարատ: ճակատը պատրաստելիս նա իր զորապետներին պատվեր է տալիս, եթե դեպքը բերի, ջանալ կենդանի պահել Արային: Կովի ժամանակ Արայի զորքը ջարդվում է, Արան էլ ընկնում է պատերազմի մեջ շամիրամի կտրիճներից: Յաղթությունից հետո տիկինը դիակապուտներ է ուղարկում ճակատամարտի տեղը դիակների մեջ փնտրելու իր ցանկալի տարփածուին: Արային գտնում են մեռած քաջանարտիկների մեջ: Յրանայում է նրան տանել դնել ապարանքի վերնատունը:

Երբ Յայոց զորքը պատրաստվում էր նորից պատերազմնելու Շամիրամ տիկնող հետ, Արայի մահվան վոեժն առնելու համար՝ (Շամիրամն) ասում է. «Ես իմ աստվածներին հրանայեցի նրա վերքերը լիզել և նա կենդանանա»: Միևնույն ժամանակ նա հույս ուներ կախարդական դյուքությամբ կենդանացնել, տռփական ցանկությունից ցնորված: բայց երբ դիակը սկսեց նեխել հրանայեց գցել նրան մի մեծ վիհի մեջ ու ծածկել, իսկ իր սիրեկաններից մեկին օրդարելով ու ծածուկ պահելով՝ նրա մասին այսպիսի լուր է տարածում. «Աստվածներն Արային լիզելով ու կենդանացնելով՝ մեր փափագն ու ցանկությունը կատարեցին. ուստի այսուհետև նրանք ավելի և արժանի են մեզանից պաշտվելու և փառավորվելու իբրև մեզ ուրախացնողներ և մեր կամքը կատարողներ»: Նաև մի նոր արձան է կանգնեցնում աստվածների անունով և մեծամեծ զոհերով պատվում է նրան, ցույց տալով, իբր թե աստվածների այս զորությունը կենդանացրեց Արային: Այսպիսի լուրեր տարածելով Յայոց աշխարհում և բոլորին համոզելով՝ հուզմունքը խաղաղեցնում է:

Արայի մասին այսքանը բավական է կարճառոտ հիշատակել: Նա տարիներ ապրելով ծնավ Կարդոսին:

Տիգրանի մասին, թե ինչպես էր ամեն բանով

Անցնենք այսուհետև գրելու Տիգրանի և նրա գործերի մասին: Որովհետև սա մեր թագավորներից ամենահզոր և ամենախոհեմն էր և նրանցից բոլորից քաջ: Նա Կյուրոսին աջակից եղավ Մարաց իշխանությունը տապալելու, հույներին էլ ոչ քիչ ժամանակ նվաճելով իրեն հնազանդեցրեց, և մեր բնակության սահմաններն ընդարձակելով հասցրեց մինչև իին բնակության սահմանների ծայրերը. բոլոր իր ժամանակակիցներին նախանձելի եղավ, իսկ հետ եկողներից ցանկալի թե՛ ինքը և թե՛ իր ժամանակը:

Եվ ո՞վ իսկական մարդը, որ համակրում է արիական բարքի և խոհականության, չի զվարճանա սրա հիշատակությամբ և չի ծգտի նրա նման մարդ լինել: Նա տղամարդկանցվ գլուխ կանգնեց և ցույց տալով քաջություն՝ մեր ազգը բարձրացրեց, և մեզ, որ (օտարների) լծի տակ էինք, դարձրեց շատերին լուծ դնողներ և հարկապահանջներ. մթերքներ, ոսկու և արծաթի, և պատվական քարերի, և զգեստների, և զանազան գույների, և գործվածքների՝ տղամարդկանց և կանանց համար՝ առհասարակ բազմացրեց, որոնցով տգեղները գեղեցիկների նման սքանչելի էին երևում, իսկ գեղեցիկներն այս ժամանակի համեմատ դյուրագունների էին նմանում: Յետևակ կրվողները ծիավոր դարձան պարսերով կրվողներն հաջող աղեղնավորներ, կրպալներով կրվողները զինվորներ սրերով ու տեղավոր նիզակներով. մերկերը պատսպարվեցին վահաններով և երկար զգեստներով: Եւ երբ նրանք մի տեղ հավաքվեցին, միայն նրանց արտաքին տեսքն ու նրանց պահպանակների ու գենքերի փայլմունքը բավական էին

թշնամիներին հալածելու ու վաճելու: Նա խաղաղություն և շենություն բերեց, բոլորին լիացրեց յուղով ու մեղրով:

Այս և այսպիսի ուրիշ շատ բաներ բերեց մեր աշխարհին այս խարտյաշ և մազերի ծայրը գանգուր Երվանդյան Տիգրանը, գունեղ երեսով, քաղցր նայվածքով, ուժեղ սրունքներով, գեղեցիկ ոտներով, վայելչակազմ և թիկնավետ, կերակուրների և ընապելիքների մեջ պարկեշտ, ուրախությունների մեջ օրինավոր. որի մասին մեր հները, որոնք փանդի՛ներով երգում էին, ասում էին, թե մարմնի ցանկությունների մեջ էլ չափավոր է եղել, մեծիմաստ և պերճախոս և լի բոլոր (հատկություններով), որ պիտանի են նարդուն և այս գրքում հ՞նչ կա ինձ ավելի սիրելի, քան սրա մասին եղած գովեստներն ու պատմություններկարել: Նա ամեն բանի մեջ արդարադատ և հավասարասեր կշեռք ունենալով՝ ամեն մեկի կյանքը կշռում էր իր մտքի լծակով, չեր նախանձում լավագույններին, չեր արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր ընդհանրապես ամենքի վրա տարածելի իր խնամքի զգեստը:

Սա սկզբում դաշնակից լինելով Աժդահակին, որ Մարացի էր, նրան կին է տալիս իր Տիգրանուիի քույրը, որին թախանձանքով խնդրում էր Աժդահակը, որովհետև (Աժդահակը) մտածում էր՝ այսպիսի ազգականության շնորհիվ կամ հաստատուն սեր պահպանել Տիգրանի հետ, կամ այս կերպով հեշտությամբ դավաճանորեն սպանել: Որովհետև նրա միտքը կասկածի մեջ էր, երբ մի անսպասելի մարգարեություն նրան ցույց տվեց առաջիկայում նրան պատահելիքը:

Աժդահակի թուղթը, Տիգրանի համաձայնություն և Տիգրանուիուն Մարաստան ուղարկելը

«Քո սիրելի եղբայրությունդ գիտե, որ այս աշխարհի կյանքում աստվածները մեզ չեն պարզել ավելի օգտակար բան, քան սիրելիների բազմություն, իհարկե իմաստուն և հզորագույնների, որովհետև այս դեպքում դրսից խռովություններ չեն համարձակվում ծագել, և եթե պատահեն, իսկույն կընկճվեն, իսկ ներսում նրանք կհալածվեն, քանի որ այսպիսի չարությունը ոչ ոքից չի կարող մուտք գործել: Արդ՝ ես տեսնելով բարեկամությունից առաջ եկող այս օգուտը, կամեցա ավելի հաստատուն դարձնել ու խորացնել մեջ եղող սերը, որպեսզի երկուքս էլ բոլոր կողմերից ապահովվելով՝ ամբողջ և հաստատ պահենք մեր տերությունները: Եվ այս բանը կկատարվի, եթե ինձ կնության տաս քո քույր Տիգրանուիուն, մեծ Հայոց օրիորդին. թերևս նրա համար նաև բարի համարես, որ թագուհիների թագուհին լինի: Ողջ եղիր, մեր թագակից և սիրելի եղբայր»:

Առանց խոսքս երկարացնելու ասեմ: Պատգամավորը գալիս է, գեղեցիկ օրիորդի վերաբերյալ գործը կատարում է, որովհետև Տիգրանը համաձայնում է իր քույր Տիգրանուիուն Աժդահակին կնության տալ դեռ չգիտենալով նրա կողմից սարգած դավաճանությունը՝ քրոջն ուղարկում է թագավորավայել կարգով: Աժդահակը նրան կին առնելով՝ ոչ միայն իր սրտում թաքցրած նենգության, այլ (Տիգրանուիու) գեղեցկության պատճառով իր կանանց մեջ առաջին է դարձնում, իսկ ներքուստ նյութում է չարություն:

Թե ինչպես նենգությունը հայտնի դարձավ և պատերազմ սկսվեց, և Աժդահակի մահն այդ կռվում

Սրանից հետո ասում է, թե երբ Աժդահակը Տիգրանուիուն տիկնության մեջ հաստատեց, իր թագավորության մեջ ոչինչ չեր գործում առանց նրա հավանության, այլ ամեն բան կարգադրում էր նրա ասծի պես և հրամայում էր, որ բոլորը նրա հրամանին հնազանդին: Այս այսպես կարգադրելով՝ սկսում է այնուհետև մեղմով խաբեությամբ նրան

գրավել: «Դու չգիտես, ասում է նա, որ քո Եղբայրդ Տիգրանը նախանձել է, որ դու Արեաց տիկին ես դարձել, նրան գրգռում է նրա կինը՝ Զարուհին: Ի՞նչ կլինի սրա հետևանքը, եթե ոչ՝ որ նախ ես կմեռնեմ և հետո Զարուհին Արեաց վրա (տիկին) կդառնա և աստվածուհիների տեղը կրօնե: Ուրեմն քեզ մնում է ընտրել այս Երկուսից մեկը՝ կամ լինել Եղբայրասեր և հանձն առնել խայտառակ կործանում Արեաց առաջ, կամ քո բարին հասկանալով մի օգտակար բան մտածել և առաջիկա անցքերի մասին հոգալ»:

Այս խորամանկության մեջ թաքցրած էր (և սպառնալիք), թե՛ Տիգրանուհին կմեռնի՝ եթե մարապարսկացու ցանկության համաձայն չվարվի: Իսկ խորագետ գեղեցկուհին այդ դավաճանությունը հասկանալով՝ սիրալիր խոսքերով է պատասխանում Աժդահակին և մտերիմների միջոցով շտապելով Եղբօրը հայտնում է (Աժդահակի) նենգությունը:

(Աժդահակը) այնուհետև գործի է ձեռնարկում, պատգամավորների ձեռքով (առաջարկելով Տիգրանին), որ բարեկամական տեսակցության համար գա Երկու թագավորությունների սահմանագլուխ մի տեղում, իբրև թե մի կարևոր գործ ու խոսելիք կա, որ չի կարելի կատարել գրի և պատվիրակության միջոցով, բայց միայն անձամբ դեմ առ դեմ պատահելով: Սակայն Տիգրանը պատվիրակության դիտավորությունը գիտնալով՝ Աժդահակի խորհուրդներից ոչ մի բան ծածուկ չի բողոքում, այլ գրով հայտնում է, ինչ որ նրա սրտի խորքում կար: Երբ այսպիսով չարությունը հայտնի դարձավ, այլևս ոչ մի խոսքով, ոչ մի խորամանկությամբ չեր կարելի չարությունը քողարկել, և այնուհետև թշնամական դրությունը հայտնի գրգռվում է:

Եվ Հայոց թագառը (զորք) է ժողովում կապադովկիայի սահմաններից, Վրաց և Աղվանից ընտիրները է որքան որ կային, Մեծ ու Փոքր Հայքի բոլոր ընտիրները, և բոլոր զորությամբ դիմում է Մեղացոց կողմերը: Վտանգը հարկադրում է Աժդահակին Հայկազունի դեմ Ելմել պատերազմով ոչ փոքր բազմությամբ: Հակառակության գործը ձգձգվում էր մինչև հինգ ամիս, որովհետև արագ ու առողջ գործը հիվանդանում էր՝ քանի որ Տիգրանը մտածում էր իր սիրելի քորչ (Տիգրանուհու) մասին: Նա աշխատում էր այնպիսի մի հնար գտնել, որ Տիգրանուհին փրկվելու ճար գտնի: Երբ այս հաջողվում է, մոտենում է և կրվի ժամը:

Բայց գովում են իմ քաջամարտիկ նիզակավորին, որ բոլոր անդամներով համաշափ էր, մեկը մյուսին ամեն կերպ պատշաճեցրած, կատարյալ գեղեցիկ հասակով, առույգ և ուժի կողմից իրեն հավասարը չունեցող: Եվ ի՞նչու եմ խոսքս Երկարացնում. կրվի ժամանակ Աժդահակի Երկարե ամուր զրահը ինչպես ջուր ճեղքելով՝ Աժդահակին շամփորում է իր նիզակի ընդարձակ տեգին, և ձեռքը հետ քաշելիս՝ նրա բոքի կեսն էլ զենքի հետ դուրս է բերում: Բայց կրիվն սքանչելի էր, որովհետև քաշեր քաշերի հանդիպելով՝ ոչ մեկը մյուսին շուտով թիկունք չեր դարձնում, ուստի պատերազմը Երկարում էր բավական ժամեր, մինչև գործին վերջ էր դնում Աժդահակի մասին: Այս բարեբախտ ոհպվածը փառք էր ավելացնում Տիգրանին:

Երվանդակերտ կոչված ձեռակերտի մասին

Ինձ քաղցր է պատմել նաև գեղեցիկ Երվանդակերտ դաստակերտի մասին, որ նոյն Երվանդը շինեց գեղեցիկ և չքնաղ հորինվածքով: Որովհետև մեծ հովիտի միջին մասը լցնում է բնակչությամբ և պայխառ շինություններով, լուսավոր, ինչպես աչքի բիբը, իսկ բնակչության շուրջը կազմում է ծաղկոցներ և բուրաստաններ, ինչպես բբի շուրջը աչքի մյուս բոլորակը: Իսկ այգիների բազմությունը նմանում էր խիտ արտեվանունքի գեղեցիկ գծին, որի հյուսիսային կողմի կամարաձև դիրքը իսկապես համեմատվում էր գեղեցիկ կուլյսերի հինքերին: Իսկ հարավային կողմից հարթ դաշտերը (հիշեցնում էին) ծնոտների գեղեցիկ ողորկությունը: Իսկ գետն իր Երկու ափերի բարձրություններով պատկերացնում էր մի բերան, իր Երկու շրթունքներով: Եվ այս գեղեցիկ դիրքը կարծես անթարթ հայացքն ողղել է թագավորանիստ բարձրավանդակի վրա: Արդարէ բերորդ թագավորական դաստակերտ:

Երվանդի այս բոլոր շինածները Տրդատ Մեծը պարզեւում է Կամսարականների ցեղի մարդկանց, իբրև իր մտերիմներին և Արշակունյաց ցեղի արյունակիցներին, ինչպես իր տեղում կպատմենք:

Բայց ասում են Երվանդի մասին, թե հմայքով չար աչք ուներ,որի պատճառով արքունի սպասավորները սովորություն են ունեցելառավոտն արշալույսը բացվելիս որձաք քարեր բռնել Երվանդի առաջ, որի հայացքի չարությունից այդ որձաքարը,ասում են,ապայթելիս են եղել: Սակայն այս բանը կամ սուտ է և առասպել, կամ թե ինչ-որ դիվական զորություն է ունեցել, որպեսզի այսպես, չար աչքի անունով, վնասե, ում որ կամեն

... Ժամանակներն արագ անցան: Արդեն անուն հանած Դավիթ Արմենիոս փիլիսոփան դպրոցն ավարտելու համար պետք է պատրաստվեր շրջագայության: Օլիմպիադոս Կրտսերն արդեն ընտրել էր մի քանի առաջնակարգ սաների, ովքեր պիտի հանդես գային մեծ լսարանների առջև, հաստատեին փիլիսոփայության, ճարտասանության, տրամաբանության գեղեցկությունները՝ որպես գիտությունների, հաստատեին Ալեքսանդրիայի դպրոցի բարձր հեղինակությունը:

Դավիթը դրան էր սպասում, սպասում էր ուսման համառ օրերով ու տարիներով, սպասում էր՝ ցուցադրելու իր կարողությունները, որպեսզի հայրենիք վերադառնա ոչ թե թաքուն, գողեգող, այլ հաղթանակած, անուն հանած, որպեսզի իր սովորածը վստահ փոխանցի հայ պատանիներին, օգուտ տանի գիտությանը հայրենական:

- Ես գիտեմ, որ դու հաղթական ես լինելու բոլորի մեջ,- խոսեց Օլիմպիադորաս Կրտսեր՝ կանգնելով Դավիթի գլխավերևում, երբ սա թերթում էր Արիստոտելի մեկնությունը:

-Արիստոտել, այլո՞:

- Այո՛, պատվելի՛ ուսուցչապետ,- Օլիմպիադորաս Կրտսերի անակնկալ հայտնվելուց ոտքի ելավ սանը, որի անունն արդեն վաղուց էր դուրս եկել դպրոցի պատերից:

- Արիստոտելը քո կուռքն է, գիտեմ,- նորից խոսեց ուսուցչապետը: - Արդեն մարդկանց նախանձն ես շարժում, զգուշացի՛ր: Իսկ նախանձը միշտ չար է լինում: Բարի նախանձ չկա, իմացի՛ր: Եկող շաբաթ մենք կուղևորվենք: Վերջին հանգրվանը Կոստանդնուպոլիս քաղաքն է, ուր պիտի կանգնես մեծ հանդեսի առջը: Այնտեղից բացվում է դեպի հայրենիք տանող ճանապարհ, և դու այնտեղից ազատ ես, կարող ես մեկնել Հայաստան:

Թիֆլիս էր եկել մի ֆրանսուիի գեղեցիկ կին, անունը՝ Մարգարիտա: Երգչուիիէր ու նաև՝ պարուիի: Ամբողջ քաղաքը նրա նասին էր խոսում: Երկրպագուների մի ամբողջ շարան համերգից հետո ուղեկցում էր նրան տուն:Վրացի ինքնուս նկարիչ Փիրոսմանին սրան տեսնում է ու սիրահարվում: Խելքը կորցրածի պես է լինում: Գիշեր-ցերեկ նրա նասին է մտածում: Ամեն երեկո վարդերի մի մեծ փունջ է ուղարկում:Փող ունի,չունի, մեկ է, ուղարկում է: Սակայն երգչուիին անտարբեր էր: Մի օր էլ Փիրոսմանին տեղեկանում է, որ հաջորդ շաբաթ օրը Մարգարիտան մեկնելու է Փարիզ: Նա վաճառում է իր տունը, ամբողջ գումարով վարդեր պատվիրում: Երբ երգչուիին, իր երկրպագուներով շրջապատված, գալիս է կայարան, զարմանում ու անակնկալի է գալիս: Ամբողջ կառամատույցը ծածկված էր թարմ, բուրումնավետ վարդերով:Դրանք Փիրոսմանին էր փոել սիրելի կնոյ ոտքերի առաջ ու ձեռքերը կրծքին խաչած՝ միայնակ կանգնած էր վարդերի ծովի եզրին: Երգչուիին անչափ ազդվում է և ասում, թե ամբողջ Եվրոպան է շրջել, բայց իր երկրպագուներից ոչ մեկի մտքով այդպիսի արարմունք չի անցել: Մոտենում է նկարչին և ջերմորեն համբուրում նրան: Փիրոսմանին խենթ երջանկություն է ապրում: Սակայն երգչուիու մեկնելուց հետո նա անձանաչելիորեն փոխվում է: Միշտ մռայլ էր, անտրամադիր. խուսափում էր մարդկանց հանդիպել: Փիրոսմանու սերը փշուրփշուր էր եղել:

Այս թախծապարար պատմությունը շատ տարիներ անց դարձավ քնքուշ մի երգ՝ «Միլիոն-միլիոն ալ վարդեր» վերնագրով, որը ռուսական էստրադայի գերաստղ Ալլա Պուգաչովայի կատարմամբ հուզեց ու գերեց, հիրավի, միլիոնավոր մարդկանց սրտերը:

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՇՈՐ ՕԶԱԽԸ

Երեւանի Ս.Մաշտոցի անվան Մատենադարանը հայոց ամենախոշոր ձեռագրատունն է: Նրա բազմադարյան գանձարանի խորախորհուրդ պահեստներում «ապրում են» շուրջ 11 հազար ձեռագրեր:

Դին ձեռագրերին այցի գալու փոխարեն թեքվեք դեպի երկիարկանի կառույցը, որը առանց պատուհանների է, պատրաստված է ամուր երկաթբետոնե պատերով, ունի բազմաշերտ ջրամեկուսացում: Մեծ խորության վրա գետնուղիների անտեսանելի բավիղն է: Ործաքարերով ամուր պատերը երաշխավորում են Մատենադարանի մշակույթային արժեքների ամսաթար պահպանությունը գալիք դարերում:

Ստորերկրյա գրապահոցի ընդհանուր մակերեսը պետք քան 1500 քառ. մ է: Այստեղ ստեղծված են բոլոր պայմանները, որպեսզի առանց ձեռագրերը դուրս տանելու կատարվեն ամեն տեսակ ուսումնասիրություններ:

Մատենադարանի նոր գրապահոցը նախագծողների, մի շաբթ բնագավառների մասնագետների եւ շինարարների ստեղծագործական համատեղ աշխատանքի արդյունք է:

Իր գոյության գրեթե յոթ տասնամյակի ընթացքում Մաշտոցի անվան Մատենադարանը, հավաքչական եւ գիտահետազոտական մեծ աշխանտանքի շնորհիվ, մեր երկրում եւ արտասահմանում ձեռք է բերել արեւլագիտության ու հայագիտության խոշոր օջախի համբավ:

Ձեռագիր հուշարձաններ գտնելու նպատակով բնակչության շրջանում տարված աշխատանքը, դրանց ձեռքբերումը, նորոգումն ու վերանորոգումը, ուսումնասիրումն ու նասսայականացումը, Սեսրոպ Մաշտոցի մետաղի հիմնադրումը եւ ուրիշ շատ միջոցառումներ նպաստեցին, որ հայկական հնագույն ձեռագրերի փրկության գործին մասնակցի նաեւ արտասահմանյան հասարակայնությունը: Այդ գործում մեզ ակտիվ աջակցություն են ցույց տալիս սփյուռքահայ հայրենասիրական կազմակերպությունները, շարքային աշխատավոր մարդիկ: Հայաստան են հասել հարյուրավոր հին ձեռագրեր, արխիվային փաստաթղթեր, կտավներ ու քանդակներ, հին հրատարակություններ, պատմական ու գեղարվեստական այլեւայլ արժեքներ, որոնք հրաշքով փրկվել են եւ այժմ գտնվում են Մատենադարանում:

Մեծ երաժիշտը

Ավելի քան հարյուր երեսուն տարի առաջ Փարիզի ամենամեծ սրահներից մեկում երաժշտական միջազգային մրցություն էր: Մասնակցում էին աշխարհի շատ երկրների նշանավոր երաժիշտներ:

Բեմ էին բարձրանում, մինյանց հաջորդելով, տարբեր երկրների երաժիշտներ՝ իրենց ազգային գործիքներով նվագելու կամ երգելու երաժշտական երկու ստեղծագործություն միայն, ինչպես որ պայման էր դրել ժյուրին:

Ելույթ ունենալու հերթը հասավ հայ երաժշտին: Դանդաղ բեմ բարձրացավ մի մարդ՝ մինչև ոտքերը հասնող սև զգեստով, գդակը գլխին, առանց ձեռքին որևէ գործիք ունենալու:

Հանդիսատեսները տարակուսում էին, թե ի՞նչ կավոր երաժիշտների հետ ինչպես է մրցելու սովորական մի մարդ՝ առանց երաժշտական որևէ գործիքի:

Հայ երաժիշտը ծոցագրպանից հանեց մի փոքրիկ սրինգ և սկսեց նվագել:

Քաղցրաձայն եղանակը անմիջապես գերեց լսողներին, կախարդեց ու կարծես նրանց տարավ այն երկիրը, ուր ծնունդ էր առել այդ սքանչելի մեղեդին: Հայաստանը

Երբեք չտեսած մարդիկ մտքով տեղափոխվեցին Յայկական լեռնաշխարհը: Նվազի թուփիչ հնչյունների մեջ զգացին դեպի երկինք ձգվող մեր լեռների ու անառիկ ժայռերի վեհությունը, լեռնային զրագուն աղբյուրների ու քչքան գետակների կարկաչը, կանաչ դաշտերի ու ծաղկածիծաղ հովիտների շշունջը...

Դահլիճը կախարդվածի պես լսում էր հայ երաժշտին, իսկ նա նվազում էր ու նվազում...

Նվազն ավարտվեց, բայց դահլիճը լուր ու քարացած դեռ սպասում էր: Յայ երաժշտը ոտքի կանգնեց և սկսեց երգել «Մոկաց Միրզան»: Այդ խրոխտ երգը մերք ճայրում էր, ինչպես ամպրոպը լեռներում, մերթ մեղմ կարկաչում լեռնային գետակի նման, մերթ դայլայլուն վարդաստանի սոխակի նման:

Երգը վերջացավ:

Բուռն ու երկարատև ծափահարությունների տարափի տակ երիտասարդ հայ երաժշտը իջավ բեմից:

Նոյն

Աստված տեսավ, որ մարդիկ չարացել են, չեն կատարում իր պատվիրանները, մոռացել են միմյանց նկատմամբ բարի վերաբերմունքն ու սերը, կատարում են ամեն տեսակի հանցանք ու խաբեություն և որոշեց պատժել նրանց:

Եվ քանի որ միայն բարի, աշխատասեր ու առաքինի Նոյն էր ապրում Աստծո կողմից սահմանված օրենքներով, Աստված նրան ասաց.

- Դու քեզ համար մի մեծ տապան շինիր: Դրսից և ներսից ձյութով՝ պատիր, ես ջրհեղեղ եմ անելու: Տապան կմտնեք դու և քո կինը, որդիները, նրանց կանայք և, ապա անասունների, թռչունների մեկական զույգեր՝ երկրագնդի վրա սերունդ պահպանելու համար:

Նոյը վարվեց այնպես, ինչպես Աստված իրեն թելադրեց:

Նա կառուցեց տապանը, որը մի մեծ նավ էր, Աստծո հրամանի համաձայն վերցեց իր ընտանիքի անդամներին և բոլոր կենդանիներից մեկական զույգ: Յոթ օրից հետո ջրհեղեղ սկսվեց և քառասուն օր ու գիշեր չդադարեց: Չուրը այնքան բարձրացավ, որ աշխարհը մնաց նրա տակ, անգամ բարձր սարերը ծածկվեցին, և տապանը ջրի երեսին սկսեց լողան:

Երբ ջրհեղեղը վերջացավ, ջուրն աստիճանաբար պակասեց: Նոյի տապանը կանգ առավ Արարատ լեռան վրա: 40 օրից հետո Նոյը բացեց տապանի պատուհանը և մի ագռավ բաց թողեց՝ ինանալու համար, թե գետինը ջրից ազատվե՞լ է: Ագռավը չվերադարձավ: Յետո Նոյը ուղարկեց աղավնուն: Երեկոյան աղավնին վերադարձավ՝ կտուցին ձիթենու մի տերև:

Այսպես Նոյն իմացավ, որ ջուրը նվազել է և գետինը բացվել է:

Յոթ օր հետո Նոյը նորից բաց թողեց աղավնուն: Աղավնին չվերադարձավ: Այդ ժամանակ Նոյը հասկացավ, որ գետինը չորացել է:

Աստված Նոյին ասաց.

- Տապանից դուրս բեր ընտանիքու, նաև կենդանիներին, ու թող ցրվեն նրանք աշխարհով մեկ ու բազմանան:

Նոյը ամբողջ ընտանիքով դուրս եկավ տապանից: Նրանց հետևից դուրս եկան բոլոր կենդանիներն ու թռչունները ու ցրվեցին ամբողջ աշխարհով մեկ:

Նոյը իրենց փրկության համար զոհ մատուցեց Աստծուն, իսկ Աստված ուխտ դրեց, որ այդուհետև չի վնասի Նոյի սերունդներին ջրհեղեղով և որպես այդ ուխտի նշան՝ երկնքում կապեց յոթներանգ ծիածանը:

ՏՈՆԱԾԱՌ

Մեծ ջրհեղեղից հետո առաջին ձյունը Մասիսի վրա նստել է Յայկ Նահապետի հայր Թորգոնի ժամանակ: Դա եղել է մեզնից չորսուկես հազար տարի առաջ:

Մինչ այդ ծառերն ու ծաղիկները ցրտից չեն վախենում, և Յայոց աշխարհը նման էր մշտադալար զմրուխտ բուրաստանի:

Այդ ժամանակներում հեթանոս հայերը Նոր տարին տոնում էին գարնանամուտին: Մի անգամ հենց Նոր տարվա նախօրեին արտասովոր ցրտեր իջան Մասիսի կատարից և խուժեցին դաշտերն ու հովիտները: Ծառերն սկսեցին ցրտահարվել: Թորգոնը հող ու արմատով պոկեց տան բակի փոքրիկ ծիրաննենիները և տուն տարավ: Իրենց Նահապետի օրինակին հետևեցին մյուս թորգոնազունները: Մեկն իր բակի դեղձենին էր ներս տանում, մյուսը՝ բալենին, երրորդը՝ բարդու փոքրիկ ոստը, չորրորդը՝ եղնին: Եվ Նոր տարվա շեմին բոլոր թորգոնազունների տներում էլ ծառեր կային:

Հնչեց Նոր տարվա գալն ազդարարող ծնծղան, և սկսվեցին տոնական ուրախությունները:

Մարդիկ չնոռացան տան կանաչ հյուրին: Պարում էին նրա շուրջը, զարդարանքներ ու նվերներ նետում նրա ճյուղերին:

Ծառն ասես զարդարում, շքեղաշուք էր դարձնում տարեմուտը:


Նոր տարուց հետո, եթե տաքերն ընկան, մարդիկ տներից հանեցին ծառերը և նորից տնկեցին պարտեզներում ու այգիներում:


Յաջորդ տարվա նախօրեին, չնայած ցրտեր չեղան, մարդիկ այգիներից դարձյալ ծառեր տարան տուն և նախորդ տարվա պես ուրախություններ սաղբեցին նրա շուրջը:

Այնուհետև հայկական ընտանիքներում բոլոր Նոր տարիների գալուստը նշանավորվում էր կանաչ ծառի կամ ոստի ներկայութմաբ:

Այդպես ծառը դրսից տուն մտավ ու դարձավ տոնածառ:

Կերպարի վերլուծության գծագիր






3. Ինչպես են այլոք վերաբերվում կերպարին:

5. Յեղինակի թեման և տեսակետը

Պատմվածքի քարտեզ



Օգտագործված գրականության ցանկ

1. Եդ. Աղայան «Մեսրոպ Մաշտոց»
2. Վ. Սանթրյան «Մաշտոցի որդիները»
3. Յ. Հարությունյան «Դետաքրքրաշարժ հայոց լեզու»
4. Յ. Ղանալանյան «Դայկական ավանդապատումներ»
5. Ս. Հարությունյան «Դայոց վիպաշխարհը»
6. Ա. Կուն «Դին հունական լեզենդներ ու առասպելներ»
7. Ա. Աբրահամյան «Բառ և խոսք»
8. Տ. Շամիրխանյան «Դերասանական արվեստի հոիմունքները»
9. Գ. Լևոնյան «Թատրոնը հին Դայաստանում»
10. Բ. Ազիզյան «Բառապաշարի հարստացման և բառուսուցման իմ փորձից»
11. Ա. Սուլքիասյան «Դոմանիշների բառարան»
12. Յ. Բարսեղյան «Ուղղագրական և ուղղախոսական բառարան»
13. «Դամագործակցային ուսուցում. ձեռնարկ»
14. «Դամագործակցային ուսուցում. վերապատրաստողի ուղեցույց»
15. Յ. Գալստյան «Լեզվական առօրյա հոգսներ»
16. Ե. Գևորգյան, Լ. Միրզոյան «Սխալ և ճիշտ. ուղղախոսություն»
17. Դայոց լեզու և գրականություն (Ուսուցիչների վերապատրաստմների պլան և նյութեր)
18. Քննադատական մտածողություն 1-7 պրակներ
19. Ինտեգրված թեմատիկ միավորներ
20. Կառուցղական կրթության հիմունքները և մեթոդները

5-օրյա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. «Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ» առարկայի բացատրագիր
 - ա) Ծրագրի նորացման ամիրաժեղությունը
 - բ) «Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ» դասընթացի դասավանդման ընթացքում հայոց լեզվի, գրականության, խոսքի մշակույթ առարկաների ինտեգրում
 - գ)«Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ» առարկայի դասավանդման նպատակները
 - դ) «Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ» առարկայի դասավանդման նպատակների իրականացման ուղիները
 - ե) «Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ» առարկայի ծրագիրը
2. «Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ» առարկայի դասավանդման ուղեցույց – ձեռնարկ
3. Ծրագրային թեմաների դասավանդման ուղեցույց
4. Լեզվի դերը հասարակության և անհատի կյանքում
5. Դասավանդման ավանդական մեթոդներ
6. Տեխնիջոնների օգտագործումը դասերի ընթացքում
7. Համագործակցային դասի պլանի օրինակ
8. Համագործակցային դասի հիմնական կառուցվածքը
9. Համագործակցային խմբերի ձևավորման սկզբունքները
10. Համագործակցային այլ մեթոդներ
11. Բնագրային լրացուցիչ հատվածներ
12. Օգտագործված գրականության ցանկ